



ԼՍՄԱԳԻՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊԱՇՏՆԱԿԱՆ ՀՐԱՏ. ԵՐՈՍՏԱՆԻ ՀԱՅ ՊԱՏՐԱՐԿՈՒԹՅԱՆ

ԿՈՐ. 1956
ՇՐՋԱՆ

Լ. ՍՄԻՍ

«Сіон» مجلة أرمنية شهرية، أدبية، ثقافية، للغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		հրեա
— ձեմարիս ձանապարհը		41
ԿՐՕՆԱԿԱՆ		
— Կենդանաբար հացը	ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ	45
Արձանագրութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ազգային-եկեղեցական ժողովի		48
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ		
— Շատրուաններ	Շէն - ՄԱՀ	51
— Ո՞ւր է նոյստզը սակայն . . .	ԱՇՏԻՇԱՏ	52
— Փափաք	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	53
— Քառեակներ	» » »	53
— Արարտ	ՍԱՐՄԷՆ	54
ԳՐԱԿԱՆ		
— Յակոբ Պարոնեան	Յ. ՕՇԱԿԱՆ	55
ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
— Պապ Արեակունի	ՀՐԱՆԴ. Ք. ԱՐՄԷՆ	60
ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ		
— Միջնադարեան հայ կոմպոզիտորներ	ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ	66
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ		
— Հայկական զարդարութեան	Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ	70
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ		
— (ԽԵԼ) Յովնաննէս Թլիուրանցի	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ	74
Իմ հանչած Սաղիմականները	ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ	81
ԳՐԱԽՅԱԿԱՆ		
— Միսրիկ Տաւիղ	ԵՂԻՎԱՐԴ	84
Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Գարեգին Արքեպ. Խաչատուրեան Երուսաղէմի մէջ		85
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ		
— Եկեղեցական-բեմական		86
— Պատգանական		87
— Ծայրագոյն վարդապետութեան ասիանի ջրչուրիւն		87

ՍԻՈՆ-ի Տարեկան բաժնեգինն է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20

Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem
Via Amman (Jordan)

—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1956

≡ ՓԵՏՐՈՒԱՐ-ՄԱՐՏ ≡

ԹԻԻ 2-3

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ

ՃԺՄԱՐԻՏ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Ես եմ համապարհ, համարժեքիս եւ կեանք.
ոչ ոք զայ առ Հայր երբ ոչ ինեւ»:
(Յովհ. Ժ.Ի. 6)

Աստուածաշունչ զիրքերուն սկիզբէն մինչեւ վերջը, շատ անգամ յիշուած
և խորունկ իմաստ ու նշանակութիւն ստացած բառերէն մին է ճանապարհը:

Իր սովորական իմաստին մէջ անիկա կարեւոր է մեր առօրեայ ընթաց-
քին ուղղութիւն տալու համար: Ճամբան, առհասարակ կը նմանի առտնին
գործածութեան մէջ եղող ու է առարկայի մը, իրի մը, որուն կարեւորութեան
յաճախ չենք անդրադառնար, այլ սակայն անոնք մեր կեանքին մէջ ունին ի-
րենց տեղը և կարեւորութիւնը: Մեզմէ ու է մէկուն կրնայ պատահած ըլլալ
որ անցնի քարքարուտ ու դերձուկ ճամբաներէ կամ կանոնաւոր ճամբայ մը
զոյութիւն չունեցող վայրէ մը: Յայնժամ միայն կ'ըմբռնենք ճամբուն անհրա-
ժեշտութիւնը, ինչպէս պիտի զգայինք կարեւորութիւնը առօրեայ գործածական
իրի մը կամ առարկայի մը:

Առանց կանոնաւոր ճամբայի, դատապարտուած ենք կորսուելու, նիւթա-
կան հասկացողութեամբ, ինչպէս կը պատահի ատիկա անապատի և ծովու ճամ-
բորդներուն: Ուստի՝ ճամբան միջոց մըն է նպատակի մը հասնելու, ու որքան
որ նպատակը ազնիւ է և կարևոր՝ այնքան աւելի ճամբան արժէք կը ստանայ:

Իւրաքանչիւր անհատ որ աշխարհ կուգայ անհրաժեշտաբար պիտի ըն-
թանայ ճամբէ մը հասնելու համար իր նպատակին, անդրադոյն վախճանին:
Այս իմաստով հետեւաբար կեանքը ևս ճամբայ մըն է և ունի բազում շաւիղ-
ներ: Եւ որովհետեւ ճամբաները կ'առաջնորդեն և ուղղութիւն ցոյց կուտան,
մենք իւրաքանչիւրս կ'առաջնորդուինք և կ'ընթանանք զանազան շաւիղներէ,
համաձայն մեր խառնուածքին, կոչումին և դաստիարակութեան:

Ոմանք կեանքի ինչ ինչ բերումներով, շլացած նիւթական կեանքի մը
պարզեցիկ բարիքներէն, կ'որդեգրեն նիւթապաշտական ուղի մը և հետամուտ
կ'ըլլան անոր՝ իրենց առջև խափանուած տեսնելով ուրիշ ու է ելք, դէպի՝ այլ
նպատակներու բացուող ճամբաներ:

Ոմանք — սոսկական մահկանացուներ —, կ'ընդունին կեանքը իրրեւ
տուեալ մը, կ'ապրին կենդանական և բուսական իրենց կեանքը, խոնարհ ու
անհանգէս, և բոյսի ու կենդանիի նման կ'անցնին կեանքի ճամբէն:

Ոմանք կ'ընտրեն սակայն մտաւորականին ճամբան, իրազործելու համար շատ աւելի գերազանց և շատ աւելի ազնիւ գաղաթիւներ որոնք կը պատկանին իտէական և իմանալի աշխարհներու:

Ուրիշներ տակաւին, զիտութեան, արուեստի, իմաստասիրութեան գետիկներու վրայ կ'ընեն կարեւոր յառաջդիմութիւններ և կ'արձանագրեն յաջողութիւններ:


Բնականաբար, երբ մարդ նպատակ կը դնէ ընթանալ որոշ ուղիէ մը, ի յառաջագունէ կ'առաջադրէ զայն և ըստ այնմ կը շարունակէ:

Բայց որքան որ ալ հաստատակամ և ինքնավստահ քալենք ճամբաներէն հասնելու համար մեր նպատակին, այնքան աւելի կը զգանք պակաս մը մեր հոգիներուն մէջ: Նիւթական, ճարտարարուեստական, մտաւորական, գիտական և այլ մարզերու մէջ ևս տեսանելի և մատնանշելի անյազութիւնը բնական ձեւաւ տուժն է հասնելու այն անհրաժեշտ և էական պակասին որ պահանջքն ու պէտքն է իւրաքանչիւր բանաւոր էակի, — զԱստուած մեր մէջ ունենալու, Աստուծոյ վասնզի առանց հոգեկան լիութեան զուր են մեր ճիգերը աշխարհային յաջողութիւններով և շահերով փառաւորելու: Ինչ որ շօշափելի է թանձրացեալ իրրէ նիւթ՝ այս աշխարհին կը պատկանի լոկ. կան ուրիշ արժանիքներ ալ որոնք աստուածային շնորհներով միայն ձեռք կը բերուին և որոնք յաւիտեանական են ըստ Առաքեալին որ կ'ըսէ, — «տեսանելիքս առժամանակեայ մի են, իսկ աներեւոյթքն յաւիտեանական»:

Արարածները, որոնք ճամբորդներ են այս կամ այն ձեւով, իբրեւ գերազոյն վախճան կ'ընթանան ի վերջոյ դէպի Արարիչը որ ճարտարապետն է Տիեզերքին և լրումը կեանքին: Հետեւաբար արարածները չեն որոնք հանգիստադրած են գերազոյն նպատակը կեանքին, այլ Աստուած՝ որ սկիզբն է ու վախճանը ճամբուն: Ուրեմն իբրեւ արարածներ երբ մեր սահմանափակ միտքով ու կամքով կ'ընթանանք մեր նախասիրած շաւղէն, անհրաժեշտաբար պէտք է ի մտի ունենանք նաև որ կայ գերազանց ճամբայ մը որ մեր Տիրոջ ճանապարհն է, ուրկէ Քրիստոս ևս անցաւ ու ցոյց տուաւ զայն իր օրինակով ու իր Անձով: Անոր ընթացակից ըլլալով միայն կրնանք անցնիլ այդ ճամբէն ու հասնիլ մեր կարեւորագոյն նպատակին — փրկագործութեան. վասնզի միւս բոլոր ուղղութիւնները առժամանակեայ վախճանի մը կ'առաջնորդեն, մինչ Քրիստոսի ճամբան է որ կը տանի մեզ յաւիտեանութեան:

Ապա ուրեմն Քրիստոսի հետեւելով, Քրիստոնէաբար ապրելով, ընթացակից կ'ըլլանք մեր Տիրոջ: Ու Քրիստոնէութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ ճամբայ մը Հաւատքի, Յոյսի ու Սիրոյ: Պատահամբ չէ որ ճանապարհ կը կոչենք զայն: Ու և է կեանք որ կ'ընթանայ Տիրոջ ճանապարհով, կը նմանի առուակի մը, մաքուր, ջինջ ու անապակ, որուն մէջ ճահճային ու է ապականութիւն չի կրնար գոյութիւն ունենալ:

Քրիստոնէայ առաջին համայնքն իսկ կրնայ որդեգրած ըլլալ այս բացատրութիւնը, վասնզի ի հնունձ ըսուած էր մարգարէութիւններուն մէջ թէ «ապակա՞նք քո լուիցեն բանս զհետ մոլորեցուցչացն քոց, որք ասէին՝ եթէ այս է ճանապարհ և զնացուք ընդ սա» (Ես. Լ. 21):



«Անդ եղիցի ճանապարհ մաքրեալ, և ճանապարհ սուրբ կոչեսցի և մի անցցէ ընդ նա պիղծ» (Ես. ԼԵ. 8) :

Քրիստոնեաները առաջին անգամ «ճանապարհորդակից» կը կոչուին յունարէն խօսող հրեայ համայնքին մէջ, հասկցնելու համար իրենց Քրիստոսի հետեւորդ ըլլալը : Գործք Առաքելոցի Թ. զլխուն մէջ կը կարդանք որ Սողոս արտօնազիր մը կ'ուզէ քահանայապետներէն Գամասկոս երթալու որպէսզի հոն «զորդացէ այնր ճանապարհաւ՝ արս կամ կանայս, կապեալս ածցէ յերուսաղէմ» : Աւելի ետքը, զարձեալ Գործք Առաքելոցի մէջ, քրիստոնեաները կը կոչուին նազովրեցւոց հերձուած, որուն ի պատասխան Պօղոս կը զրէ. «Եթէ ըստ ճանապարհին զոր ասեն հերձուած, այնպէս պաշտեմ զհայրենի Աստուածն, հաւատացեալ ամենայնի» : Բնականաբար առաջին քրիստոնեաները չէին փափաքեր հերձուած կոչուիլ, այլ՝ նախապահորդակից : Հետեւեալ արդէն բացատրութիւնն էր որ կը գտաւ և կ'որոշէր առաջին քրիստոնեաները միւս հրեաներէն :

Հին Կտակարանին մէջ օրինակներ չատ կան բացատրելու համար նախապահին նշանակութիւնը և դերը կեանքին մէջ : Հին Կտակարանը կը բացատրէ երկու ճամբաներու գոյութիւնը, մին կեանքի, միւսը մահուան. բարին և չարին. լոյսին և խաւարին ճամբան : Բարութեան, լոյսի և կեանքի ճամբաները, բնականաբար կը նշանակեն Օրէնքի համաձայն ապրուած կեանք մը : Հրեաներ, սկիզբէն ի վեր մեծ կարևորութիւն կ'ընծայէին Օրէնքին. կանոնաւորութեամբ իրենց մատաղները կը բերէին Տաճար, և իրենց բոլոր պարտաւորութիւնները կը կատարէին ըստ կարելոյն անթերի, որուն համար մարգարէները կը ծառանային իրենց ժողովուրդին դէմ, որովհետեւ Տէրը մատաղի, նոխազի, տատրակներու արեան պէտք չունէր, այլ սուրբ սրտի և ճշմարիտ հաւատացեալներու՝ որոնք ներքնապէս կ'ապրին սուրբ կեանք մը և ոչ թէ լոկ ցուցամոլութեան համար կ'ընեն իրենց տեսակ մը ընկերային-բարոյական-կրօնական պարտաւորութիւնները :

Քրիստոսի ճանապարհորդակից ըլլալով ուրեմն, քրիստոնեաներ զիտէին կեանքի ճշմարիտ ճամբան, համաձայն Յիսուսի ուսուցումներուն : Երկու ճամբաներու զադափարը, այնքան յստակ կերպով մատնանշուած Հին ու Նոր Կտակարաններուն մէջ, կը շարունակուի նաև Առաքելական Թուղթերուն և Աւետարաններուն մէջ ևս : Լոյսի և խաւարի ճամբաներն են անոնք. մին՝ դէպի փրկութիւն և միւսը դէպի կործանում առաջնորդող : Լեւրան քարոզին մէջ, Մատթէոս Աւետարանիչ ամենայն պարզութեամբ և վերջնականապէս կը բացատրէ զայդ. — «Մտէք ընդ նեղ դուռն, քանի՜ ընդարձակ է դուռնն և համարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ, և բազումք են որ մտան են ընդ նա : Քանի՜ անձուկ է դուռնն և նեղ ճանապարհն՝ որ տանի ի կեանս, և սակաւք են որ գտան են զնա» (Մատթ. Է. 13-15) :

Բոլոր անոնք որոնք ճանապարհորդակից են իրարու, զիրար կը հասկնան, զիրար կը մխիթարեն և բարեկամներ են իրարու, եթէ անոնց նպատակն է քալել դէպի Աստուած՝ Քրիստոսի ճանապարհէն : Ըշմարիտ բարեկամներ կրնան ըլլալ անոնք միայն, որոնց նպատակը նոյնն է և վսեմ : Յիսուս այս իսկ պատճառաւ իր աշակերտները կոչեց իր բարեկամները : Ահա թէ ինչու ճշմարիտ արուեստագէտները, զիտունները, առաջնորդները, բարեկամներ են իրարու :

անոնք միևնոյն նպատակը իրագործելու կը միտին։ Անոնց զերազոյն նպատակը ճշմարտութիւնն է, զանազան մակարդակներու վրայ։

Բայց «ի՞նչ է ճշմարտութիւնը» կը հարցնէ մարդը, ամէն անգամ որ ինքզինքը գտնէ կեանքի թոհուրոհին մէջ շուարուն։ ամէն անգամ որ վրիպի իր այս կամ այն նպատակը իրագործելու ճիղին մէջ։ ամէն անգամ որ չըջապատուած զգայ ինքզինք ուրիշ ճամբաներէ գացող մարդերէ, որոնք ըստ իրեն անարդար են և անխիղճ։ Եղբայր եղբօր դէմ զազան, մարդը՝ մարդուն թշնամի։ Բայց ի՞նչ է ճշմարտութիւնը. այսպէս հարցուց Պիղատոս, հռովմէացի աղուէս իմաստունը՝ Յիսուսին, առանց անդրադառնալու որ ճշմարտութիւնը իր դիմաց կեցած էր։ «Ես եմ հեմարսուքիւն» պատասխանեց Յիսուս Պիղատոսին։ Ճշմարիտ քրիստոնեան հետևաբար ան է որ իրեն կեանքին մէջ զերազոյն նպատակ դրած է հասնելու ճշմարտութեան՝ որ յայտնուեցաւ պատմութեան մէջ Յիսուսի Անձով։ Ոչ ոք Յիսուսէ առաջ և ոչ ոք Յիսուսէ ետք չէ համարձակած խորիմանալ և խորզոյլ այս նախադասութեան լրիւ էութիւնը։ Մարգարէներն ալ ճշմարտութեան մասնիկներ յայտնաբերած են իրենց ժողովուրդին, ժամանակին մէջ, բայց Յիսուս էր միայն որ Իր Յարութեամբ սրբագործեց զայն։ Խօսքը միայն չի բաւեր, կարևոր է նաև գործը. ու երբ իրար կը հանդիպին ասոնք կեանքին մէջ, կ'իրագործեն ճշմարտութիւնը։ Մարդուն կամբը ևս երբ կը հանդիպի և կ'ենթարկուի Աստուծոյ կամքին, կ'իրագործէ ճշմարտութիւնը։

Հակառակ որ Քրիստոնեայ կը կոչուինք Աւագանի և Ս. Հոգիի մկրտութեամբ, բայց քրիստոնեաներ չենք, այնքան ատեն որ ճանապարհորդակից չենք Քրիստոսի, որովհետև ճանապարհորդակից կ'ըլլանք միայն անսահման դոհոյութեամբ և ճիգով։

Երբ ազգի մը մէջ, այդ ազգը կազմող անհատները միևնոյն նպատակը իրագործելու կը միտին ճշմարտապէս, անոնք ճանապարհորդակից են, հետևաբար բարեկամներ՝ և միութիւն մը կը կազմեն։ այդ միութիւնը կը քակտի, երբ մասերը մի և նոյն նպատակը իրագործելու չեն միտիր։ Մի և նոյն նպատակը իրագործելով միևնոյն ոճը կը ստեղծեն, որ կ'արտայայտուի նիւթական և իմացական (արուեստ), կրօնական (հոգևոր) մակարդակներու մէջ, այնպէս ինչպէս տիեզերքը միութիւն մը և ամբողջութիւն մը ըլլալով կը միտի նոյն նպատակին, այդ ամբողջը ստեղծող Արարչին։ Տիեզերքի ամբողջութեան վրայ տիրապետող կը տեսնենք մէկ զօրութիւն որ նախախնամող Աստուածն է, և որ կ'արտայայտուի նիւթական (բնութիւն), կենդանական (կենսաւոր), իմացական-բանաւոր (մարդը) և կրօնական (հոգևոր) մակարդակներու վրայ։ Իրաւամբ իմաստասէրը կը հիանայ երկնքին, երբ կը գիտէ զայն աստղադարձ դիշերին մէջ։

Հայ ժողովուրդը կեանքի բոլոր մակարդակներուն վրայ իջեցուցած է միակ ոճ մը, ճանապարհորդակից ըլլալով Յիսուսին, Անոր ներկայութիւնը իրողապէս խորիմանալով և խորզոյլով, — ներապրելով։

Անհրաժեշտ է ճամբան, առանց որուն կը կորսուինք, բայց որով կը փրկուինք։ Հայք. Եկեղեցին Յիսուսի մարդեղութիւնն է, որով հայ հաւաքականութիւնը փրկող միակ ճանապարհը։

Ճանապարհորդակից ըլլանք Յիսուսի, դէպի ճշմարտութիւն և յաւիտենական կեանք։

ԿՐԹՆԱԿԱՆ

ԿԵՆԴԱՆԱՐԱՐ ՀԱՅՐ

«Ես եմ հացն կենաց, որ զայս առ իս
ոչ կաղցիցի» (ՅՈՒՀ. Զ. 35):

Ամենէն առաջ ու ամենէն աւելի մարդիկ հացին հետեւն կ'երթան, վասնզի հացը կեանքին պայմանն է: Հացը մեր բոլոր պէտքերը կը խորհրդանշէ: Մեր գոյութեան չէնքը կեանքի հողին վրայ հաստատուն պահող հիմն է հացը: Ու որքան հին է մարդուն գոյութիւնը՝ այնքան հին է մարդուն պէտքերը խորհրդանշող հացին կոխը: Դժբախտ է այն մարդը կամ ընտանիքը որ հաց չունի: Ինչե՛ր չէ ըրած մարդը ու չընեն որպէսզի կտոր մը հաց ճարէ: Ի՛նչ պարզ կամ բարդ հաշիւներու չհնթարկելի իր մտքին բովանդակ աշխարհը ու յանձն չառնել միևնոյն ատեն ամենէն անմարդկային զրկանքները նոյնիսկ հացին համար: Մահը միայն կրցած է ու կրնայ վերջ մը տալ իր բոլոր ծրագրիներուն ու հաշիւներուն, ըլլան անոնք արդար կամ անարդար, մեղաւոր կամ անմեղ, ճարելու համար հացը: Մարդոց մեծագոյն զանգուածը կ'ապրի որպէսզի իր տան հացը գտնէ: Մեր մտահոգութեանց գերագոյն առարկան է հացը: Ի՛նչ ահաւոր անդոհանքի կը մատնուի մօրը սիրտը ու հայրը կը սասի իր կեցած տեղը երբ զաւակները «հաց...» կը պոռան: Հրամանատարը կը կորսնցնէ իր մտածման թելը, որքան ալ հանճարեղ ռազմավար մը ըլլայ ան, երբ բանակի զինուորներուն հացը կը պակսի: Քանիներ խելակորոյս, իրենց կեանքին վերջ տուած են, երբ փակուած է իրենց զիմաց ամէն դուռ, գտնելու համար մանանան:

Մարդը՝ իր առաջին իսկ վայրկեանէն երբ գոյութիւն կ'առնէր Աստուծոյ շունչին ներքեւ, իր ճակտին վրայ դրոշմուած զգաց դատակնիքը առաջին պէտքին, զոր պիտի գոհացնէր իր իսկ ճակտին քրտինքովը: «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո» (Ծննդ. Դ. 19): Ահա թէ ինչու դարերով աստուածային այդ դատակնիքը իրագործելու իրենց ճիգին մէջ, երբ մարդիկ կեցած

ճակատագրին դոց դրան առջև, նախընտրած են այնքան յօժարակամ միևս դուռը մահուան:

Հաց... Քանիներու համար օրհնութեան ու քանիներու համար անբացատրելի դժբախտութեանց մանանան եղած է ան կեանքի անապատին մէջ:

Բայց մարդ միայն հացով չապրիր. հացէն վեր ու հացէն տարբեր բաներու ալ կը հետամտի որոնք ևս էական են:

Անգամ մը որ մարդ գտնէ այդ մանանան, այլ խօսքով, գոհացնէ իր ամենէն էական ու բնագոյային պէտքերէն մին, իր աչքերը կը բացուին հեռահեռ գոհացնելու համար այլ պէտքեր: Որքան պէտքերուն տեսակները շատնան և ըլլան վարէն վեր յառաջընթացութիւն մը, այնքան կը բարձրանան յարաբերաբար, այնքան անոնք կը ստանան իմացական, բարոյական և ոգեկան նկարագիր: Զե՛ որ մեր Տէրը ըսաւ. «Մարդ ոչ միայն հացիւ կեցցէ այլ և բանին Աստուծոյ: Եւ այդպէս է որ քաղաքակրթութիւնը կը շինուի հիմնուելով գերագոյն Վարդապետին այս խօսքին վրայ: Ու քաղաքակրթութեան շինուելովը մարդիկ կ'ազնուանան:

Հելլեն ժողովուրդին մէջ, Սոկրատի, Պլատոնի և Արիստոտէլի և յետոյ Ե. դարուն (Ն. Ք.) Պէրիկլէսի շրջանին, որ ոսկեդարն է այդ ժողովուրդի պատմութեան, արուեստի բոլոր մարզերու մէջ նուաճուած բոլոր իմանալի և զգալի պէտքերը, կ'ապացուցանեն թէ մարդը ծարաւի է, անօթի է հոգեկան և իմանալի արժէքներու ալ: Սոկրատ, ամէն բանէ առաջ ու ամէն բանէ աւելի յոյն նորսերունդին նահատակ առաքելալը եղած էր քարոզելու նիւթական հացէն յետոյ, հետամտիլ, ճգնիլ, նայիլ որ միտքն ու սիրտն ալ չմնան որը, խեղճ ու անօթի, հնթակայ անստեղծութեան տագնապներուն, մի՛ գուցէ յուսախարութեան պտրագային յանկարծ չմեռնելու: Մարդիկ անգամ մը որ ճաշակեն իմանալի և հոգեկան հացը կը դառնան ազնուական, բառին ճշգրիտ առումովը. կը դառնան ասպետներ, ըլլալու համար պատրաստ, իրենց բարեկամներէն իրենց երկարած մոլեխիւղի բաժակը ըմպելու: Թող պակսի մարդուն մէջ ազնուական ու վեհ տարրը, անոր մէջ երևան կուգայ անխիղճ, վայրագ, բարբա-

բոս ու խրդային հոգեպէս անանկ մարդը: Կա՞յ աւելի մեծ ողբերգութիւն երբ մարդը իր իսկ ձեռքով մարէ լոյսը իր հոգիին ու թողու որ ան հեղհեղեղ մարի ու յետոյ մեռնի՝...: Քաղաքակրթութիւնը իր բոլոր մարզերով հիմնուած է ազնուական և ասպետական մարդոց ձգտումներուն և նըւաճումներուն վրայ:

Գիտուններ որոնած են ճշմարտութեան հացը. արուեստագէտներ՝ գեղեցկութեան հացը. սուրբեր՝ հոգիի հացը:

Նւթական հացը կուգայ հողէն, կուգայ վարէն ու կը պատկանի այս աշխարհին. բայց անոր որոնումը պէտք է՝ նուազեցնէ մեր ձգտումը՝ որոնելու հոգեկան հացը որ կուգայ վերէն. ու երանի այն ընտրեալ հոգիներուն որոնք հողէն եկող պէտքը գոհացնելէ ետք, իրենց ներերկնքին մէջ կը խորհին վերինը առաքեալին այն պատգամին համաձայն՝ ըստ որում պարտ է մեզ հանապազ զգիւրդին խորհելու:

Քաղաքակրթութիւնը սակայն իր տընտեսական, գիտական, արուեստի, իմաստասիրական ու կրօնական մարզերուն մէջ ձգտած է միշտ կատարելութեան, հոգեբանական այն յայտնի պատճառաւ որ մարդը չէ ստեղծուած կատարեալ. իր կատարելութիւնը իրագործելու իր գառնագին ճիգին մէջ անհկա Աստուծոյ կոչուած է որպէսզի ինք իր ճակտին քրտինքովը իր արժանիքը շահի. իրեն տրուած քանքարները բազմապատկէ:

Բայց ի՞նչ է կատարելութիւնը: Այս հարցումին զիւրին չէ պատասխանել: Մեր մտածման անմիջական վայրկեանէն կարելի է սակայն, իբրեւ եզրակացութիւն մարդկային երկար ու վերլուծուած իմաստասիրական փորձերուն, ըսել թէ ան Աստուծոյ իսկ է: Մարդը հետեւաբար, կանչուած է ըլլալ կատարեալ այնպէս ինչպէս իր երկնաւոր Հայրը կատարեալ է (Մտթ. Ե. 48):

Այդ կատարելութիւնը ունայնացուց իր անձը և մարմին առաւ. որով մասնակից եղաւ ժամանակին, միջոցին և հետեւաբար պատմութեան:

Մարդեղացած այդ կատարելութիւնը մեր Տէրն է, նոյնինքն Յիսուս Քրիստոս: Յիսուս կը մարմնացնէ մեր բոլոր պէտքերուն ամենէն կատարեալը. կը դաւանինք զինք Աստուծոյն կատարեալ՝ եղև մարդ

կատարեալ: Յիսուս՝ կատարեալ հացը կշտացուցած է անկատար մարդոց միտք և հոգին: Յիսուս՝ քաղաքակրթութեան և մշակոյթի յաւիտենական եզրակացութիւնն է: Այլ խօսքով, քաղաքակրթութիւնն ու մշակոյթը ինքզինքնին լեցուած կը գտնեն կատարելութեան շրջանակին մէջ:

Յիսուս՝ կեանքին կատարեալ Զան է: Ան՝ Հացն է անթիւ կեանքին:

Եւ սակայն ի՞նչպէս ճաշակել այդ հացը, զՅիսուս և զգալ սնունդը զոր տուած է Ան մարդոց և կուտայ մեզի: Բան մը սակայն ճաշակելու համար, պէտք է զայն նախ ճանչնանք. վասնզի առանց ճանաչումի չկայ դատում և առանց դատումի արժէքաւորում և առանց արժէքաւորման՝ չկայ փափաք:

Որպէսզի մարդ կարենայ ճաշակել նւթական հացը պէտք է որ զայն ճանչնայ. այսինքն՝ անհրաժեշտաբար հացին արժէքը գիտնայ. և անգամ մը որ գիտնայ արժէքը հացին անպայմանօրէն զայն կը փափաքի ունենալ, կը տենչայ զայն ձեռք ձգել: Ի՞նչպէս կրնանք տենչալ, փափաքիլ առարկայ մը կամ անձ մը և կամ երեւոյթներ երբ չենք արժէքաւորեր, չենք գատեր, չենք ճանչնար. ճանաչումէն յետոյ է որ կը գատենք զիրենք իրենց արժէքներով կամ թերութիւններով:

Կ'ընդունինք՝ երբ կ'արժեւորենք: Կը մերժենք՝ երբ թերի են անոնք:

Ի՞նչպէս կրնանք ճանչնալ զՅիսուս:

Որքան կը սխալին մարդիկ երբ առանց փնտռելու այն տեղը ուր Յիսուս կայ զինք իր տեղւոյն մէջ ճանչնալու այնպէս՝ ինչպէս որ Ան կայ և է, ինքզինքնին հետեւ կը պահեն այդ տեղէն և կը դառնան իրենց երեւակայութեան, իրենց իմաստասիրական, զգացական մտքի սին որոնումներուն և հոն կը քննան ունայնօրէն փնտռել և ճանչնալ զՅիսուս:

Այն միակ տեղը ուր Յիսուս կրնանք ճանչնալ Սուրբ Գիրքն է: Մարդիկ թող չփորձեն ճանչնալ Յիսուս առանց որ Սուրբ Գիրքը կարդացած ըլլան: Միւս կողմէն պէտք է մօտենալ Սուրբ Գիրքին, Յիսուսի մասին կանխակալ կարծիքներ ունենալով:

Եթէ ունինք կարծիքներ, սրբնք զանոնք մեր մտքի պատաստէն ու մօտենանք Սուրբ Գիրքին որպէսզի մեր մտքին վրայ

դրոշմուի Յիսուսի Անձին ու նկարագրին պատկերը հարազատորէն, այնպէս ինչպէս որ Ան է՝ էապէս և իրապէս: Այս իմաստով, բազմահազար մարդոց որոնք իր անունին առջև կ'երկրպագեն, տակաւին Յիսուս կը մնայ անձանթ և անհաղորդ:

Ուրեմն մենք կրնանք ճանչնալ զՅիսուս իր պարզ ձեւին մէջ, Սուրբ Գիրքի ընթերցանութեամբ:

Բայց կեանքի այդ Հացը ճաշակելու համար, ճանաչումէն յետոյ պէտք է զԱյն սիրել: Ձեռք կրնար չսիրել, չըզձալ կատարեալ կեանքի Հացը անգամ մը որ զԱյն էապէս ճանչնանք:

Բանաստեղծը, արուեստագէտը որ ներշնչումին, իտէականին քաղցը ունի չի կրնար զԱյն ըսնք, ներշնչման և իտէականին հացը ճանչնալէն յետոյ, չսիրել, չըզձալ:

Մշակոյթին եւ քաղաքակրթութեան շէնքը կը բարձրանայ այս կենդանարար Հացին ճանաչումովը, ճաշակումովը և սիրովը:

Սէր . . . : Ամենէն շատ յեղեղուած և ամենէն աւելի չհասկցուած բառերէն մին է «սէր» բառը: Պէտք է միանգամ ընդմիջտ թօթափենք սիրոյ մասին բոլոր վայրի ու վարի զգացումներու և մտածմանց տեսակետները, ինչպէս կը սորվեցնէր Սոկրատ իր աշակերտներուն, ու պէտք է զայն առնենք բնութիւնը անդրանցնող, զգայարանքներն ու շօշափելիները անդրանցնող, բնագանցական ճշգրիտ իմաստին մէջ: Զէ՞ որ Սէրը Աստուած է:

Արդ, կենդանարար Հացը ճանչնալով և սիրելով, մարդը կատարելութեան Հացը ճաշակած կ'ըլլայ:

Բայց ո՞րն է այն միջոցը որով մենք պիտի կարենանք ճաշակել զՅիսուս:

Այդ միջոցը սրբագործուած հացն ու զինին է, որոնց ճաշակումովը մարդը հաղորդակից կ'ըլլայ Յիսուսի Անձին:

Ու բոլոր հաղորդակիցները կը կազմեն հոգեւոր ընտանիք մը, հոգեւոր բանակ մը ու հոգեւոր ազգ մը:

Եկեղեցին կենդանարար Հացին Մարդեղութեան խորհուրդն է: Քաղաքակրթութիւնն ու մշակոյթը հիմնուած են Յիսուսի կենդանարար Հացին վրայ:

Սուրբ է Աստուած, սուրբ է Յիսուս, սուրբ է Անոր Եկեղեցին ու մշտապէս տի-

րաբար հաղորդակից ըլլալով կենդանարար Սուրբ Հացին, սրբացած է ու կը սրբանայ ժողովուրդը, հոգեւոր ընտանիքը և հոգեւոր ազգը:

Քրիստոս եղած է և է կեանքի հացը նաև մեր ժողովուրդին:

Այնքան ատեն որքան որ մենք կուշտ ենք մեր բնագոյներէն ու տարրերային զգացումներէ ու միտքերէ եկած հացով, պիտի չկարենանք զգալ քաղցը Հոգեւոր Սուրբ Հացին, այսինքն՝ Յիսուսի Անձին: Որքան ատեն որ հայ ժողովուրդը իր անկատարութեան հացովը կշտանալ ուզէ, այնքան ատեն կը մնայ հեռու ինքզինքը կատարելագործելէ: Հայ ընտանիքը, հայ վաճառականը, գործարանատէրը, գաղափարի մարդը, արուեստագէտը ու կրօնքի մարդը այսօր և վաղը ուր ալ որ գտնուին անոնք, պէտք է որ զգան կենդանարար Հացին անթոթիւնը. այլապէս չկայ փրկութիւն մեզի համար: Ուշ կամ կանուխ դատապարտուած ենք կորսուելու էապէս, եթէ մնանք հեռու և անտարբեր մեր Եկեղեցին նկատմամբ: Պէտք է, անհրաժեշտ է որ ջնջենք մեր կանխակալ կարծիքները և մեկնութիւնները մեր Եկեղեցւոյ և անոր մէջ ապրող Յիսուսի ու Սուրբ Հաղորդութեան մասին:

Հայ Եկեղեցւոյ սեղաններէն է որ այդ կեանքը հոսած է հայորդիներու սրտին մէջ: Հայ ժողովուրդը դարձած է ազնիւ և բարձր ժողովուրդ, վասնզի ան ճաշակած է կենդանարար Հացը: Սիրած է կատարելութիւնը, այսինքն ցանկացեր է Յիսուսի ներկայութեան իր հոգին մէջ, հետեւած է Անոր Լոյսին ու գործադրած է Անոր Կամքը:

Մեր ժողովուրդի հոգին ու մտքի լուսաւորիչներուն — Ս. Գրիգոր, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ — կեանքը ապրելու միակ շարժառիթը եղած է կենդանարար Հացին ճաշակումովը ստեղծել հայ կեանքին մէջ Ոգի մը՝ որուն շնորհիւ հայ ժողովուրդը կրցաւ լիացած ապրիլ:

Նոյն այդ կեանքին, կենդանարար Հացին ըլլանք հաղորդակից միշտ: Ըսենք ազգովին օգհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր:

Չդաւաճանենք մեր Հոգեւոր սրբութեան:

ԻՍՍՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԳՈՒՄԱՐՈՒԱԾ 1955 ԹՈՒԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 29-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՏՆԻ ՄԷՋ

Ցերեկուան ժամը 12-ին հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորները կը հաւաքուին Վեհարանի բակը եւ հանդիսաւոր թափօր կազմած, կը դիմեն դէպի Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանի մեծ սրահը, ուր կայանալու են Ազգային-եկեղեցական ժողովի նիստերը:

Ժողովը աղօթքով կը բանայ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նախագահող Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանեան, որմէ յետոյ կ'առաջարկէ մէկ բոլէ յոտնկայս յարգել հանգուցեալ Կաթողիկոս երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Զ-ի յիշատակը:

Այնուհետեւ Տ. Վահան արքեպիսկոպոս կը սկսի իր բացման ճառը, որուն մէջ կը խօսի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմական դերին, անոր հայրենասիրական եւ կրօնական գործերուն եւ անոր ներկայ ու մերձաւոր ընկիւններուն մասին: Դիմելով պատգամաւորներուն, սրբազանը ջերմօրէն կ'ողջունէ զանոնք ու կը մաղթէ արդիւնաւէտ աշխատանք այն մեծ գործին մէջ, որուն համար անոնք Էջմիածին են եկեր աշխարհի բոլոր ծագերէն:

Սրբազանը իր խօսքին մէջ հանգուցեալ Գէորգ Զ. Կաթողիկոսի անունին հետ միասին կը յիշատակէ նաեւ այս վերջին տարիներու ընթացքին վախճանած բարձրատիճան եկեղեցականներ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Դարեգին Ա.ի, Կոստանդնուպոլսի Պատրիարքական տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Արտանեսանի, Եւրոպայի Կաթողիկոսական պատուիրակ Տ. Արտաւազդ արքեպիսկոպոս Սիրմէնեանի, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ Ռուբէն արքեպիսկոպոս Դրամբեանի անունները եւ նորէն կ'առաջարկէ յոտնկայս յարգել անոնց յիշատակը:

Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի առաջարկութեամբ կ'ընտրուին ժողովի գործադիր մարմինները հետեւեալ անձնաւորութիւններէն.

Նախագահի վոխանդներ

1. Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան (առաջնորդ Եգիպտահայ թեմի).
2. Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Գալիֆայեան (առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի հայոց Արեւելեան թեմի).
3. Տ. Վազգէն եպիսկոպոս Պալենեան (առաջնորդ Ռումանահայ թեմի):

Ասեճապետներ

1. Վարպետը (Աւետիք Իսահակեան).
2. Ակադեմիկոս Մարտիրոս Սարեան.
3. Պ. Հրանդ Նասիպեան (Եգիպտոսէն).
4. Պ. Սարգիս Քիւրքճեան (Լոնտոնէն):

Քարտուղարութիւն

1. Տ. Շնորհք ծայրագոյն վարդապետ Գալուստեան (առաջնորդ Գալիֆորնիոյ).
2. Պ. Հայկ Առաքելեան (Մայր Աթոռի դիւանապետ).
3. Պ. Սմբատ Դովլաթեան (Կրաստանի թեմէն):

Խմբագրական յանձնաժողով

1. Տ. Սերովբէ ծայրագոյն վարդապետ Մանուկեան (Կաթողիկոսական պատուիրակ Եւրոպայի)։
2. Պրոֆ. – դոկտ. Ա. Գ. Արրահամեան։
3. Պրոֆ. – դոկտ. Ա. Ղարիբեան։

Մանդատային յանձնաժողով

1. Տ. Հայկազուն ծայրագոյն վարդապետ Արրահամեան (ներկայացուցիչ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռի)։
2. Պ. Հմայեակ Սեղգարեան (Մայր Աթոռի ելեւմտական եւ տնտեսական բաժնի)
3. Պ. Հայկ Առաքելեան (Մայր Աթոռի դիւանապետ)։ [պետ]։



Ազգային-եկեղեցական պատկանելի ժողովի՝ պատգամաւորութիւնը (7 Հոկտ. 1955)

Ժողովը վարող գործադիր մարմիններու ընտրութենէն յետոյ նախագահը խօսքը կու տայ Պրավոսլաւ եկեղեցւոյ ներկայացուցիչ մետրապոլիտ Պետրիմին, որ ռուսերէն լեզուով կը կարդայ Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբազնութիւն Ալեքսիի ուղերձը, որով ան իր մաղթանքներն ու օրհնութիւնները կը յղէ Ազգային-եկեղեցական ժողովին՝ ցանկալով անոր արդիւնաւէտ աշխատանք։ Ուղերձի թարգմանութիւնը կը կարդայ Բարձրապատիւ Տ. Գէորգ ծայրագոյն վարդապետ Վաթեան, որմէ յետոյ կը յայտարարուի ընդմիջում, որպէսզի հնարաւորութիւն տրուի մանդատային յանձնաժողովին իր պարտաւորութիւնները կատարելու։

Ընդմիջումէն յետոյ ժողովը կը վերսկսի ժամը 2.15ին։ Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս վերստին կ'առաջարկէ յոտնկայս հոգւոց ըսել երջանկայիշակ Տ. Տ. Գէորգ Զ. Կաթողիկոսի յիշատակին։

Մանդատային յանձնաժողովի կողմէն յայտարարութիւն կ'ընեն Տ. Հայկազուն ծայրագոյն վարդապետ Արքահամեան եւ պ. Հայկ Առաքելեան: Տրուած տեղեկագրէն կը պարզուի, որ Ազգային-եկեղեցական ժողովի հրաւիրուած սփիւռքահայութեան 61 պատգամաւորներէն ներկայ են 32 հոգի, ըստ հետեւեալ ցանկի.

Գալիֆորնիայէն՝ 4 հոգի, Ֆրանսայէն՝ 5, Պուլկարիայէն՝ 3, Հիւսիսային Ամե. րիկայի Արեւելեան թեմէն՝ 9, Երուսաղէմէն՝ 2, Եգիպտոսէն՝ 3, Անգլիայէն՝ 2, Ռումանիայէն՝ 2, Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն՝ 2, ընդամենը՝ 32:

Մանօթ. — Կոստանդնուպոլսի ներկայացուցիչներ նշանակուած են Գերաշնորհ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան, Գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Պալճեան, բանաստեղծ Աւետիք Իսահակեան, պրոֆ. — դոկտ. Ա. Գ. Արքահամեան, պ. Հրանդ Նասիպեան:

Սովետական Միութեան հանրապետութիւններէն ժամանած, հրաւիրուած եւ ներկայ պատգամաւորներու ընդհանուր թիւն է 108 հոգի, ըստ ցանկի.

Նոր-Նախիջեւանի եւ Ռոստովի թեմէն՝ 18 հոգի, Ատրպեճանի եւ Քուրքեստանի թեմէն՝ 20, Վրաստանի թեմէն՝ 18, Շիրակի թեմէն՝ 19, Արարատեան թեմէն՝ 30, եւ Էջմիածնէն՝ 3, ընդամենը՝ 108:

Փոխ-նախագահ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան կը յայտարարէ, որ սոյն թուականի Սեպտեմբեր 28ին Մայր Աթոռին մէջ կայացած եպիսկոպոսական ժողովի որոշումով ատենապետութեան կազմի մէջ կը հրաւիրուին նաեւ երկու եկեղեցականներ՝ Գերաշնորհ Տ. Վարդան արքեպիսկոպոս Գասպարեան (Գալիֆորնիայէն) եւ Սիոն եպիսկոպոս Մանուկեան (Հարաւային Ամերիկայէն):

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի 1954 թուականի տարեկան եւ 1955 թուականի առաջին կիսամեայ գործունէութեան մասին մանրամասն զեկուցում կարդաց Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նախագահող Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանեան (զեկուցումը կը կցուի ներկայ արձանագրութեան): Ապա Գերաշնորհ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան ղիմնելով պատգամաւորներուն՝ յայտարարեց, որ ժողովականները արտայայտուին կամ հաստատեն զեկուցումը:

Այս մասին պատգամաւոր պ. Տիգրան Սմաթեան (Հիւսիսային Ամերիկայէն) առաջարկեց զեկուցումը ընդունիլ. Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատեան երկրորդեց. իսկ Հոգ. Տ. Սեբովբէ ծ. վարդապետը բարեփոխեց զայն՝ ընդունիլ գոհունակութեամբ եւ շնորհակալութեամբ: Ժողովը միաձայնութեամբ ընդունեց բարեփոխեալ առաջարկը: Վահրամ Երիցեանը առաջարկեց Գերագոյն Հոգեւոր Խորհրդի հաշուետուութեան ըննութիւնը յանձնել վերստուգիչ յանձնաժողովի վերաքննութեան: Պրոֆ. Արքահամեան գտաւ, որ այդ անհնար է ներկայ պայմաններու մէջ, իսկ Վազգէն Արքագանը աւելցուց, որ յառաջիկայ նորընտիր Գերագոյն Հոգեւոր Խորհրդին կից կ'ընտրուի վերստուգիչ յանձնաժողով, որ վերստուգման գործը կը կատարէ տարուէ տարի:

Այս կապակցութեամբ Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատեան առաջարկեց զբաւոր կերպով մեծ շնորհակալութիւն յայտնել Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարութեան, որ այնքան մեծ հոգատարութեամբ կատարեց է Մայր Տաճարի վերանորոգութիւնը: Ժողովը ծափահարութեամբ ընդունեց առաջարկը:

Ժողովի այս նիստի օրակարգը աւարտած ըլլալով, Գերաշնորհ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան յայտարարեց, որ վաղը (Սեպտեմբեր 30-ին), առաւօտեան ժամը 10ին կը մատուցուի սուրբ պատարագ Մայր Տաճարին մէջ եւ կը կատարուի հանդիսաւոր հոգեհանգիստ՝ ի յիշատակ երանաշնորհ Գէորգ Զ. Կաթողիկոսի, այնուհետեւ տեղի կ'ունենայ հայրապետական ընտրութեան նիստը:

Ժողովը աւարտեցաւ ժամը 4.45ին:

(ԵԱՐՈՒՆԱԿԵԼԻ)

ՇԱՏՐՈՒԱՆՆԵՐ

Շատրուաններու ցանց մ'է իմ հոգին,
Սմբոխուած կէտին վըրայ քաղաքին:
Հոն, փողոցներուն թեւերը կապար,
Իր շուրջ կը դառնան, եւ իրմէ ալ վար՝
Դաշտերու սրտին, ծովին ափերուն,
Ծերն ու պարմանին կը ճանին խնդուն:

Շատրուաններու ցանց մ'է իմ հոգին,
Բրդխող ընդերքէն, դարձող իր հոգին:
Հոն՝ կանաչութիւն մը թարմ ու պայծառ,
Միշտ կը սրըփայ, ըսես թէ խայտար
Անձրեւին ներքեւ ու համբոյրներուն
Սա քաց քրքներուն՝ լոյս-եղէգ ցայտուն:

Շատրուաններու ցանց մ'է իմ հոգին,
Ուր կը կամարուին, կրկին ու կրկին,
Հասակներ տարբեր, իրարու դիմաց
Եւ իրարու մէջ, շունչով մը սրբաց,
Մինչեւ որ իջնէ իրկունը նորէն՝
Մշուշ, հով-լուսին, յառնող սրտէն:

Շատրուաններու ցանց մ'է իմ հոգին ...
Քիչեր կը սպասեն անոր քրքունքին.
Ու փչէ՛ր՝ որոնք սիրով երկարին
Թափուն ձայներուն անոր աշխարհին:
Բայց ան կը բխի, մեղմ, անոնց համար —
Նայուածով խորունկ, լոյսի սիրահար
Թաց հոգիներուն — որոնց աչքին դէմ
Միշտ կը սրըփայ տեսիլ մ'արեգդէմ ...:

Շ է Ն - Մ Ա Հ

Ո՞ՐԹ Է ՆՈՐԱԶԸ ՍԱԿԱՅՆ...

Իրօ՛ք, Աստուած իմ որ հօրս ու մօրս ալ պատմածով
 Ես օրօրոցս ունեցայ եկեղեցւոյ որմին տակ
 Ու խանձարուրս եղալ տաքագրութեան պատմութեան:

Սուրբ աչքերո՛ւ, էն առաջ, ուրեմն աչքերս բացի.
 Ու աղանջներս լրսեցին ճնորհալիին «առաւօտ...»ն,
 Կամ հրսկումի «եկեացէ՛...»ն կամ նարեկին «ի խորոց...»ն:

Այգալէս եթէ ցանեցիր օրօրոցիս քարմ հողին
 Հունիսը Սիրոյդ կենարար յաւերժիդ մէջ ծաղկելու,
 Ըմբոսութեան հունիսն ուժեղ ու սրբազան ու հասուն,

Հիմա ինչո՞ւ, Բարեբա՛ւր, բարի արեւը Դէմփիդ
 Ծիլէն հեռու կը պահես ու անձրեւի խոստումիդ
 Մէջ վարանոտ կ'ուշանա՛ս, կը խորեւմե՛ս ու կ'այրես...

Ա՛հ, արցունքով մինչ կ'երթամ, բողոքի ցար կուրծքիս,
 Ու լրօութեան շուփն հետ միշտ Ուխտի հօրս ձեռքէն
 Բըռնած, կ'երթամ դէպի վեր մենութեան ցուրտ գազաքին

Կ'երթամ զոհի սեղանին...: Ահա՛ խուրձերն իղձերուս,
 Ահա կըրակը կամփիս, երազիս սո՛ւրբ ահա...
 Ու դալկացած կը հարցնեմ ո՞ւր է նոխա՛զը սակայն...:

Ա. Շ Տ Ի Շ Ա. Տ

Փ Ա Փ Ա Ջ

Ժամանակն ըլլար
Ծանօթ արանէս,
Եւ ամէր զիս ես
Օրերուս անցեալ

Ես դառնայինք ալ
Յնծուրեան երգով
Պայծառ տեսիլով,
Երկիրներէ տար:

★ ★

Ինկան անոնք որ
Անօր երկայնքին,
Ելլէին կրկին
Ու կազմած քափօր

Իրիկուն մ'հանդարտ
Երբար, յանգէր, Տէ՛ր,
Ուր ըսկսած էր
Արանէսը այդ:

Ջ Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Յաւիտեանէ համբայ ելած, արդէն հասած ես Մարդուն՝
Կայան է հոս, կանգ ես առած ու մարդ եղիր իմաստուն,
Կառաւարդ պիտի շուսով շարունակէ իր համբան,
Բաժինդ չառած ցաւէն, խինդէն, սէրէն չըլլայ մեկնիս դուն:

Հազար ձեռով պիտի ծըլիմ, երկիր իմ, մայր իմ կրկին,
Այդ ձեռերուն մէջ, նոյն սիրով, պիտի փարիմ ես կեանքին,
Իբրեւ Մանուկ, Ծաղիկ, Թիթեռ, Երազ եւ Իդձ ու Կառօս,
Ա՛խ, յիշէի նախորդ Օրերս, նախորդ Սէրերս քու կրծքին:

Ես ոչինչէ չեմ ըսեղծուած, անէութեան չունիմ վախ,
Պարապութեան մէջ Անցեալի եւ Գալիքի չեմ առկախ,
Ես հող չէի եւ չեմ վախնար որ կը դառնամ նորէն հող,
Յաւերժական համբողջ եմ ես, Կատարեալն է զիս կանչող:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա Յ Ա Յ Ա Տ

Ամէն օր ես նայում եմ ինչ կարօտագին հրպարսութեամբ,
Մի օր ջինջ է հայեացքը քո, մի օր գլխիդ չօխում է ամպ,
Մերք քո վիհերը մոռալում, մութ է պատում քո նակասին,
Մերք արեւն է անհոգ խաղում լուսէ՝ քաղիդ աղամանդին,
Բայց դու միտք էլ՝ քէ խինդիդ մէջ, քէ քո վեժի անեղ ժամին՝
Յատեժական ուրախութեամբ նայում ես նոր Հայաստանին:

Քեզ նայելիս արհիս ծովը ալեկոծում է մինչ յասակ,
Աշխարհում կա՞յ ուրիշ մի բախտ, ինչպէս քո բախտը դժնդակ,
Դու, որ հակասքոյ գեղեցիկ՝ երկնի մէջ ես մարտնչել,
Գիւտեր - ցերեկ գլխով անքեք բանքերի հետ ես մարտնչել,
Հիմա գերի՞... Օ՛, մի՛ լռի, հոգիս ծարաւ է քո ձայնին,
Դու նման ես երկիր - երկինքն իրար կապող յուշարձանին:

Եւ արդ վսեմ, խորհրդաւոր իմաստութեամբ կանգնած ես լուռ,
Ինչ ես խորհում՝ ես չգիտեմ, բայց քո գլխին տեսնում եմ հուր
Տեսնում եմ ու ցնծում եմ ես, իմ քանկագին, իմ հարազատ,
Ուզում եմ այս արեւի տակ մեր սարը սուրբ տեսնել ազատ,
Ու վեհօրէն, հպարտօրէն վեր խոյացած հասակով մէկ,
Անդնդախոր կենտրոններից յաւէջ ցրած մեռու ու մէգ:

Ուզում եմ ինչ ազատ տեսնել, հպարտ կանգնել քո կատարին,
Ու այնտեղից սփռնչացած՝ նայել հայոց նոր աշխարհին,
Տեսնել Սիփանը սիգապանծ, ծիծաղկոտ ծովը Բզնունի,
Մեր ուսանները հինաւուրց, լեռնապարերը հայրենի,
Հայոց գետերը շառաչուն՝ ծայրից մինչ ծայր սլացի մէջ,
Մեր հովիտները ծաղկագորգ, ծովածառալ դաշտերը պերն:

Դիտել բոլորը, հիանալ ակնապարար տեսարանով,
Հոգիս պարզուի, ինչպէս զարնան անձրեւից ես՝ երկինքը մով,
Հոգ չէ, քէ որ անդունդներիդ յովազ հողմերը մոլեգնեն,
Քո դիւքական վեհութեան մէջ ես քեւաքեկ յաւէջ ընկնեմ,
Եւ սառույցներդ սառնաւունջ դժկամ դառնան դազաղս անզարդ,
Ո՛վ Արարատ, միայն քէ դու, միայն քէ դու լինես ազատ:

Ս Ս Ի Մ Է Ն

ԳՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

ՄԱՐԴԵՐ ԵՒ ԳՈՐԾԵՐ

(Ճարտնակություն՝ Ապրիլ-Մայիս 1955 էն)

Ձեմ գիտեր, արդեօք այս սուրբին անարժան հեղինակի՞ն մը, իմ կողմէն, քիչիկ մը սա դասաւորման, պայմաններուն ներսն իսկ ենթադրել անոր հանճարը հասունցնող խելութիւնը, անոր գրականութիւնը թղթեղէնէն ազատագրող բարեքը, ու վերբերել յաւակնել, այդ ամենէն, Պարոնեանի անբաղդատելի մեծութիւնը, մարդերէն, իրենց մեղքերէն, յիմարութիւններէն իր անհուն, տիրական, մեծափառ, անխորտակելի սեւոսեմները և յանդգնել յայտարարել որ մեծ Պարոնեանը արդիւնքն է Պոլսոյ մեծ ու պզտիկ մաղաղաներուն, այս բառին տալով իր ամբողջ պատկառանքը, բերնին մէջ մարդոց որոնց ամբողջ ստամոքսը, աղիքները, ուղեղը մնային խիստ կնիքին տակը այդ խառն, խուրճա փառքերուն։ Բայց դուք չէք գիտեր որ սա վերագրումները կը ներկայանան իմ գրչին յաճախանքին մէջ միւս մեծ Ֆրանսացի գրագէտին որ իր տաղանդը անշուշտ պարտական մնաց իր տունին ողբերգութեան — իր կի՛նը — բայց իր հանճարը կ'ըսեն թէ գնեց սափրիչի մը խանութէն որ Ժ. Դարուն ժողովրդական խորհրդարանն էր Բարիզին ու գաւառիկ մեծ կեդրոններուն։ Ուր կ'երթար Մօլիէր իր տըրամութիւնը մարսելու, սաղիլէ ետքը անոր արտաքին կերպարանքը պալատներու յորդահասան լոյսերուն թիւերովը։ Ֆրանսացի մեծագոյն հեղնողը և ըստ ոմանց՝ այդ ժողովուրդին ամենէն մեծ գրագէտը, կը տեսնէր մարդերը, շարան շարան, որոնք կուգային խանութպանին մկրատին ու ածելիին տակ իրենց մազն ու մօրուքը իրենց օտքերուն առջև թափուած գտնելու, մինչ, միւս կողմէն, կզականբը կը թափէին դուրս գերբուկները իրենց նկարագիրներուն և բոբրը իրենց հոգիներուն։ Սափրիչին խա-

նութը ու Վերսալի պալատական բեմը։ Գաւառական քաղաքներու տնափարի հանգիստարհները։ Բայց մանաւանդ ասոնք լեցնող մարդերը։ Անշուշտ։ Ֆրանսացի հեղնողին գործին ներսը կայ դառն, դժբաղակ, յիմար մարդկութիւն մը զոր դժուար ալ չէ մտապատկերել կամ հասկնալ նոյն իսկ, Պոլս, մաղաղային մութ անկիւնը իր տեղակները լեցնելու զբաղած տոմարակալին դառնութեան, տրտմութեան, յիմարութեան համահաւասար . . . Մօլիէր միայն հեղինակ մը չէր. էր նաև դերասան մը ու ենթակայ ասպարէզին ամենէն տըրամութ տաղնապներուն։ Միայն մեր օրերուն չէ որ դերասանը անօթութեան մասնագէտն է, վարժապետը չուքի ձգող, այլև անոր հանճարի մարմնաոսթիւնը կը բաւէ արդեօք հոս կամացուի մը փոփոխ ձեզի թէ յիսունի դոներուն Մօլիէրը գիջաւ իր անունը շնորհէ քսանէն վար իր դերասանուհիներէն մէկուն, գեղանի, թեթև, յիմար ու աւելի անդին քան այս ամէնը, ինչպէս է ըլլալ գրեթէ պարտքը բոլոր դերասանուհիներուն։ Մի հարցնէք թէ ինչ է կապը Պարոնեանի անօթութեան ու Մօլիէրի չարաշարանքին, իր կնիկին երեսէն։ Կայ անիկա, ազդակներու փոփոխութեամբ մը։ Եւ չտեսայ Պարոնեանի կնիքը, բայց տեսայ անոր զաւակը . . . Ազգային Հիւանդանոց, Պոլս։ Ու մտքէն չի կրնար ջնջուիլ անաւոր անօթութեան կնիքը որ քառորդ դար ապրեր էր անվար այդ տղուն ցաւագար ոսկորներուն կամարներուն ներսը ու գէմքին կը մնար միակտուր, պայծա՛ռ։ Ուրի՛շ։ Դարձեալ չեմ գիտեր թէ պարտաւոր եմ հոս յիշել միւս սրբազան դրուագը, միշտ այդ Մօլիէրէն, ուր, մահացու կերպով սպառած, գրեթէ հոգեվարք, դերասան հեղինակը, արքունիքը հաճ ձգող ու մեծերը փառաւորող իր ասպարէզին ամենէն ծանր մէկ դարձուածքին, կը մերժէ բժիշկներէն պարտադրեալ հանգիստը, արդիւքը ու կը բարձրանայ բեմ իր տկուր խուճիրն համար որուն հացագինն էր կազմելու այդ ներկայացումը։ Խաղին կէսին անիկա կ'իյնայ այդ բեմին, ա'լ չենլուս համար։ Պարոնեան իր աչքերը պիտի փակէր ուրիշ բեմի մը վրայ. — ատիկա Պոլսոյ Ազգային Հիւանդանոցին ամայի, ցուրտ, վանող մէկ սենեակն էր, ձեզի համար հիմա բոլորովին

ձրի բառ մը, բայց Պոլիս ապրող գրագէտներուն մեծ մասին վաւերական մղձաւանջը: Չեմ պահեր մեղքս, այդ ապրումները այս խտուածամբ արժեւորելէ: Քառորդ դար առաջ, ինծի կը տրուէր Պարոնեանի հոգեվարքին — հիւժախտը տարի կը դնէ այդ տրտում գերը աւարտելու ստիպուած հիւանդին ուսերուն — ամբողջական վերակազմումը, մղձաւանջէ մը աւելի իրաւ, ամէն անգամ որ տարիքէն կոխուած, հիւանդութեամբ դատապարտուած ու միշտ անմիջեղ մտքի բանուոր մը առաջնորդէիցաւին այդ ... պալատը: Չեմ կրնար Պարոնեանի ողիսականը մինչեւ այդ գերեզմանին դուռը վերակազմել հոս ձեզի: Ազգային Հիւանդանոցը պատասպարեց երկար անոր հոգեվարքին վերջին քանի մը ամիսները: Կ'ըսեն թէ մեռաւ մինակ: Ազգային մամուլը, իր զիակը թաղելու արարողութիւնը մեծահանդէս նկարագրելէ վերջը, նոյն թիւով խոկ ազգային հանգանակութիւն բացաւ, անոր դաւակներն ու կինը վերահասու աղէտէ մը ազատելու համար:

Այսպէս ապրեցուցինք ու այսպէս մեռցուցինք արեւմտահայ գրականութեան ամենէն վաւերական, արի, անկաշառ աշխատաւորը:

Փա՛ռք քեզի, ժողովուրդ հայոց:

Բայց մանաւանդ

— Փա՛ռք քեզի, Յակոբ Պարոնեան:

* * *

Պարզ, պարզ, իրաւ ու համեստ մարդ մըն էր, մեր ժողովուրդին միջին առաւիճութեանց պայծառ մէկ խորհրդանիշ ներկայացուցիչը, արժէքաւոր անով որ փութեան և զեղծանումի մը կեդրոնին մէջ երեւան կուգար: Սովորութիւն է իր շրջանի Պոլիսը մտապատկերել խեղաթիւրուած կերպարանքներու ներքեւ: 1850էն առդին մեզի հասած հակասական վկայութիւնները այդ մարդերէն, բարբերէն հեղինակն են սա պատրանքին: Պարոնեանի գործն ալ իր կարգին կը կանխագրաւէ մեզ, այդ Պոլիսը դատելու արարքը հեռացնելով իրականութեան պարտքէն: Դադարեմք չէ որ արեւելքը հեղինակը չհանդուրժեց: Արաբ ու պարսիկ մեծ բանաստեղծները, ու ասոնց յիշատակին մէջ թուրք կայսրութեան մեծ պար-

սաւողները յաճախ իրենց գլուխովը կը քաւէին իրենց հանճարներուն զեղեցկութիւնը: Արեւմտահայ գրականութիւնը դատելու ամէն փորձ պարտաւոր է մեկնել սամտատեսութենէն — թէ անիկա գերի ժողովուրդի մը արտայայտութիւնն է: Այս մտատեսութիւնը ձեզի պիտի բերէ բարիքը սփռւանքին: Ձէին կրնար մեր գրողները իրենց տաղանդը շահարկել ազատ մարդոց արժանաւորութեամբ: Ձէր կրնար մեր ժողովուրդը անգիտանալ թուրքը, ասոր ընտանի հայ թուրքը, բարբերուն կշիռը, որոնք գրականութեան մը մէջ այնքան տիրական դեր ունին սակայն: Պարոնեանը ու իր ժողովուրդը չեն ազատ սա նկատողութեան հետեւող բարիքէն ինչպէս չարիքէն: Պարոնեանի ամենէն քաղցր, սրտաշոյզ, բարձր առաքինութիւնը իր բացարձակ անկասկած թիւնն է այդ բարիքէն ինչպէս չարիքէն: Թուրքերու հետ հինգ դարերու կենակցութիւն մը մեր մէջ պիտի մշակէր ինքնապահ պանման տխուր, չըսելու համար ստոր complexներ: Ծանօթ տարագ մըն է սրկախսը: Ազգային գեանէն երբ փոխադրուիք բարբերու դաշտը, դուք պիտի գտնէք երեւոյթը, կերպարանք փոխած, բայց նոյն խորքին մէջ: Պարոնեան այդ բարբերը սեւեռելու պարտքը գերադասած է ամէն փափաքէ: Ուղղակի, անուղղակի իր բերնով: Ալ իրր թէ ըլլար ատիկա անբաւական, հարկն է զգացած կենդանիներու մօրթ մըն ալ փոխ առնելու: Լժան զիրք մը, Պետրաքի Ե. հատորը, Մէձ-ը Լ կերպեր, այդ բարբերուն արտագրումը կը հետապնդէ: Իր տառը հատորները մարդոց յիմարութիւններուն արձակարա՛ն: Բայց ինք յիմար մը չէր: Ալ հոս է իր արժանիքին ամենէն իրաւ մագաղաթը: Եթէ երբեք, արեւմտահայ գրականութեան մէջ, այսօր ցաւով կը հաստատենք անրական զգայնութիւն, չինձու հետորութիւն, բաւ պաշտութիւն, կեղծիք ու հոսհոսութիւն, պատեհապաշտութիւն, քանակագիտութիւն և ալլապէս անփառունակ ուրիշ առաքինութիւններ, Պարոնեան, Հրանդ մարդեր են որոնց գործէն մեր ներքը կ'արթննայ հակադիր տրամադրութիւն: Ձէք կրնար որոշ հպարտութեամբ մը չհամակուիլ երբ կը գտնէք ձեր դէմ պատկերը անօթի տոմարակալին որ չզովեց, չսակարկեց, չսողաց,

ու օրուան բոլոր ջոջերէն համարձակեցաւ պատուել զիմակաները ու ասոնց ուսերէն ընել մէկզկի գիրքին, գրամին շուրջառնելը: Գրականութիւնը բարոյականի բեմ մը է: Համաձայն եմ: Մարգրիկ կ'արժեն իրենց արուեստովը: Համաձայն եմ: Արուեստի գործին մէջ իրականութիւնը առաջնակարգ յատկութիւն մըն է: Դարձեալ կ'ընդունիմ: Բայց չեմ ընդունիր որ այդ բարիքները օգտագործուին ճիշդ իրենց ներհակ նկարագիրներու ապացուցումին: Սուրէն Պարթեւեանն ալ հարուածեց. բայց ժուժ մը հացը բաւ էր յաճախ այդ ահարկու գրիչը զանուակի վերածելու:

Ողջամիտ էր, թեթեւներու, երազատեաներու, յաւակնոտներու, իւրոփիսնեւրու կայսրութեան օրերուն: Տեսաւ փառքերը իրաւ քերթողներուն ինչպէս չիրաւ գրողներուն: Դատեց զէպքերը, գիրքերը, փառքերը, համաձայն այդ միջին ողջմտութեան: Չէր կարելի զինքը կաշառել: Ու անոր տաղանդին ամենէն ուժով շրջանին (1870-1890) մեր հանրային կեանքը կը պարզէր իրարմէ խեղճ տրամութիւններ: Մարգրիկ գտան միջոցը, ինչպէս վերը ըսի, Սուրէն Պարթեւեանը արժեզրկելու, Արփիարեանը չէզոքացնելու, Օտեանը վարելու իրենց ուղած ճամբաներէն: Պարոնեան հէքեաթը յօրինեց իր անկաշառկութեան: Ու հէքեաթներուն զիծը երբեմն տասը հեղ կը գլէ իրականութիւնը: Պարոնեան պիտի վճարէ զինք, պատանութենէն իսկ սկսելով ու պիտի պատուէ իր մուրհակը Ազգային Հիւանդանոցին մէջ, իր զաւակներուն ցաւազար մարմիններուն բեռան տակ: Մերժեմ էր կողմնակի ամէն նպատակ, աջակցութիւն որոնք կաշառքին ազնուական անունները եղան: Պահեց իր պարզութիւնը, աղքատութիւնը, ազատութիւնը: Բաց էր անոր ճակատը, արի էր անոր կեցուածքը, անողոք էր անոր հարուածը հանրային կեանքը յուզող բոլոր հարցերուն մէջ: Ու սարսափ էր անոր անունը, հասարակաց ու ըզզեանող, պալլայով պարուրուած փաշաներէն մինչեւ թաղային վարժարանի մը սմտեղուկ բայց այնքան բարձրավիզ ու աքաղաղ հոգաբարձութիւն համար: Ու այդ սարսափը ուժ մըն էր, սփոփանք մը, սաստմը նոյն ատեն: Հին օրերու տրիբունը յիշեցնող սա հանգամանքը սա գրողէն մի

արհամարհէք: Մարգրիկ կը սոսկային Պարոնեանի գրիչին տակ ինչպէս, մինչ կը վարձատրէին Օտեանը զիրենք հեղանա՞ծ ըլլալուն համար: Խօսեցայ ձեզի զինքն: Այդ զինով էր որ անկաւ լման քառորդ դար մը, միս մինակը — օ՛ ստորնութիւնը գրական փաղանգներուն — զիմաւորեց վարպետ, ըզգուշաւոր, անվրէպ հաւածանքը: Այսօրուան սերունդը հաղորդ էէ այս անբարոյութեան ծանրութեան: Բայց իր աչքին տակն ալ զէպքերը կը դասաւորուին երբեմն մէկ ու նոյն ճարտարապետութեամբ: Չեմ լայննար մտածումին ետեւէն: . . . Պարոնեան հաշուի չառաւ անշուշտ զապալը, զաղտ, կոնակէն կատարուած այն խուլ բայց անվրէպ դաւադրութիւնը, երբեմն ուղղակի յարձակումի, երբեմն բացարձակ լուծեան կերպարանքներով, որոնք գրողի մը համբերատարութիւնը կը սպառեն, զայն մղելով իր գրիչը կոտորելու վճիռին անգամ: Մենք մագիստրոսներ ենք մեր իրաւ արժէքները հարուածելու, տապալելու անարգ խաչակրութեան մէջ ու զմայլելի հոգիաներ՝ մեր չիրաւ արժէքները փառապսակ աստուածացնելու մէջ:

Եակոբ Պարոնեան խղճմտանքի փաստ մը իբրեւ, մուծ ու անօթի, ճառագայթեց, իր շրջանին անկուսներուն վերեւ, նուազուն խորհրդանշան մը արդարութեան զգայաբանքէ մը, հիմնովին անարդար հասարակութեան մը մէջ: Ըսի՞ թէ կը զոդար անկէ մեր քաղքենին: Մօտ քառորդ դար, ազգին վերնագոյն խաւերը ուրիշ ուժ մը չը գտան զիրենք ըմբերանող: Աշխարհի Զօլէրը քրոնիկներու վերտառութիւն մը էէ, այլ իրաւ, լայն, յուզումնահար ապրումներու հանգէս մը: Այդ ջոջերը, այնքան վարպետ, փորձ, ունայնամիտ, սոստանորդի կոմ անկէլա, կը կազմէին այն ընտրանին որ Զարթօնքի ճիգէն կրած էր որոշ բարեփոխում: Տէրոյնեց մը ամիրայ մը չէր 1870ին, բայց էր այդ ամիրան քառորդ դար առաջ: Պարոնեանի գրչին տակ այդ մարդը իր երկու կերպարանքներն ալ կը գտնէր նկարահանուած: Քիչ են անշուշտ 1850ը կանխող տիպարներէն սեւեռութեան, այն պարզ պատճառով որ կեանքը մարտած էր այդ ամիրայութիւնները: Բայց որքան թարմ, շատ՝ այդ դասակարգին յաջորդ միւսները, ընդհանրապէս գրօց-բրօց, լրա-

գրող, պաշտօնատար, աւագ եկեղեցական, գրագէտ որոնք կը փոխարինեն մեր աւագանին, ասոր կարգ մը բնագոյնները իրենց մէջ կը յաւերժեն, ու չեն վախճար նոյնիսկ Աստուծոյ, որ հեռուն է, բայց հաշուի կ'առնեն էտիրենցին որ մօտիկն է, մէջերինն է ու գիտէ զիրենք իրենց յիմարութեանցը նաւերուն վրայ առագաստարձակ: Մեր ջորջերը, այս նոր կարգէն, քրիկ քրիկ բըզկտուած են ժողովուրդի անօթի սա զակէն: Ուրիշ, Բայց ամբողջ այդ Պոլիսը, Մեր ժողովուրդը մինակ մութ, պարզ, անցոյց առաքինութիւններու գումար չէր անշուշտ: Անոր տղի կողմէրը, Բայց որքան առատ, սրտաբեկիչ չէնքով մը: Դադարակայաններուն նկարագիրն է սա անկայունութիւնը: Ակնցին քանի մը պօրտ Ակնցի է տակաւին այդ Պոլիսին մէջ ուր միջավայրի համեմատական ազատութիւնը կ'արձակէ զսպուած բնագոյններուն արմատները: Բազմաքաղաքացի հոգեբանութիւնն ալ մի մօտեմք: 1900ին Պոլիսը գոց է գաւառէն գաղթողներուն ու 1910ի Օսմանի հեգնութիւնը հասարակութեան մը տակաւքովը անկարող սնանելու, ստիպուած է մասնակի, բացառիկ ապրումներու վրայ ինքզինքը խառնել: Փաշաւէն, իրաւ, բայց այնքան քիչ է իրրե քանակ, որ հազիւ թէ կը պատկանի մեր բարքերուն, ինչպէս Ծապլավարի բէսերը, խեւերը, տէրտէրները, ընկերահիները՝ այնքան օտարօտի մեր ժողովուրդի ընդհանուր միջինին: Պարոնեանին Մէշ-պաշ-Մաշ-պաշ-բարիքովն են պաշտպանուած ուղղակի մեր կեանքէն բխումներ ըլլալու: Անոր առնինն տեսնուցներ անմահ շտեմարան՝ մեր բարքերուն: Ու թեթեւութիւնը մեր կրններուն, այնքան ակնբախ, գաւառական ծանր պայմաններու տակ իր զգայնութիւնը հիւսած տոմարակալին ամէն բան զիտող, որսացող աշուրներուն: Կ'ուզէ՞ք տակաւին որ դալիմ այն հարիւրաւոր փոքրութիւններուն որոնք, իրրե փարթամ կեանքի օրինակներ, կ'աճէին անոր շուրջը, երջանիկ, անարգել, խմելով իրենց ժողովուրդին կենսունակութիւնը, անահ որքան անպատիւ. — ազգասիրութիւնը, ապսպրուած, բռնի նոյնիսկ, մեր վարչական բազմազանակ մարմիններուն, սահմանադրութեամբ նոր թափուած գրամներու նման ունայն ու չլացիկ: Պա-

րոնեան ծիծաղելի չէ ըրած թաղականը կամ ասոր կնիկը, այլ այդ մտայնութիւնը, ազգին ծագայող սնափառութեան, առաջին անգամ ենթարկած է կասկածի: Պարոնեան Մէշ-էն վերջ, Թաքաշին մէջ (1874) ինքզինքը գիտէ տիրական, իրեն պարզուած ընդարձակ սաղմարչաւին մէջ ուր գուպարը կայ մեր բոլոր յիմարութիւններուն: Ռուսինեան մը, Մերենց մը, Զօրայեան մը Եւրոպայէն դարձին լինչ խոսովքներով իջան կրկէսը իրենց ժողովուրդին սպասին, իրենց մտադրութեանց իրադրուածին: Յուզիլ են այս պատկերները, տակաւին մինչև այսօր, դար մը վերջը նոյնիսկ, պատրաստուած այդ երիտասարդութենէն: Թաքաշ խմբագրող էտիրենցի վրիպած դեղագործը, վարժապետը քանդակող տարեկան է: Տարիքը տաղանդին համար չունի այն նշանակութիւնը զոր ունի գրագէտին համար: Տարիքը կիրքն է, տաքութիւնն է, առքն է որոնք վաւերական տուրքերն են ամէն ծնած և ոչ թէ կազմուած (կտիկ կտիկ) գրագէտի: Ահա թէ ինչու այդ քսանամենի ըստեւու չափ վաղատի մարդը մէկէն կը սարսէ մեր հասարակութեան խղճմտանքը: Ոչ Սորպոն, ոչ ալ Տորբազ: Անշուշտ, Բայց մանաւանդ ծնունդին բարիքը և հաւանաբար բժիշկ Քեաթիպեանին մատենադարանը: Բայց ամենէն աւելի իր դալիլի աչքերը, ողջամիտ մտածողութիւնը ու ազնուական, *peuple* խառնուածքը: Հիմա գրէք այս պարզ երիտասարդին զիմաց կասուցերը, գայլերը, աղուեսները, առիւծները (այս որակումներուն ետին դուք գրէք մեր խմբագիրները: Ազուէսը Իւթիւհեանն է. կատուն՝ Փաշ ազգօգուտ լրագիրի տէր և տնօրէն Համբարձում Ալանեանեանը. գայլը՝ եօթանասնական թուականներու կորովի խմբագիր Կ. Փանոսեանը) ու շրջանին բոլոր մեծ ու պղտիկ յաւակնութիւնները (Եղիան, Զերազը, Թէրզեանը, Պէրպէրեանը, Նար-Պէյը) որոնց սնուցումը այդ օրերուն միայն մեղքը չկազմեց այլև մեր օրերուն ալ շարունակեց իրենց մեղքութիւնը պարտադրել մեզի: Պարոնեան ունէ՞ր գէթ գրական անհրաժեշտ գարգացումը, հակակշռու չափ մուսաններէն չփացուած այդ համբաւներուն տիրական փառքը: Բացի Մամուրեանէն, որուն հանդէպ յարգանքի իր զգացումը դժուար չէ բացատրել, միւս

բոլոր գրողները ենթակայ են իր ծաղրին, սուր, իրաւ, արխնող։ Ու կան բազմաթիւ սակ տկարութիւնները մեր եկեղեցականներուն, երեսփոխաններուն, ջոջերուն որոնց պորտաբոյժ փառքերը անիկա աճուրդի կը հանէր միշտ այդ Թաքաշին մէջ։ Ելով Սյսքան կ'ըլլար Պարոնեան ոչ միայն ձայն մը, ուժ մը, խղճմանք մը, սարսափ մը, այլև գեղեցկութիւն մըն է, ժողովրդակա-նութիւն մը, փառք մը, հիւսուած՝ տարբեր տարրերէ։ Ըսել կ'ուզեմ ոչ՝ թատրոններով, ճառերով, քերթածներով, վարժա-րաններով որոնց վրայէն փառքին գային մեր Ռումանթիքները և Պարոնեանին ըն-կերները։ Ոչ ալ այն միւս փառքը զոր 1910ին մենք ճարեցինք Երուսաղ Ստեանի տոբագրութեան, Սուրէն Պարթեւեանին իւրային տաղանդին կամ Արշակ Զօգան-եանին ընդարձակ աշխատանքին։ Յակոբ Պարոնեան ծաղրելով, մերկացնելով ըրաւ իր փառքին կտաւը։ Արի էր ու պարկեշտ։ Չեմ կրնար իմ հիացումը սակարկել սա պարզ սրակումները արգարացնող քանը-հինգ տարիներու ողբերգական փաստերուն, որ անոր կեանքը եղաւ, մինչև Ազգային Հիւանդանոցի մահաբեմը։ Ու կ'ընեմ մեր-ձեցումներ, աւելի յստակ բացատրելու հա-մար տարողութիւնը իմ գնահատումին։ Սու-րէն Պարթեւեան, Բաշտաշին մէջ աւելի անգութ է անշուշտ երբ կը խարանէ գրեթէ նոյն մարդերը, Պարոնեանէն քառորդ դար վերջը։ Բայց զրէք չորս հինգ տարիներու անտօթի Բարիկ մը անոր որովայնին ու դուք պիտի ունենաք այդ չար, դաժան ոճին հիւ, գառնուկ սպասը ձեր ուղած հարցին համար մշտապատրաստ։ 1914ին, իր փորին սպասովը միայն մտահոգ, անիկա պիտի չվարանի, Եփեսոսայ իր Տաքեշներուն մէջ հասարակութիւններ, գրեթէ ոչնչութիւն-ներ պակազարդելու, դերձակներ, նոյն իսկ նպարաւաճառներ ազգային դէմքերու փառքին բարձրացնելու, իր գիրքը վաճա-ռելու անպատում տկարամտութեան մը ենթակայ։ Սուրէն Պարթեւեան, այս գինով ու ճամբաներով պիտի ապրի իր ներսէն յարգարուն, անդաման ողբերգութիւնը, բռնի, ձրի, այս ժողովուրդին կոնակին, մակարութեան իսկ ազգային պարտա-կանութեան վերածնելով։ Մեծապատիւ մու-րացկանները գերազանցեալ էին քանի մը

պատիկ։ իր անձին օրինակին մէջ։ Սուրէն Պարթեւեանի թերթերը, որոնք կը հիմնուէին իր բարեկամներուն նպատակով, պիտի կոր-ծանէր, իր փորին ու կիրքին կարիքնե-րովը։ Թաքաշը երեք հարիւր բաժանորդ ունէր։ Խէչ-բը՝ անկէ պակաս։ Երկու քա-ղաքի մէջ, Գահիրէ և Աղեքսանդրիա, Սու-րէն Պարթեւեան կը վաճառէր հազարական օրինակ իր Տաքեշներէն։ Սյս թուարանու-թիւնը զուր ցոյց մը չէ հոս։ Պոլսը և Թիֆ-լիսը, երկու հայերը այսինքն, Պարոնեա-նին հանդէսներուն աւազանները եղան որ-պէսզի կենսատու ջուրին թելիկը չհասնէր մինչև խմբագրին տունը։ Բայց խորհած ունի՞ր արդեօք թէ ինչ աւելի դիւրին պիտի ըլլար Պարոնեանին համար, քան շահագոր-ծել իր նիւթական անձկութիւնը, երբ իրրեւ տոմարակալ, զիւանսպետ, քարտուղար, խմբագիր մուտք ունէր ազգային բոլոր շրջանակներուն մէջ։ Յետոյ, պարզ մարդ էր, չուկացիին հետ խօսելու մէջ ոչ մէկ նեղութիւն զգացող։ Ու մինչ իր շուրջը հասնանները, մեծապատիւ մուրացկանները այնքան կենդանի քաջագործութիւններով կերպը կը գտնէին սեղին, մեղրին մէջ ապ-րելու, ապրեցնելու իրենց զաւակները» (Երանելի ազգային սափիւր՝ որ պուրս կը ջանայ ճարել իր աղուն), ի՞նչ կ'ընէր ին-քը, տետրակ բռնելէն իր առած ճիւղճ դու-մարները։ Դուք անձանտ չէք սա սարսա-փին։ Աչքիս առջև կուգայ, այնքան շուկան, այնքան ապարարոյ, այնքան չուկան, հեղինակն էր անկարելի հաւասարակշու-թեանց, իր աշխատանքի եռոտանիւն իւրա-քանչիւր ոտքը գետեղած մահու չափ իրա-րու հակառակորդ պիւրոններու մէջ կուտակ-ցութեանց, օրուան երեք մեծ պահերուն, առաւ, կէսօր, իրկուն, հրամցնելու հա-մար այդ մարդոց իրենց ուղածը, ամէնը, այսինքն եղածը չեղածը պատառ մը կիր-քէն, կեանքէն 1910ի մարդոց։ Այդ գինով էր որ Փաշաշին հեղինակը ապրեցաւ ա-րեւելեան իշխանի մը, պորտաբոյժի մը փարթամութիւններովն ու գեղտութիւննե-րովը, աշխատանքէն ու գինովութեանէն — մինչև կէս գիշերը անց անիկա կը թափա-ռէր գինեատուն գինատուն — ատեն չկրնա-լով գտնել իր գործը հասցնելու։ Հիմա, փոխադրուեցէք ձեր մտքովը Պարոնեանի

պայմաններուն: Դրէք զայն իր խեղճ ու պատառ, անօթի պիւտճէին ներսը զոր մազազայի ջոջերուն քմահաճոյքը իր կարգին կ'ընէր աւելի քան անկայուն, քանի որ աշխատանքը չէր որ կը վարձատրուէր, այլ ողորմութիւնը կը ներկուէր, ու ըսէք ինծի թէ իր առթած անհուն պատկառանքովը այդ մարդը ինչ չէր կրնար առնել այդ հարուստներուն, ունայնամիտներուն երկկողման քսակներէն, մեղքերէն . . . Պարոնեան վեր մնաց բոլոր այս տրտմութիւններէն, փոքրութիւններէն: Ոչ հակառակէն քրմացում: Ոչ շանրամ: Ոչ սողոսկուն թափանցում: Մի ըսէք ինծի թէ այս յատկութիւնները, առաքինութիւնները նոյն իսկ ինչ գործ կրնան ունենալ զրազէտի մը յօրինման մէջ. թէ գործը և գործաւորը տարբեր հարցեր են. թէ եայլն եայլն: Բանաստեղծ մը չէ որ կը յօրինեմ որուն ապրումներուն իրաւութիւնը, անխարդախ պատկերը պիտի բաւէին իր դէմքը մեզի պարտադրելու: Յակոբ Պարոնեան վիպասան մըն ալ չէ որուն գործը մեզ կը շահագրգռէ բայց անձը մեզի կը մնայ օտար, անտարբեր: Երգիծանքը զրական հոպտանք մը չէր Պարոնեանի գրած օրերուն, ամբոխները դուարձացնելու դերով մը միայն պայմանաւոր: Ըսի թէ Պարոնեան այդ դերը որքան ծանրաբեռնած էր իրաւով, արդարով: Յետոյ, Պարոնեանի գործը միայն հաւաքական պարսաւը չէ մեր բարքերուն, կանխող դարու կէսերէն: Անիկա է նոյն ատեն բարոյական sanction մը: Անիրաւունքներուն յոյսը: Պարոնեանի ո՛չ գեղեցիկ նախադասութիւնները, ո՛չ ալ ողորկ ֆրագները պիտի պաշտպանէին իր անունը ապագային առջև: Իրմէն մեզի գալիք խորհրդանշանը զրական անկախութեան, հասարակական արիւթեան, անկաշառ խօսքին ու անվախ հեգնանքին համախառնուող փաստն էր ըլլալու: Անոր գործը այդ խորհրդանշանը կ'արժեւորէ այսօր մեր գրողներէն ոչ ոքին վիճակուած պայծառութեամբ մը:

Յ. ՕՇԱԿԱՆ

ՊԵՏՐԱ-ԲԱՆԵՍԻՐԵԿԱՆ

ՊԱՊ ԱՐԾԱԿՈՒՆԻ

Յետոյ, ուրիշ ժամանակակից մը, Ար. Աթանասիոս, Ուղղափառ Եկեղեցւոյ մեծագոյն դէմքը Զորրորդ դարուն, իր Պատմութիւն Արիոսեաններու գործին մէջ Կոստանդինոս կայսեր դէմ գրած կծու քննադատութեան մէջ կը գրէ. «Յետոյ նաև ան (Կոստանդինոս) իր եղբոր (Կոստան) հանդէպ ալ անսուրբ վերաբերում ցոյց տուաւ. և այժմ անոր դամբարան կառուցանելու կ'ըլլէ, թէև բարբարոսներու յանձնած էր անոր նշանածը՝ Օլիմբիան, որ իր եղբայրը այնքան պաշտպանած էր մինչև իր մահը, և զայն խնամած ու մեծցուցած որպէս իր ապագայ թագունին»⁽⁵⁾:

Ուղղափառեան Աթանասիոս, որ այնքան կ'ատէր Արիոսեան Կոստանդինոս կայսրը, միթէ առիթը պիտի փախցնէ՞ր աւելի խիտ բռնելով խարանելու կայսրը որ գեղեցիկ իշխանունին բարբարոսներուն յանձնեց անոնց կողմէ վայրագօրէն սպանուելու համար: Ամմիանոս թերևս լուռ կրնար անցնիլ, բայց ոչ Աթանասիոս, եթէ իրապէս նման ոճի մը գործուած ըլլար:

Ապա ունինք ուրիշ ժամանակակից մեծ եկեղեցականի, Բարսեղ Կեսարացիի, հարիւրաւոր նամակները, որոնցմէ քանի հատը Հայաստանի մասին է: Ան մօտէն շփման մէջ էր հայ եկեղեցականներու հետ, անոնց վէճերուն կը միջամտէր: Կը պախարակէ անոնց հաւատքի գործին մէջ ցոյց տուած անփութութիւնը և զարտուղութիւնները: Բարսեղ յիշատակութիւնը պիտի ընէր անլուր ոճի մը, որ գործուած էր եկեղեցականի մը կողմէ⁽⁶⁾:

(5) Athanasius, Ch. 69.

(6) Կը փորձուինք ենթադրել թէ Պրոկոպիոս պատմիչը, որ փաւստոսի յունագիր պատմութիւնը կարդացած է, և անկէ առնելով կը պատմէ Արշակ Թագաւորի կալանաւորման և մահուան յուզիչ դրուագը, պիտի յիշէր նաև Արշակի առաջին թագունին ողբերգական վախճանը, եթէ այդ կարգացած ըլլար իր ունեցած փաւստոսի օրինակին մէջ: Հաւանաբար փաւստոսի իսկական

Թագուհիի թունաւորման պատմութիւնը բոլորովին զուրկ է վաւերականութենէ, և պէտք է մերժուի, ինչպէս այժմ գերթէ բոլոր բանասէրներ կը մերժեն Ներսէս կաթողիկոսի թունաւորման պատմութիւնը, յիշուած Փաւստոսէն, և կրկնուած իրմէ վերջ եկողներէն:

Կարճ կապելով մեր ըսելիքը Օլիմբիայի մասին, կ'եզրակացնենք թէ, եթէ ան բնական մահով 'չմեռաւ, ուրեմն իր դեռատի Պապ զաւկին հետ, 360 թուականին, կը հեռանայ Հայաստանէն՝ իր բնակութիւնը հաստատելու Կոստանդնուպոլսոյ մէջ:

Արշակ, այլեւս ազատ կրկին ամուսնանալու, Փառանձեմը ընտրեց որպէս յաջորդ թագուհի Հայաստանի: Գեղեցիկ օրբեայրիին դժկամակութիւնը տեղի տուաւ իր փառասէր հօր՝ Անդովկ Սիւնիի ստիպումներուն առաջ, և Արշակի խոստումներուն:

Հաւանաբար Անդովկ իշխան, Արշակի Բիւզանդական քաղաքականութեան ջերմ ջատագովներէն մին, մեծ դեր ունեցած ըլլալու էր իր դուստրը համոզելու, որ թագաւորի այս բացառիկ զնահատանքին կ'արժանանար: Այս վարձատրութեան համար արիւն թափել հարկ պիտի ըլլար: Բայց այդ սպանութիւնն ալ արքայի հակապարսիկ տրամադրութեան մէկ փուլը կրնար համարուիլ, որով Արշակ մէկ քարով երկու թռչուն զարկած կ'ըլլար:

Վաղինակ Սիւնին, տոհմին նահապետը, Շապուհ թագաւորի բարեկամն էր, և անոր ստիպմամբ Հայաստանի արեւելեան բանակի հրամանատար:

Արշակ, փառատենջիկ Անդովկը վարձատրեց Վաղինակը մահուան դատապարտելով, և անոր պաշտօնները յանձնելով Անդովկին⁽¹⁾:

Իր ամուսնական այս ձեռնարկին մէջ, սակայն, Արշակ հաշուի չէր առած Ներսէս կաթողիկոսը: Թերեւս մտքէն իսկ չանցուց Հայրապետի պարագան, նկատելով որ, առերեսոյթս, ըրածին մէջ ապօրինի բան մը չկար:

Մինչդեռ Ներսէս իր կարգին թագաւորին քայլը համարեց ամենամաքաւիշտ արարք մը:

պատմութեան հայ խմբագիրն է, որ իր կողմէ ներմուծումներ ըրած է, գոհացնելու իր կուսակցամուտ տեսակետները:

(1) Խորենացի, Գ. 24:

Կաթողիկոսութեան սկիզբին, իր հրաւերով կայացած Աշտիշատի ժողովին կանոններէն գլխաւոր մէկը ամուսնական խառնակութիւններու վերացման համար էր: Ներսէս ինքը, բարոյական բարձր սկզբունքներէ մղուած, յոյժ կարեւորութիւն կուտար այս հարցին, և շարունակ կը խօսէր և կը խրատէր, որ մարդիկ ամուսնութեան մէջ օրինաւոր ըլլան, որ ամուսնացածները իրար չխաբեն, իրարու զէմ դաւ չսարքեն, հեռու մնան ազգակցական մերձաւոր խառնակ ամուսնութիւններէն, մանաւանդ հարստիւ հետ մերձաւոր ամուսնութիւնէն⁽²⁾:

Ներսէս կաթողիկոս պարզապէս սարսափեցաւ Արշակի մտադրած ամուսնութենէն: Իր հաստատած կանոնին չարաչար և անամօթ բռնաբարութիւնն էր ըլլալիքը: Փառանձեմ Արշակի եղբորորդւոյն այրին էր, ըսել է թագաւորին հարսը: Արշակ սպանել տուած էր Փառանձեմի ամուսինը: Ո՞ր գիտէ, թերեւս 'Կնելի զէմ մահով ճիւղ որքան քաղաքական պատճառով, նոյնքան ալ անոր հարսին տիրանալու ամբարիշտ խորհրդով եղած ըլլար:

Հայրապետը յիրաւի կը վախնար որ Արշակի այս արարքը չար օրինակ պիտի ծառայէ շատ շատերու, և անոնք կրկին պիտի դառնան հեթանոսական կարգ մը յոռի բարքերուն, որոնց զէմ այնքան սասուկութեամբ կը մաքառէր կաթողիկոսը և անոր կազմակերպած եկեղեցական պաշտօնէութիւնը: Որքան համաճարակային արագութեամբ ժողովուրդը կը փորձուէր — կամ կը սիրէր — հետեիլ արքայական օրինակին: Տիրան թագաւորի օրով արքունիքը յօժարակամ անձնատուր եղած էր հեթանոսական զեղխութեանց, և բնակչութեան մեծամասնութիւնը շտապեր էր նմանիլ իր իշխաններուն և ընդօրինակել իրենց վարքն ու բարքը:

Ներսէս բացարձակապէս հակառակեցաւ Արշակի ամուսնութեան Փառանձեմի հետ, հռչակելով նման արարք յանցապարտ մեղանչում քրիստոնէական սկզբունքներու զէմ: Որպէս կաթողիկոս մերժեց իր հաւանութիւնը, եթէ այդ ուղուած էր: Մերժեց օրհնել պսակը, եթէ թագաւորը պնդէր:

Արշակ զայրացաւ իր հօրաքրոջ որդւոյն

(2) Փաւստոս, Դ. 4:

այս «ապստամբական» ժեստին դէմ: Համարեց այդ անարդարանալի միջամտութիւն մը, որ իր արքայական վարկը և հեղինակութիւնը խաթարելէ ուրիշ նպատակի չէր ծառայէր: Թագաւորը գերիշխան էր: Լաւ կ'ըլլայ որ Ներսէս յիշէր իր մեծ հօր Յուսիկ կաթողիկոսի պարագան: Ան ալ փորձեց Տիրան թագաւորի դէմ ծառանալ, և կեանքովը վճարեց իր յախուռն փորձին համար:

Այլևս այս ամուսնութեան հարցը Արքայի և Հայրապետի իւրաքանչիւրի իրաւասութեան և զօրութեան փորձադատը եղաւ: Երկուստեք անտեղիտալի յամառութիւնը ալ աւելի լայնցուց խրամատը, որ յանկարծ բացուած էր երկու Արշակունիներու միջև:

Արշականդղղուելի մնաց: Ներսէս կաթողիկոս սպառնաց հրաժարիլ իր պաշտօնէն:

Արշակ ամուսնացաւ Փառանձեմի հետ: Կաթողիկոսը հրաժարեցաւ:

Վէճը, քնականաբար, արձագանգ դտաւ եպիսկոպոսական դասու մէջ: Եպիսկոպոսներու Զախճախիչ մեծամասնութիւնը Ներսէսի կողմը բռնեցին:

Արշակ, սակայն, յամառ կռուող էր:

Կաթողիկոսական աթոռը թափուր չէր կրնար մնալ պայքարի այդ օրերուն: Թագաւորը պիտի ընտրէր իր մարդը, հոգ չէ թէ Ներսէսեաններ ընդդիմանային:

Արշակ իր համակիրներէն Չունակ եպիսկոպոսը Ներսէսի յաջորդ ընտրեց: Սակայն անոր օժման հարցը անյաղթելի դժուարութեան պիտի բախէր:

Ըստ ընկալեալ սովորութեան, Չունակ պէտք է երթար Կապադովկիա և Կեսարիոյ Մետրոպոլիտէն ձեռնադրուէր որպէս Հայաստանի Կաթողիկոս: Ընտրելին, ըստ օժման կանոնադրութեան, պէտք էր յանձնարարական նամակներ ունենար Բիւզանդական Հայաստանի (Փոքր Հայքի) եպիսկոպոսներէն: Առանց այդ յանձնարարականներու Կեսարիոյ Եպիսկոպոսապետը ինքզինքը իրաւասու չէր համարեր օծում կատարելու:

Արշակ գիտէր որ իր կողմէ ունէ փորձ Չունակը օժման համար Կեսարիա զրկելու պիտի ձախողէր Ներսէսեաններու ընդդիմութեան պատճառաւ: Ներսէսի և իր եպիսկոպոսներուն յունասիրութիւնը ըստ բաւականի հզօր ազդակ մըն էր, որ Չունակի

օժման դէմ իրենց բողոքին վճռական կշիռ պիտի տար թէ՛ Փոքր Հայքի եպիսկոպոսներու աչքին, և մանաւանդ Կեսարիոյ Եպիսկոպոս Դիանիոսի, որը իր առաջնորդութեան առաջին տարին, 341 կամ 342, թ. ըստ ինքն իսկ երիտասարդ Ներսէսը Հայաստանի Կաթողիկոս օծած էր⁽⁹⁾:

Արշակ չփորձեց Չունակը Կեսարիա զրկել, միևնոյն ատեն ալ չուզեց պարտուած երեւիլ, ուստի հրամայեց հայ եպիսկոպոսներուն որ իրենք ձեռնադրեն և օծեն Չունակը:

Ներսէս կաթողիկոսի հզօր ազդեցութիւնը բարձր հոգևորականութեան վրայ կրնանք եզրակացնել այն իրողութենէն թէ, ո՛չ մէկ եպիսկոպոս յօժարեցաւ հնազանդիլ թագաւորի հրամանին, բացի երկուքէն, Ազնիքի և Կորյուքի եպիսկոպոսները⁽¹⁰⁾, իսկ այդ երկու գաւառներն ալ, ինչպէս կը տեսնէք, Հայաստանի հարաւային ծայրագաւառներն են:

Եթէ Արշակ մինչև այդ յոտակ գաղափար մը չունէր Ներսէսի հեղինակութեան մասին, այժմ գիտակցած ըլլալու էր:

Չունակ, թէև թագաւորի հրամանով կաթողիկոսական գահ բազմած, շատ շատ հակաթոռ կաթողիկոս մը կրնանք նկատել, որ քանի մը տարի այդ անուսով շարունակելէ վերջ, երբ քաղաքական պայմաններու հարկադրանքի տակ Արշակ Ներսէսի հետ հաշտուեցաւ, ինչպէս կը տեսնենք իր տեղին, այլևս Չունակի անունը չյիշուիր:

Հայրապետական աթոռի շուրջ ստեղծուած այս տագնապի մասին լուռ են մեր աղբիւրները, զգալ տալով թէ Ներսէսի

(9) Փաւստոս Ներսէսը ձեռնադրուած ցոյց կուտայ Կեսարիոյ Եւսեբիոս արքեպիսկոպոսէն: Եւսեբիոս Կեսարիոյ թեմին ընտրուեցաւ 362 թուականին, երբ արդէն Ներսէս տարիներէ Վեր կաթողիկոսական աթոռը պահելէ վերջ հրաժարած էր: Դիանիոս քսան տարի Կեսարիոյ առաջնորդութիւնը վարեց (341? - 361?):

(10) Փաւստոս, Դ. 15: Չունակ անունը հաւանաբար Շահակ կամ Սահակ է, որ ձեռնադրական ընդօրինակութեամբ տառաւորալի պատճառաւ Չունակ եղած ըլլայ: 363ի աշնան Անտիոքի մէջ Յովնանոս կայսեր Ներկայացուած Հաւատքի Թուղթին տակ ստորագրող եպիսկոպոսներու մէջ կը գտնենք Սահակ, Մեծ Հայաստանի եպիսկոպոս, որ կրնայ Չունակը եղած ըլլալ (Socrates, III, 25):

հրաժարումով և Չունակի ընտրութեամբ խաղաղութիւն տիրեց: Կը փորձուինք ենթադրել թէ այս երևութական խաղաղութիւնը, արտաքին ղէպքերու ստիպման տակ, նախ թագաւորի և ապա Ներսէսի կողմէ, հարկադրեալ ակամայ լռութեան արդիւնք կրնար ըլլալ:

Կոստանդինոս կայսր Անտիոք կը գտնուէր 360—361ին, զբաղուած պատերազմական պատրաստութիւններով Շապուհի դէմ:

Որովհետեւ Շապուհ նախորդ տարուայ ընթացքին քանի մը անգամ պարտութեան մատնեւ էր Բիւզանդական բանակները, Արշակ թագաւորի ջերմ բիւզանդասիրութիւնը եթէ պաղած չէր, գոնէ զգուշութեան կը մղէր Հայ արքան, տեսակ մը բարեացակամ չէզոքութիւն, չըլլայ որ սխալ կողմը վերջնական յաղթանակ չահելով իր քիթը արիւնի:

Կոստանդինոս ալ, իր անբուժելի կասկածամտութենէ տուայտող, հակառակ Արշակի հետ Կապադովկիոյ մէջ ունեցած անձնական տեսակցութեան, դարձեալ յարմար կը դատէր մեծարժէք նուէրներ և զոհարարող պատմուճաններ զրկել ո՛չ մինակ Արշակին, այլ նաև Վրաստանի թագաւոր Միհրանին (Meribanes)⁽¹¹⁾, որպէս յուշարար դիւանագիտական փխրուն բարեկամութեան մը, որ թիւէ կախուած է:

Իսկ Ներսէսի պարագային, Կոստանդինոս կայսր յանկարծական մահը, ու երիտասարդ Յուլիանոսի հսկայ կայսրութեան միահեծան տէր դառնալը, զգաստացուցիչ ազդեցութիւն պիտի ունենար:

Յուլիանոս քրիստոնեայ հաւատքը մէկդի չպրտած էր քսան տարեկանին, և ընդունած հեթանոս կրօնը: Յուլիանոս, քրիստոնեայ պատմիչներէ Ուրացող կոչուած, Եկեղեցւոյ առաջնորդներուն, ընդ որս և Ներսէսի, մտատանջութիւն պիտի պատճառէր: Բիւզանդասէր Ներսէս սպասողական քաղաքականութիւն մը որդեգրած կրնար ըլլալ, և որոշած ասպարէզէ քաշուած մնալ՝ տեսնելու թէ Պարսկա-Բիւզանդական մեծ պատերազմը ո՛ւր կրնայ յանգիլ, և Քրիստոսի թշնամի կայսրը ի՞նչ փորձանքներ կրնար յարուցանել: Ու երեւակայել թէ անօրէնը դեռ երիտասարդ էր,

հազիւ 29 տարեկան, և ո՞վ գիտէ ի՞նչ երկարատեւ աղէտներու շարք մը պիտի հարուածէր քրիստոնեայ եկեղեցին:

Դէպքերը պիտի գահավիժէին, և երկիւղազգու ամպրոպը, որ սկսած էր հորիզոնէ հորիզոն իր մուկ սարսափը տարածել, դեռ չպայթած պիտի չքանար:

2. ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սիւրիոյ զեղիւ և փարթամ մայրաքաղաք Անտիոքի մէջ ժամանակաւոր բնակութիւն հաստատած Կոստանդինոս կայսրը մեծ մտատանջութեան մէջ էր:

Մէկ կողմէ Շապուհ թագաւորի սպանալիքը, որ թէև վերջին երկու տարիներու մէջ չահած զինուորական յաջողութիւններէն յետոյ, այժմ 361 թուականին, քաշուած էր իր երկիրը, բայց քաղաքական կացութիւնը, ոչ պաշտօնական խաղաղութիւն էր, ոչ իսկ զինադադար, և պարսիկ աղուէսի երևութական լռութիւնը կարելի չէր մեկնարանել որպէս վախճան թշնամութեանց:

Միւս կողմէ, կասկածամիտ կայսեր նախանձը սկսած էր տանջել զինք ի տես իր հօրեղորօրդուոյն Յուլիանոսի Եւրոպայի մէջ ձեռք ձգած յարածուն հռչակին: Դերման բարբարոս ցեղերու դէմ Յուլիանոսի վարած յաջող պատերազմները, ո՛չ մինակ իր համբաւը կը տարածէին, այլ լեզէոններու սիրելին կը դարձնէին զինք: Եթէ Յուլիանոս որոշէր կայսերական գահը ձեռք ձգել, ո՞վ պիտի կրնար զիմադրել: Իր հրամանին տակ, իրեն նուիրուած հաւատարիմ, մարտունակ և փորձառու զինուորներու բանակ մը: Ինքը օժտուած զինուորական տաղանդով, որուն կը վկայէին պարտուած գերմանացիները: Ան ի՞նչ յարգանք կրնար ունենալ անգուլթ, մեծամիտ և սնափառ Կոստանդինոսի որ ջարդարարը եղած էր Յուլիանոսի ընտանիքին անգամներուն, որոնցմէ վերջինը, Կալլոս, Յուլիանոսի եղբայրը, սպանուած էր քանի մը տարի առաջ միենոյն Կոստանդինոսի հրամանով:

Շապուհի դէմ աւելի-հզօր բանակ մը կազմակերպելու նպատակաւ Կոստանդինոս հրաման զրկեց Յուլիանոսին որ Եւրոպայէն

(11) Ammianus, XXI, 6, 8.

օգնական գումարտակներ ղրկէ Փոքր Ասիա։ Ռազմունակ և տոկուն եւրոպական լեզւոններ գերազաս էին Արեւելքի մեղկ և թոյլ կեանքէն վարակուած զինուորներուն։

Կոստանդինոս անակնկալ պատասխան մը ստացաւ իր հրամանին։

Լեզւոնները մերժեցին Արեւելք երթալ, և միաձայնութեամբ ու խանդավառութեամբ Յուլիանոսը կայսր հռչակեցին⁽¹²⁾։

Կոստանդիանոսի աչքին պարսկական վտանգը պահ մը չքացաւ՝ այս նոր հարուածի ցնցումէն։ Այլևս կասկած չկայ որ քաղաքային պատերազմ տեղի պիտի ունենար երկուքին միջև։ Կոստանդինոս որքան կը զղջար որ ատենին, 337ին, սպանել չտուաւ նաև Յուլիանոսը, հինգ տարեկան մանկիկ մը։

Շապուհին հեռանալը Միջագետքէն, չենք զիտեր ի՞նչ պատճառաւ, պատահութիւն՝ տուաւ Կոստանդինոսի, որ ընտրեալ գումարտակներով ձգեց Անտիօքը, մեկնելու Կոստանդնուպոլիս, 361ի վերջերուն։

Կիլիկիա հասնելուն, կայսրը հիւանդացաւ և քիչ վերջ մեռաւ 43 տարեկանին։

Քաղաքային պատերազմի մը չարաչուք ամպը կ'աներեւութանար, և Յուլիանոս կ'ըլլար միահեծան ինքնակալը ամբողջ Հռոմէական Կայսրութեան։

Յանձին այս 29 տարեկան երիտասարդին, կայսերական գահ կը բարձրանար հզօր անհատականութեամբ օժտուած մէկը, բոլորովին հակառակ իր նախորդին։

Կրթուած յոյն ուսուցիչներու կողմէ, մանաւանդ Մարտոնիոս և Մաքսիմոս խմատասէր, որոնք հին կրօնքի սէրը արթնցուցին իր մէջ, այն աստիճան որ քսան տարեկան չեղած, ինչպէս ինք կը գրէ, արդէն հեթանոս հաւատքը ընդունած էր, բոլորովին երես դարձնելով քրիստոնէութեան, որուն հաւատացող Կոստանդինոս այնքան ոճիրներ գործած էր։ Յուլիանոս համոզուած էր որ Մեծն Կոստանդին քրիստոնէութիւնը ընդունած էր լոկ քաղաքական նպատակներով և ոչ թէ այդ՝ հեթանոս կրօնին գերազաս համարելուն համար։

Իր դասական կրթութիւնը տեսակ մը փիլիսոփայական գունաւորում տուին Յուլիանոսի համոզումներուն։ Բարդ խառնը-

ւածք մը։ Ինքնապատահ, սրամիտ, ուսումնական, զինուորական անվիճելի կարողութիւն, խոնարհամիտ՝ երբեմն, հպարտ՝ յաճախ ամբարտաւան գոոգոթեան աստիճանին։

Պատմական երկու անձեր իր հերոսները եղան, և անոնց նմանիլը իր մեծագոյն տենչը։ Մեծն Աղեքսանդր և Մարկոս Աւրելիոս փիլիսոփայ կայսրը։

Աղեքսանդրին նմանելու փափաքը պիտի մղէր զինք Պարսկաստանի դէմ մեծ արշաւանքի մը։ Ինչպէս մեծահռչակ Մակեդոնացին հին Պարսկաստանը խորտակած էր, ինքն ալ պիտի ջախջախէր նորը։

Ան կը զիտակէր Պարսկաստանի վիթխարի զօրութեան, և յայտնի է որ իր միտքը չարչարուէր էր արեւելեան հարցով կամ վտանգով։ Իր հետաքրքրական մէկ հեղինակութեան մէջ, Կեսարենէր վերնագրով, ուր իբր թէ Հռոմէական կայսրներ խնջոյքի մը կը մասնակցին և իրենց զօրծերը վերաքննութեան կ'ենթարկուին, ուր ներկայ է նաև Մեծն Աղեքսանդր, Յուլիանոս Աղեքսանդրի բերանը կը զնէ մեղադրական բառեր կայսրներու ուղղուած։

«Եւ եթէ դուք կը խորհիք թէ Պարսկաստանը յաղթելը չնչին բան է, և կը ծաղրէք այսպիսի փառաւոր յաջողութիւն մը, ըսէք ինծի թէ ինչո՞ւ, երեք հարիւր տարի տեւող պատերազմներէ վերջ, դուք Հռոմայեցիներդ Տիրիսէն անդին փոքրիկ գաւառ մը իսկ չկրցաք գրաւել Պարթևներէն։ Ըսե՛մ թէ ինչու։ Պարսիկներու նետերը կեցուցին ձեզ ... Մինչդեռ ես, տաս տարիէն պակաս ժամանակամիջոցի մէջ, ոչ միևնա՛կ յաղթահարեցի Պարսկաստանը, ալ նաև Հնդկաստանը»⁽¹³⁾։

Եւ այժմ Յուլիանոս, որպէս նոր Աղեքսանդր, հաշուեյարդարի պիտի ենթարկէր Պարսկաստանը։ Այս հաստատ մտադրութեամբ էր, որ խաղաղութեան համար իրեն զիմող պարսիկ զեռպաններուն յոսրտանքով պատասխանած էր թէ ինք անձամբ պիտի գար Տիրիսէն և խօսէր պարսիկ թագաւորին։

Նոր կայսրը քրիստոնէայ եկեղեցիին դէմ վարպետ քաղաքականութիւն մը մշակեց, որուն միակ նպատակն էր քրիստոնէ-

(12) Zosimus, p. 163.

(13) Julian, Vol. 2, p. 387.

ութիւնը վարկարեկել ինպատակ հեթանոսութեան:

Յուլիանոս բացարձակ հալածանք չը սկսուէր քրիստոնեաներու դէմ, ինչպէս Դիոկղեանի անուն կամ Դիոկղես կայսրերը ըրած էին: Ան գիտէր թէ այդ տեսակ կոպիտ և անհաշիւ հալածանք քրիստոնէութեան ալ աւելի տարածուելուն ստատար հանդիսացած էր:

Կայսրը գիտէր նաև թէ Արիոսեան քրիստոնեաներ և Ուղղափառեան քրիստոնեաներ կատաղի պայքար կը մղէին իրարու դէմ: Որ Կոստանդիոս Արիոսեան եղած էր և Ուղղափառեան եպիսկոպոսներ աքսորած և այլապէս հալածանքի ենթարկած: Յուլիանոս փորձով գիտէր թէ «վայրի գազաններ այնքան թշնամի չեն մարդկութեան, որքան մեծամասնութիւնը քրիստոնեաներուն, մէկզմէկու դէմ տածած մահացու ատելութեամբ»⁽¹⁴⁾:

Ան քրիստոնեաներու, առանց բացառութեան, ամենուն պաշտամունքի ազատութիւն տուաւ, այն հաշիւով, որ, ինչպէս Ամմիանոս կ'ըսէ, նման ազատութիւնը աղանդներու վէճերը և կոխերը ալ աւելի պիտի հրահրէր, և ինքը վախ պիտի չունենար միացեալ ճակատով հսկայ զանգուածէ մը:

Համբնք քանի մը հատը իր առած քայլերուն:

Կայսերական հրաման մը հեթանոսական տաճարները վերաբացուած հռչակեց և պահանջեց անոնց կալուածներուն վերադարձուիլը:

Քրիստոնեայ կղերականներ և այրիներ, որոնք քաղաքային վարչութիւններէն թուակ կը ստանային, կը զրկուէին այդ իրաւունքէն, և անոնցմէ կը պահանջուէր նախապէս առածնին ալ ետ վճարել կառավարութեան⁽¹⁵⁾:

Եկեղեցին կը զրկուէր ժառանգութեամբ կալուած ստանալէ, և եկեղեցականներ այլևս կտակներ չէին կրնար պատրաստել, և դատական կարգ մը գործեր պէտք չէ վարէին:

Երիտասարդներու կրթութիւնը պետական հակակղզի ենթարկելու մտքով կայսե-

րական հրամանը, որ 362ի ամրան Անտիոքի մէջ տրուեցաւ, չափազանց ուշադրաւ է: Ան թէև տառացիօրէն չէր արգիլեր քրիստոնեայ ուսուցիչներուն դաստանդիլ, բայց հրամանին գործադրութիւնը ատկէ ուրիշ նպատակ չէր հետապնդեր:

Այս օրէնքի տրամադրութեան համաձայն, ոչ մէկ ուսուցիչ կրնար իր պաշտօնը կիրարկել առանց նախապէս քաղաքային խորհուրդէն վկայական մը ստանալու, որը ստորագրուած պէտք է ըլլար Յուլիանոս կայսրէն: Հասկնալի է որ, եթէ քրիստոնեայ դաստիարակ մը յաջողէր իսկ քաղաքի վարչական մարմնէն ձեռք ձգել վկայական մը, անկարելի է որ յաջողէր կայսեր ստորագրութիւնը ճարել ատոր:

Դադափար մը տալու համար Յուլիանոսի մտածելակերպին, այս համբաւաւոր երկար հրամանագրէն կ'ընդօրինակենք քանի մը հատուած:

«Ծշմարիտ գիտութիւնը կը կայանայ իրաւացի գաղափարներու մէջ, ոչ թէ գրական ճարպիկութիւն: Նոյնիսկ երկրորդական խնդիրներու պարագային մօքի և լեզուի մէջ անհամաձայնութիւն սխալ է: Իսկ մեծ հարցերու մէջ, ինչպիսին է դաստիարակութիւն, միայն խաբեքայ մը և ռառլարան մը պիտի սորվեցնէ մէկ բան՝ մինչ կը մտածէ ուրիշ բան...»

«Հոմերոս, Հեսիոդ, Դեմոստենէս, Հերոդոտոս, Տուկիտիտէս, Իսոկրատէս և Լիսիաս իրենց գիտութիւնը հիմնեցին աստուածներուն վրայ, և իրենք զիրենք Հէրմէսին և Մուսաներուն նուիրուած համարեցին: Ուրեմն հրէշային բան է, որ այն դաստիարակները որ այս գրողները կ'ուսուցանեն, անպատու են անոնց աստուածները: Ես չեմ փափաքիր որ ձեր պաշտօնը պահելու համար ձեր կրօնը փոխէք, բայց ձեզի կուտամ երկընտրանքը, կամ չուսուցանել, կամ եթէ կ'ուզէք ուսուցանել, միաժամանակ ուսուցանել թէ սոյն հեղինակներու և ոչ մէկը յանցաւոր է ամբարըշտութեամբ աստուածներու մասին ունեցած իրենց դաւանանքով: Ուսուցիչները ապրուստ կը ձարեն այս հեղինակներու գրածներով, պէտք չէ քանի մը տրախմալի համար ինքզինքնին ստախոս դարձնեն...»

«Եթէ այս ուսուցիչները սոյն հեղինակները խաւատուն կը համարեն և ա-

(14) Ammianus, XXII, 5, 4.

(15) Sozomen, V, 51.

նոնցմէ փիլիսոփայական սկզբունքներ կը քաղեն, թո՛ղ նմանին անոնց նաեւ կրօնով: Եթէ կը խորհին թէ անոնք սխալ են, թող երթան Դաւիթիացիներու եկեղեցիները և հոն Մատթէոս և Դուգլաս մեկնաբանեն...»⁽¹⁶⁾:


Կայսերական այս կաշկանդիչ տնօրինութիւններու դէմ եկեղեցական առաջնորդները շուարած էին: Եղածը եթէ հին ձևի բացարձակ և արիւնահեղ հայածանքի ընդօրինակութիւնը ըլլար, կրնային «գլխադրել» նահատակուելով, և մարտիրոսներու արիւնով եկեղեցին կ'արգասաւորէր ու հաւատացեալներու խումբը հոգեկան արիւթեամբ զօտեպնդուած կը պահպանէր իր սեղմ կազմակերպութիւնը: Բայց պայքարի լո՛ւն մեթոտ կրնային կիրարկել Յուլիանոսի այս շփոթեցուցիչ օրէնքներուն դէմ:

Շունչերնին բռնած, սպասողական քաղաքականութիւն որդեգրեցին, սրտերնին գողահար, ոչ թէ եղածներուն, այլ ըլլալիքին: Քանզի արքունիքէն և խանդավառ հեթանոս շրջանակներէն արդէն սպառնական շուկներ շրջանառութեան մէջ գրուած էին, ըսելով թէ քրիստոնէութեան դէմ շատ աւելի խիստ միջոցներ պիտի գործադրուէին Յուլիանոսի պարսկական արշաւանքէն յետոյ: Անգամ մը որ պարսիկ սարսափը ջախջախուէր, կայսրը իր ամբողջ ուշադրութիւնը պիտի դարձնէր միանգամ ընդմիջտ վերջացնելու համար քրիստոնէութեան «չարիքը», և անգամ մըն ալ յաղթական տիրապետէին հին աստուածները, որոնք դարերով զօրացուցեր և պահպաներ էին մեծածաւալ Կայսրութիւնը:

ՀՐԱՆԳԻ Ք. ԱՐՄԷՆ

Ծանոթութիւն (14)

(16) Julian, No. 36, Vol. 3, p. 117-123.



ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

Մ Ի Ջ Ն Ա Դ Ա Ր Ե Ա Ն

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

6.

ԵՐԱԺԻՏՏ ՍՏԵՓԱՆՆԱՍ ՍԻՒՆՅԵՑԻ

Աթերորդ դարի առաջին կէսի հայ երաժշտական արուեստի պատմութեան մէջ պատուաւոր տեղ է գրաւում Ստեփաննոս Սիւնեցին, ժամանակի ամենանշանաւոր գիտնականներից մէկը, որ փայլում է միայն որպէս երաժիշտ և հոգևոր երգերի հեղինակ, այլ և հռչակում է իրեն քաջ լեզուագէտ, «խմստասէր», քերականագէտ մատենագիր և «քերթող»: Դարեղին Ա. Կաթողիկոսի «Յիշատակարանք Ջեռագրացի» 54րդ էջում, 712 թուին գրուած ձեռագրի (էջմիածին) յիշատակարանում կարդում ենք. «Եւ վեցհազարերորդի երկերիւրորդի քսաներորդի ամի տարածոց աշխարհիս (այսինքն՝ փրկչական 6220 — 5508 = 712թ.) . . . յերկրորդ ամի թագաւորութեան Փիլիպպոսի, թարգմանեցան գիրքս սրբոյն Դիոնիսիոսի: Արդ՝ պազացւոյ . . . և ի ձեռն Ստեփանոսի քահանայի և քերդողի, աշակերտի տեառն Մովսիսի Սիւնեաց Եպիսկոպոսի»: Այս տողերը նշում են, որ Սիւնեցին եղել է նաեւ թարգմանիչ:

Այս պայծառ հոգևորականը Հայաստանի հին մայրաքաղաք՝ Դուինի հայ ժողովրդի հպարտութիւնն է: Այդ հանգամանքն է հաստատում մի թանկագին վաւերագիր: Դա պատմաբան Ստեփաննոս Օրբէլեանի «Պատմութիւն Նահանգին Սիսական» երկն է, ուր կարդում ենք. «Սա (Սիւնեցին) հայոց մեծ մայրաքաղաք Դուինի աւագ երէցի որդին էր և սնւում ու դարգանում էր ուսումով հայոց կաթողիկոսաբանում»:

Հայրը՝ Տ. Սահակը, լուսաւոր և առաջադէմ մի քահանայ, իր զաւկի ուսման և կրթութեան գործը դնում է լաւագոյն հիմքերի վրայ: Ուղարկում է նրան Մաքենոցաց վանքը, ուր աշակերտում է «հայրերի հայր» Սաղոմին: Այնուհետեւ անցնում է

Սիւնեաց վարդապետարանը և սովորում ժամանակի գիտուն հոգևորական Սիւնեաց Մոսիս Բ. Եպիսկոպոսի մօտ, ուր լուրջ կրթութիւն է ստանում: Առանձնապէս հրմտանում է կրօնական գիտութիւնների մէջ և որոշ ժամանակ նուիրում է ուսուցչական գործունէութեան: Ապա վերադառնում է Դուին, ուր զբաղւում է Հին և Նոր կտակարանների մեկնութեամբ: Սակայն, մի հանգամանք նրա կեանքում վճռական դեր է կատարում: Դուինում հանդիպում է հայ նշանաւոր իշխաններից Սմբատ Բագրատունուն, որ իմաստասիրական գիտութիւնների մասին ունէր լայն պատրաստութիւն: Կրօնական խնդիրների շուրջ Սիւնեցին իշխանի հետ վէճի է բռնում, որը շուտով սուր կերպարանք է ստանում: Իշխանը Սիւնեցուն կոչում է տգէտ և սկսում է նրան հալածել: Սիւնեցին ստիպուած զաղտնի անցնում է Բիւզանդիայի կայսրութեան մայրաքաղաք՝ Պոլիս, ուր սովորում է յոյն ու լատին լեզուները, միաժամանակ մի վանականի մօտ խորանում է իմաստասիրական գիտութիւնների մէջ: Այնուհետև ուսման սիրով անցնում է Աթէնք և էլ աւելի խորացնում իր գիտական պատրաստութիւնը: Յետոյ նորից վերադառնում է Բիւզանդիոն և թարգմանում մի շարք նշանաւոր երկեր: Ապա գնում է Հռոմ, այնտեղից էլ վերադառնում Դուին և ամբողջապէս նուիրում գրական ստեղծագործութեան: 729 թուին Դաւիթ կաթողիկոսը նրան Սիւնեաց եպիսկոպոս է ձեռնադրում, որից յետոյ նա քարոզում է իր թեմի 12 համայնքներում: Սակայն, 735 թուականին ունենում է ողբերգական վախճան: Մոզ աւանում, Աւագ Ակն աղբիւրի մօտ, բաց օդեայ քնած ժամանակ, մի անբարոյական կնոջ ձեռքով սպանւում է սրով, որին իր անպարկեշտ վարքի համար սաստիկ յանդիմանել էր: Ըստ պատմիչների, յաջորդ օրը Վայոց ձորում տեղի ունեցած աղետաբեր երկրաշարժը հիմնայատակ կործանում է Մոզն՝ իր 10.000 բնակիչներով: Այդ օրից էլ աւանը կոչւում է Վայոց ձոր, իսկ անպարկեշտ կինը խղճի խայթից սաստիկ տանջւում է, առանձնանում մի փոսի մէջ և ողբերգական պայմաններում վախճանւում: Իր դարաշրջանում Սիւնեցին, որպէս զարգացած հոգևորական, ո՛չ միայն ժողո-

վրդից սիրւում է, այլև Օրբէլեանի վկայութեամբ, հայ գրականութեան նուիրում է մի քանի թղթեր, որոնցով պաշտպանում է Հայ Եկեղեցու դաւանութիւնն ու ծէսերը յոյների առարկութիւնների դէմ. զբաղւում է նաև մեկնութիւններով, թարգմանութիւններով^(*) և քերականական օրէնքների ուսումնասիրութեամբ ու պարզաբանութեամբ: Այդ պատճառով էլ կոչւում է նաև «քերթող»:

Սակայն, Սիւնեցին հոչակւում է նաև որպէս երաժիշտ: Նրա գրչին են պատկանում «Աւագ օրհնութեանց» ընտիր շարականները: Այս մասին ահա 13րդ դարի պատմագիր Կիրակոս Դանձակեցու վկայութիւնը. «Արար երգս հոգևորս քաղցր եղանակաւ՝ շարականս, կցորդս և երգս: Նոյն երեսիքն ընդգծել է նաև Ստեփաննոս Օրբէլեանը. «Արար և ճառս բազումս, բաժանեաց և դուժ ձանսն և կարգեաց, շարեաց շարականս՝ զյարութեան օրհնութիւնսն երգեաց և կցուրդս, քաղցրահամս յարմարեաց և զստուգողին Յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր և զպահոցն և որ յաղուհացսն երգի, մեկնեաց և զխորհուրդ գրչերային պաշտամանս»:

Այս վաւերագրերն էլ վկայում են, որ Ստեփաննոս Սիւնեցին երաժշտական լուրջ պատրաստութիւն է ունեցել և իր դարի փայլուն երգիչներից մէկն է հանդիսացել: Նոյնպէս նա առաջին հեղինակն է, որ հոգևոր երգերի կանոնը և կարգը հաստատել է եկեղեցական ժամերգութեան մէջ:

Վաստակաւոր մատենագիր և երաժշտի նշխարներն ամփոփուած են Մոզից ո՛չ շատ հեռու, Թանահատի վանքում: Սիւնեաց պատմիչ Ստեփաննոս Օրբէլեանը, նկարագրելով Սիւնեցու մահն ու թաղումը Թանահատի վանքում, ընդգծել է նաև հետեւելը. «Եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի, զոր յետոյ ի ԶԻԸ (728 + 551 = 1279) թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբեթայարկ, գեղեցիկ յօրինուածովք, և եղին զտապան սրբոյն ի նորայն»:

(*) Թարգմանութիւններից յայտնի են՝ Դիւնեփոս Արիսպաղացու գործերի մի մասը, Կիրեղ Աղէքսանդրացու «Պարապմանց» Գիրքը և Գրիգոր Նիսացու «Յաղագս Բնութեան Մարդոյ»:

7.

ԵՐԱԺԵՏՈՒՆԻ ՍՍՀԱԿԱԳՈՒԽՑ

Ութերորդ դարի հայ մշակույթի պատմութեան մէջ նշանաւոր և բացառիկ մի երևոյթ է այն պայծառ ու հմայիչ հայունուանունը, որ իր գեղարուեստական գործունէութեան ընթացքում ընդգրկել է մէկ նպատակ — նպաստել ժողովրդի երաժշտական դաստիարակութեան վեհ գործին: Դա նշանաւոր մատենագիր, գիտնական, իմաստասէր, լեզուագէտ և երաժշտ Ստեփաննոս Սիւնեցու քոյրը՝ Սահակագուստն է, առաջին հայ բանաստեղծուհին ու երաժշտուհին, որ իր ամբողջ էութեամբ նուիրուել է իր ժամանակի հայ երաժշտութեան զարգացմանը, միաժամանակ դաստիարակել է մի ամբողջ երաժշտասէր սերունդ:

Մեզանից 1255 տարի առաջ ապրող այս տաղանդաւոր երգչուհու և երաժշտուհու մասին չունինք կենսագրական տեղեկութիւններ, միայն պատմագիր Ստեփաննոս Օրբէլեանն ընդգծել է այսպիսի թանկագին տողեր. «Եր սորա (Ստեփաննոս Սիւնեցու) քոյր մի, 'ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան և առանձնացեալ 'ի ձորակին Գառնոյ յայրի միոջ, և անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին. որոյ անուն Սահակագուստ: Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին, որ և 'ի ներքոյ վարագուրինստեալ՝ ուսուցանէր զբազումս: Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցր եղանակս, յորոց մին՝ Սրբուհին Մարիամ, որ իւրով անուամբն է յօրինեալ»:

Տաղանդաւոր բանաստեղծուհու յօրինած «Սրբուհի Մարիամ» երգից այստեղ գծենք միայն մի պատկեր.

«Սրբուհի Մարիամ, սափոր ոսկի եւ
 Տապանակ կտակարանաց,
 Որ զի վերուս զնացն կեցաց՝ պարգեւեցեւ
 քաղցեալ բնութեան,
 Առ նա միշտ բարեխօսեա վասն Բաւութեան մեղաց մեռցոյ:

Երաժշտուհու մասին Հ. Ղևոնդ Ալիշանը ևս արձանագրել է սեղմ տողեր, որոնք ընդգծում են Սահակագուստի երաժշտական և մանկավարժական գործունէութիւնը: Ահա նրա բնորոշումը. «... Մե-

նարանին դրան առջև վարագոյր մը ձգելով, ինքն ալ ետեւ նստած կ'երգէր ու կը սորվեցնէր իր աշակերտներուն: Շատ բարակ և բազմակողմանակ երգեր չինեց, զոր մեր երաժիշտքն մանր ուսմունք կ'անուանեն և առանձնաբար կցորդք և մեղեդիք, որոնց գոնէ մէկ մասն անշուշտ կը գտնուի այսօր «Մանր Ուսմունք և կցորդք» գրոց մէջ»:

Պատմագիր Օրբէլեանի և Հ. Ղևոնդ Ալիշանի տողերը հիմք ունենալով՝ բանասէր Յարութիւն Գ. Շալեանը «Հայաստանի կոչնակոսում երաժշտուհու մասին գրել է հետեւեալը. «Ութերորդ դարուն կը հանդիպինք Ստեփաննոս Սիւնեցի կաթողիկոսին և մանաւանդ իր քրոջ Սահակագուստին՝ քաջ երաժշտագէտ ու բանահիւս աղնուստոն մայս կոչսին՝ որ մենաստանի մը մէջ վարագոյրի մը ետեւէն սրբազան երաժշտութիւն կը դասաւանդէր բազմաթիւ ուսանողներուն»:

Ուշագրաւ է, որ շնորհազեղ, առաքինազարդ և համեստ այս երաժշտուհին Տրդդարում փայլում է իր հոգեկան ու բարոյական գեղեցիկ բարեմասնութիւններով և իր մաքուր ու անրիժ կենցաղով միշտ բարձր է պահում հայունու վեհ անունն ու հմայքը:

Նշենք նաև մի այլ էական հանգամանք: Պատմաբան Ստ. Օրբէլեանի վկայութեամբ, Սահակագուստը Հայաստանում նուիրում է նաև ժողովրդի առողջապահութեան վեհ գործին: Նա որոշ հիւանդութիւններ բուժում է երաժշտական գործիքներով: Հայ բժշկական պատմութեան մէջ դա մի ուշագրաւ երևոյթ է:

8.

ԵՐԱԺԵՏՈՒՆԻ ԽՈՍՐՈՎԻԳՈՒԽՑ

Տրդդարի հայ երաժշտական արուեստի մի գեղեցիկ էջն է զբաւում երաժշտուհի Խոսրովիդուստի կեանքի պատմութիւնը:

Այս աղնիւ, տիպար և տաղանդաւոր հայուհին, որ իր մտաւոր լուրջ պատրաստութեամբ և գեղարուեստական ուրոյն յատկանիշներով պատիւ է բերում հայութեան, իր ժամանակի հասարակութիւնից սիրում է ու յարգում ո՛չ միայն որպէս հմուտ երգահան, այլև լաւագոյն բանաստեղծուհի:

Խոսքով իդուխտը դուստրն է Գողթն գաւառի նախարար Խոսքովի և քոյրը նահատակ Վահան Գողթնեցուն, որի կեանքի պատմութեան էջերը մեզ տանում են բարբարոս արար Կաշմ ոստիկանի շրջանը: Հայ իշխաններին նա, հաւատարմութեան թուղթ ստորագրելու պատրուակով, հաւաքում է նախնիների եկեղեցին, ապա դռները փակել է տալիս ո՛՞չ հրդեհում: Նման սոսկալի տեսարաններով նա հայ ժողովրդին սարսափահար է անում, որպէսզի նրանք հաւատադիօս լինեն: Այդ ժամանակ էլ Կաշմը Խոսքով իշխանի չորս տարեկան որդուն՝ Վահանին, ուղարկում է Դամասկոս, ուր նա մահմեդական ողով է կրթւում ու դաստիարակւում: Ապա Խալիֆի կամքով արքունի դիւանի քարտուղար է նշանակւում: Այդ շրջանում նա Խալիֆի հրամանով զերի հայերին Դամասկոսից տանում է Դուին և Խրամ: Գողթան գաւառում նա, երկար տարիների բաժամունից յետոյ, հանգիպում է իր քրոջը և այլևս Դամասկոս չի վերադառնում, իսկ արար ոստիկանի հալածանքից ազատուելու համար 30 երկար տարիներ թագնւում է վանքերում: Սակայն, թափառական կեանքից յոգնած և ծանծրացած, նորից վերադառնում է Դամասկոս, ուր և նահատակւում է:

Երիտասարդ եղբոր ողբերգական մահը խորապէս յուզում է իր քրոջ՝ Խոսքովիդուխտի, հոգեկան աշխարհը, որի խոր տպաւորութեան ներքոյ էլ նա յօրինում է և իր եղբոր անմոռանալի յիշատակին նուիրում մի գողարիկ ողբ՝ «Զարմանալի է ինձ», որը ձայնագրւում է երաժշտական սրտաբուլիս եղանակով:

Այդ սրտայոյզ շարականն ու եղանակն իրենց ջերմութեամբ և զգացմունքի անկեղծութեամբ այսօր ցայտուն դադափար են տալիս Տրդ դարի տաղանդաւոր հայուհի՝ Խոսքովիդուխտի, բանաստեղծական նուրբ ձաշակի և երաժշտական հմտութեան մասին: Ահա մի պատկեր այդ շարականից.

«Զարմանալի է ինձ, Բան գերգա երաժիշտականաց, ձայնս ողբոց բոց հնչումնք, ո՛վ երանելի Տէր Վահան, բնօրէալ Ասուծոյ:

... Զարհուրեցուցանէ քո ճգնութիւնդ քվարմնոյս բնութիւնս, իսկ դու առաւել ցար, ո՛վ երանելի Տէր Վահան, սիրով Քրիստոսի:

... Որպէս զփաշ նահապալ պատաստեալ ի պատեալով, կատարեցիր զընթացս քո արիաբար յազգացըն յարաւայնոյ, դասաւորեալ բնդ անմարմնականս, ո՛վ երանելի Տէր Վահան, Գողթնեացն ի խնայոյնդ:

Այս քերթուածի արուեստն էլ ընդգծում է, որ Խոսքովիդուխտն իր դարաշրջանում փայլել է ո՛չ միայն որպէս հմուտ երաժշտուհի, այլև իբրև լաւագոյն բանաստեղծուհի:

Արուեստի փայլուն ձիրքերով օժտուած այս հայուհու մասին Յ. Շալեանը «Հայաստանի Կոնչակոսում գրել է հետեւեալ սեղմ տողերը. «Աւթերով դարուն մէջ կ'ապրէր նաև Խոսքովիդուխտ հայ բանաստեղծուհին, քոյրը մեր եկեղեցիի սուրբերէն Վահան Գողթնեցիի, որ յօրինած է իր նահատակ եղբոր նուիրած ողբանուագ շարականն ու անոր եղանակը, ինքնին երաժշտական գուհար մը և հայ կնոջ չափազանցօրէն զգայնիկ սրտի յուզումներուն, վշտին ու մորմօքին մէկ միսթիք արձագանգը»:

Այժմ մի հանգամանք անժխտելի է, որ գեղարուեստասէր այս հայուհին իր թանկագին օժանդակութիւնը բերել է Տրդ դարի հայ երաժշտական արուեստի զարգացմանը:

Նրա մահից անցել են հազար երկու հարիւր երկար տարիներ, բայց նա չի մոռացուել և այսօր էլ զեռ ապրում է հայ արուեստասէրների սրտերում:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի՝ 5)

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՈՒԵՍ



Խմբագրութիւնս ստացած բլլալով
ՀԱՅԿԱԿԱՆ Ս. Ս. Ռ. ԳԻՏՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ նոր եւ շատ
արժեաւոր մէկ հրատարակութիւնը,
Ակադեմիկոս Ա. Շ. Մնացական-
եանի

Հայկական Զարդարութեւսը

իր բնութեցողներուն կը ներկայացնէ
զրքին ներածական բաժնէն եւ այլ
շանեկան էջերէ մասեր: Գիրքը կը
բաղկանայ 650 մեծադիր էջերէ,
սպաւած է սպիտակ քուղիի վրայ
եւ երկսիւն, բազմաթիւ գեղասիւս
նկարներով: Բացառիկ արժեքով
սոյն գիրքը ցարդ իր տեսակին մէջ
կը մնայ եզակեան: Հայկական Զար-
դարութեւսը եւ մասնաւորաբար Ման-
րանկարչութիւնը մեր արուեստին
կարեւոր երեսներէն մէկն է:

Հայ ժողովուրդը աշխարհի հնագոյն
ժողովուրդներէից մէկն է, նա զարեւրի ըն-
թացքում կերտել է նաեւ իր հարուստ ու
նշանաւոր կուլտուրան, որի մէջ առանձին
տեղ է զբաւում հայկական զարդարութեւսը:

Զարդարութեւսը հայ ժողովրդի ստեղ-
ծած արուեստի ամենահին, բայց ամենա-
կենսունակ բնագաւառներէից մէկն է, որի
մի ծայրը թաղուած է նախնադարեան ան-
դասակարգ հասարակութեան ծոցում, իսկ
միւսն, այսօր էլ ծաղկելով, ձգուում է դէ-

պի ապագան: Այն միաժամանակ արուեստի
ամենամասնաւորական ձեւերից մէկն է՝ ինչ-
պէս իր ստեղծմամբ, տարածմամբ, զերով
և նշանակութեամբ, այնպէս էլ իր ընդ-
գրկած բնագաւառներով: Նրա բազմա-
զար ու բազմապիսի մոտիվները, հնագոյն
ժամանակներից սկսած, զարդարել են
մարդկային մարմինը, հագուստը, բնակա-
վայրերը, բնակարանները, տնային կահ-
կարասիքը, զօրծիքները, ձեռագրերն ու
զրքերը, պատմական ու կրօնական զանա-

զան յուշարձանները, գերեզմանաքարերը, անասունները, մարմիններն ու ծածկոցները և այլն: Նրա երգիներանգ ձեռքը, իրենց աստվածական զարգացմամբ, որպէս յաղթանակող աշխատանքի անջնջելի կնիքներ, իրենց զրոյմն են գրել հայ ժողովրդի նիւթական կուլտուրայի բոլոր բնագաւառների վրայ, ուր հասել են մեր նախնիների ստեղծագործ ձեռքերը: Տարբեր զարաչրջաններում, տարբեր հանգամանքների մէջ, նրանք տարբեր իմաստ ու գեր են ստացել և իւրովի վերարտադրել իրենց կերտողների ու տարածողների կեանքի պատմութիւնը, մտածողութիւնը՝ միշտ վերամշակելով, զարգանալով ու հարստանալով:

Այսօր այդ վիթխարի կուլտուրան, իր ամբողջ հասակով մէկ, կանգնած է մասնագէտների առաջ՝ մի կողմից՝ որպէս պատմական սկզբնաղբիւր, իսկ միւս կողմից՝ որպէս անզուգական ժառանգութիւն՝ ըստ պատելով իր արժանի վեր հանմանը, ուսումնասիրութեանը և նպատակաւոր օգտագործմանը:

Հասկանալի է, որ այդ հին ու հարուստ կուլտուրան պիտի վաղուց իր վրայ հրաւիրած լինէր մասնագէտների ուշադրութիւնը: Եւ, յիշաւի, սկսած ԺԹ. դարի կէսերից, հրատարակում են առանձին ալբոմներ, ժողովածուներ, յօդուածներ, ուսումնասիրութիւններ՝ նուիրում հայկական արուեստի տարբեր բնագաւառներին, որոնց մէջ, յաճախ, շօշափում են նաեւ հայկական զարդարուեստի որոշ հարցերը: Սկսում աշխատանքները մի նոր թափ են ստանում յատկապէս Հայաստանում սովետական կարգեր հաստատուելուց յետոյ և մասնաւորապէս վերջին տասնամեակների ընթացքում:

Այստեղ հարկ ենք համարում յիշատակել ռուսագիտաբանական գիտնական Վ. Վ. Ստասովի, հայկական ձեռագրերի հմուտ մասնագէտ Գ. Կաթողիկոս Յովսէփեանի, Ն. Յա. Մառի, Ա. Ի. Օրբելու, Թ. Թորա-մանեանի, Դր. Ղափանցեանի, Գ. Լեւոնեանի, Բ. Բ. Պրոտորովսկու, Լ. Ա. Դուրնովոյի, Ն. Մ. Տոկարսկու, Բ. Առաքելեանի, Վ. Մ. Յարութիւնեանի, Կ. Ղաֆաղարեանի, Ա. Ն. Սվիրինի, Ռ. Դրամբեանի և շատ ուրիշների անունները, որոնք մեծապէս նպաստել են հայկական արուեստի տարբեր բնագաւառների զարդամոտիվների վեր հան-

ման և ուսումնասիրութեան աշխատանքներին:

Ներկայ աշխատութեան բնոյթին համապատասխանող կարեւոր էջերի ենք հանգիւյել յատկապէս Դր. Ղափանցեանի, Բ. Պրոտորովսկու աշխատութիւններում (կենաց ծառ, տոտեմիզմ, աստուածութիւններ և այլն), «Վիշապ» կոչուող քարակոթողներին նուիրում ուսումնասիրութիւններում (կենդանական եւ քուսական մոտիվներ, աստուածութիւններ), Բ. Առաքելեանի «Հայկական պատկերաքանդակները Դ-ի դարերում» աշխատութեան մէջ (տոտեմիզմ, կոսմոգոնիզմ, հին պատկերացումներ և այլն) և ուրիշ գործերում:

Որքան էլ շատ են յիշում ու չլիշուած անունները և նրանց կատարած աշխատանքները, դարձեալ, երբ այդ բոլորը զիտում ենք հայկական զարդարուեստի ամբողջ ժառանգութեան և նրա առջև բարձրացող հարցերի ու աշխատանքի ընդհանուր ֆոնի վրայ, տեսնում ենք, որ դեռ ևս շատ քիչ գործ է կատարուած: Բաւական է յիշել, որ մինչև օրս զոյութիւն չունի աշխարհ ընկնող առանձին աշխատութիւն՝ նուիրում հայկական զարդարուեստին: Ուստի եւ ընդհանրապէս հայկական արուեստի մասին իրաւացիօրէն նկատուած է, որ «այդ նշանաւոր ստեղծագործութիւններն ուսումնասիրում են անբաւարար, նրանցից շատերը նոյնիսկ չեն հետազոտուած և մնում են արուեստագէտների ուշադրութեան դաշտից դուրս»:

Եւ եթէ մի կերպ կարելի է բաւարար համարել նկարների ու նկարութիւնների միջոցով հայկական արուեստի որոշ բնագաւառների զարդերի վեր հանման աշխատանքները, ապա նոյնը չի կարելի ասել ինչպէս որ եւ է բնագաւառի, այնպէս էլ առհասարակ ամբողջ զարդարուեստի ուսումնասիրութեան ընթացքի մասին: Այդ ուղղութեամբ կատարուած աշխատանքները, հիմնականում, սահմանափակուել են որ եւ է բնագաւառի որ եւ է հատուածի զարդամոտիվների նկարագրութեամբ և նրանց զովասանքով: Շատ քիչ են այն փորձերը, որոնք նպատակ ունենալին թափանցել զարդամոտիվների ներքին էութեան մէջ: Ծիշդ է, տարբեր աշխատութիւններում հանդիպում ենք մասնակի ջանքերի, որոշ, ճիշդ

գիտողութիւնները, մեկնարանութիւնները ու ենթադրութիւնները, բայց և այնպէս նրանք միակողմանի են և յաճախ էլ զբոսեւորում են անընդունելի կարծիքներ։ Ուստի այսօր, նկատելի առնելով այդ աշխատանքների ընդհանուր վիճակը, կարող ենք ասել, որ պատշաճօրէն բարձրացուած և լուսաբանուած չեն հայկական զարգարուեստի ամենազգլխաւոր, այն է՝ հայկական զարգարուեստի հիմնական մոտիվները ծագման եւ զարգացման բովանդակութեան հարցերը։ Աւելին, այդ հարցերը, իրենց ամբողջութեամբ, առաջադրուած անգամ չեն եղել, գոյութիւն չունին գէթ մի ամփոփ ակնարկ՝ նուիրուած նրանց։

Պիտի նկատել, սակայն, որ համարեա նման վիճակ գոյութիւն ունի նաև ուրիշ ժողովուրդների մօտ։ Այս հանգամանքը շատ կարեւոր է, որովհետև հայկական, ինչպէս և առհասարակ որևէ ժողովրդի զարգարուեստի մոտիվների ուսումնասիրութեան բախտը պատմականօրէն կապուած է նաև ուրիշ ժողովուրդների զարգարուեստների համապատասխան հարցերի ուսումնասիրութեան վիճակի հետ։ Մասնագէտները վաղուց են նկատել, որ զարգարուեստի մոտիվներն ունեն «միջազգային բնոյթ», չնայած նրանք իւրաքանչիւր ժողովրդի մօտ մշակուած են հենց այդ ժողովրդին յատուկ ոճով։ Այս երևոյթի բացատրութեան փորձերը անգի են տուել բազմաթիւ իրերամերժ կարծիքների, բայց, ինչպէս որևէ գիտնական Վ. Ա. Նիկոլսկին է նշել, «Այդ նմանութեան հարցերը զեռնս գիտականօրէն բոլորովին չեն մշակուած»։

Այսպիսով, մի կողմից տուեալ ժողովրդի և առհասարակ բոլոր ժողովուրդների զարգարուեստների հիմնական մոտիվների և միւս կողմից՝ նրանց միջազգային բնոյթի հետ կապուած անեղծուածային վիճակը հիմք է հանդիսացել, որպէսզի ծնունեն ու ձևակերպուեն մեծ թւով հակասական տեսակէտներ ու ենթադրութիւններ։

Զարգարուեստի մոտիվների հիմքում և նրանց էութեան մէջ ընկած են մարդկանց կրօնամիտակ պատկերացումները, սեռական բնազդը, վայրենի կրքերը, անհիմն ֆանտազիան, պատահական ձևերը, ինքնանպատակ կրկնումները և այլն։

«Գաղափարների, պատկերացումների,

գիտակցութեան արտադրութիւնը, — ասում են Մարքսն ու Էնգելսը, — սկզբնապէս անմիջականօրէն միահիւսուած է սեռական քիմիայի լիզուրի — մարդկանց նիւթական գործունէութեան և նիւթական հաղորդակցութիւնների հետ։ Մարդկանց պատկերացումները, մտածողութիւնը, հոգեւոր հաղորդակցութիւններն այստեղ զեռնս համարուած են բխած անմիջապէս մարդկային նիւթական յարաբերութիւններից։ Նոյնը կարելի է ասել նաև հոգեւոր արտադրութեան մասին, ինչպէս [որ] այն զրուսեւորուած է այս կամ այն ժողովրդի լիզուած, քաղաքականութեան, օրէնքների, բարոյականութեան, կրօնի, մետաֆիզիկայի մէջ և այլն։ Մարդիկ հանդիսանում են իրենց պատկերացումների, գաղափարների և այլ նմանների արտադրող . . . »

Այսպիսով, մօրալը, կրօնը, մետաֆիզիկան և իդեոլոգիայի միւս տեսակներն ու նրանց համապատասխանող գիտակցութեան ձևերը կորցնում են ինքնուրոյնութեան նկատելիութիւնը։ Նրանք չունեն պատմութիւն, նրանք չունեն զարգացում, մարդիկ, որոնք զարգացնում են իրենց նիւթական արտադրութիւնը և իրենց նիւթական հաղորդակցութիւնները, տուեալ իւրաքանչիւր ժողովրդի հետ միասին փոխում են նաև իրենց մտածողութիւնը և իրենց մտածողութեան արդիւնքները։ Այլ թէ՛ գիտակցութիւնն է որոշում կեցութիւնը, այլ կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը։

Այս հանճարեղ դրոյթը բացում է մեր առաջ իդեոլոգիայի բոլոր բնագաւառների, այդ թւում նաև զարգարուեստի մոտիվների ուսումնասիրութեան ճանապարհը։ Այն ցոյց է տալիս, որ այդ հարցերի լուծումը պիտի փնտռել սեռական քիմիայի, մարդկային նիւթական փոխյարաբերութիւնների ոլորտի մէջ, նիւթական, կոնկրետ նախադրեալներում։

Իսկ, ինչպէս նշուած է մարքսիզմ-լենինիզմի կլասիկների դրոյթների հիման վրայ, «մարդկանց նիւթական կեանքի զբոսեւոր, որոշիչ պայմանը, այն պայմանը, որ որոշում է հասարակութեան ամբողջ կերպարանը (այդ թւում նաև յարաբերութիւնները սեռերի միջև, ընտանիքի և ամուսնութեան ձևերը), կենսամիջոցների հայթայթման եղանակն է, մարդկանց զո-

յութեան և նրանց սերնդի շարունակման համար անհրաժեշտ նիւթական բարիքների արտադրութեան եղանակը»։

Այստեղից պարզ է, որ մարդկանց մտածողութեան և իդեոլոգիայի գլխաւոր առարկան պիտի լինէին հենց այդ նիւթական բարիքները և նրանց համար աշխատաւոր մարդկութեան թափած ծանր աշխատանքն ու անդուլ պայքարը։

«Հասարակութեան հոգեւոր կեանքի ձեւաւորման աղբիւրը, հասարակական իդեաների, հասարակական թեորիաների, քաղաքական հայացքների, քաղաքական հիմնարկների ծագման աղբիւրը պէտք է փնտռել ո՛չ թէ հենց այդ իդեաների, թեորիաների, հայացքների, քաղաքական հիմնարկների մէջ, այլ հասարակութեան նիւթական կեանքի պայմանների մէջ, հասարակական կեցութեան մէջ, որի արտացոլումն են այդ իդեաները, թեորիաները, հայացքները և այլն»։

Ներկայ աշխատութիւնը շարագրելու ամբողջ ընթացքում մենք աշխատել ենք միշտ նկատի ունենալ մարքսիզմ-լենինիզմի կրթականների այս ու համապատասխան բազմաթիւ ուրիշ ցուցումները և մասնաւորապէս Մարքսի կոնսպեկտը՝ գրուած Լ. Հ. Մորգանի «Նախնադարեան հասարակութիւն» գրքի հիման վրայ ու Էնգելսի «Ընտանիքի, մասնաւոր սեփականութեան ու պետութեան ծագումը» աշխատութիւնը։

Սովետական մասնագէտները, զինուած մարքսիզմ-լենինիզմի ամենազօր ուսմունքով, այսօր լծուած են նաև առհասարակ զարգարուեստագիտութեան հարցերի ուսումնասիրութեան պատուաւոր գործին։ Նրանք համաոք են շարունակում են խորտակիչ քննադատութեան ենթարկել կղերարուժութեան տեսարանների կարծիքներն ու նրանց մնացուկները, ամենամեծ ջանքերն են գործադրում, որ առանձին ու շքեղ հատորներով հրատարակեն Սովետական Միութեան բոլոր եզրայրական ժողովուրդների զարգարուեստների տարբերքը։ Նազատանքի հարուստ նիւթերը և ամէն կերպ մտածում են զիւրացնել նրանց ուսումնասիրութեան գործը։

Այսուհանդերձ առհասարակ զարգարուեստագիտութեան առջև կանգնած տեսական ամենադժուար հարցերը, այն է՝ նրանց

հիմնական մոտիվների ծագման և զաղափարական բովանդակութեան հարցերը, մնում են չլուծուած։ Այդ ուղղութեամբ կատարուած որոշ փորձերը կրում են անսխտեմ բնոյթ, և երբեմն էլ զրսեւորում անընդունելի հայացքներ, որոնք վերջին հաշուով վերելում նշուած սխալ տեսութիւնների մնացուկներն են։ Մեծապէս յարգելով սովետական մի շարք ականաւոր գիտնականներին եւ բարձր գնահատելով նրանց ստեղծագործական մեծարժէք վաստակը, մենք չենք կարող մատնացոյց չանել նրանց գործերում առկա որոշ սխալներն ու թերութիւնները։ Այսպէս, օրինակ, Վ. Ա. Գորոդցովը, նկատի առնելով ուսական ասեղնագործութեան զարգամոտիվների մի խոշոր խումբ, զրանք զիտում է որպէս ժողովրդական պրիմիտիվ, պարզունակ մտածողութեան հեշտ բացատրելի արդիւնք եւ համարում կրօնա-սիմվոլիկ նշանակութիւն ունեցող զարգեր։ Այդ զարգերի «կրօնա-սիմվոլիկ նշանակութիւնը ներկայ ժամանակներում հաստատօրէն որոշուած է», — գրում է նա։ Գ. Ս. Մասլովան նոյնպէս կրօնական մտածողութեան արդիւնք է համարում բոլոր ժողովուրդների զարգարուեստների տարերքը կազմող այնպիսի մոտիվ, ինչպիսին է կենաց ծառը։ Ծ. Կուտսուլինի կարծիքով զաղափական զարգարուեստի հիմնական մոտիվախմբերը (բուսական մոտիվներ, կենդանական մոտիվներ, երկրաչափական մոտիվներ, երկնային մարմիններ) սկզբնապէս ունեցել են կախարդա-հմայական նշանակութիւն։ Ա. Ն. Սվիրինի համոզմամբ հայկական մանրանկարչութիւնը ծնուել ու զարգացել է, հիմնականում խայտարեղէտ փոխառութիւնների հօդի վրայ։ Ս. Ի. Ռուդենկոն սկիւթական որոշ կարեւոր զարգամոտիվների ծագումը կապում է ուրիշ ժողովուրդների հետ և այլն։ Ըստ որում, զրանք, ինչպէս ցոյց է տրոււմ ներկայ աշխատութեան մէջ, սխալ տեսակէտներ են, որոնց հեղինակները գիտականօրէն չեն հիմնաւորում իրենց կարծիքներն ու ենթադրութիւնները։

Ա. Ծ. ՄՆԱՏԱԿԱՆԵԱՆ

(Շարունակելի՛ 1)

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(ԽԵԽ) ՅՈՎՀԱՆՆԵՒՍ ԹԼԿՈՒՐԱՆՅԻ

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ր

(ԵՐԿՐԱՅԱԿԱՆՔ)

Ա. ՏԱՂԵՐ

= 1 =

ԳՈՎԱՍԱՆՔ ՍԻՐՈՅ

Ա.

Աչերդ է թուխ ու պէտ, դու խօրօտիկ ես,
Քափուր վարդի նրման անուշ հոտիկ ես:

Բ.

Դու փնջած մանուշակ, վարդի ծաղիկ ես,
Նորելուկի նրման կանանչ ուռիկ ես:

Գ.

Դու սպիտակ ու կարմիր հոտեղ խնձոր ես,
Անուշ հոտովըդ դու զիս արբուցեր ես:

Դ.

Դու մեղրով շաղաղուած նուշ ու շաքար ես,
Բըտրի լուսին, պայծառ արեգակըն ես:

Ե.

Դու հալած ու թափած ոսկի արծաթ ես,
Ղումաշ ես խազինի, քանի գովեմ զքեզ:

Զ.

Քո սէրն ի յիս դիպաւ, ստոյգ կ'այրիմ ես,
Արի՛ ինձ դեղ արա, իմ հարըն դու ես:

Է.

Կըտրեր քուն յաչերուս, դուն ֆարաղաթ ես,
Քո սէր զիս մոմ արար, պողպատ կայծքար ես:

Բնագիր Ս = Մանանայ, էջ 276, Հմմտ.
Տ = Կոստանեանց, Տաղեր, էջ 37. առած
է Մանանայէն և Հայերգէն:

Վերնագիր չունի Տ:

Բ. 1. — Վարդ ու, Տ:

Զ. 2. — Արեկ, Տ:

Է. 2. — . . . դու ինձ պողպատ
կայծքար ես, Ս Տ:

Է.

Դու գիշեր եւ ցերեկ մէջ իմ սրտիս ես,
Անմահ ու անգրող զհոգիս հաներ ես:

Թ.

Դու ինձ սիրելի եւ ինձ բարեկամ ես,
Չարկամն զայդ չէր աներ, զինչ որ դուն կ'անես:

Ժ.

Անթուր եւ անդանակ զարիւնս հեղեր ես,
Դնաց իմաստութիւնս, զմիտքս տարեր ես:

ԺԱ.

Ես եմ ափ մի հողէ, դուն հրրեղէն ես,
Քանի՜ զիմ այրած սիրտըս այրունես:

ԺԲ.

Յորտեղ որ կու նստիմ, զիս կ'մոռանամ ես,
Միթէ զիս դեղեցի՞ր, կամ թէ կախա՞րդ ես:

ԺԳ.

Ձքո ծով ծով աչերդ դեղով լըցեր ես,
Ունքերդ կամարակապ ի վեր քաշեր ես:

ԺԴ.

Դու ես կանանչ աղբիւր, ծովու նրման ես,
Ատամունքդ մարգարիտ, շաքարբերան ես:

ԺԵ.

Աշխարհս խորոտիկ զեմ դու մինակ չես,
Աստուծոս շատ իկեւ այլ տի զայ քանց քեզ:

ԺԶ.

Ասա զբանս, Յովանէս, է՞ր կու խընայես,
Դու Սուրբ Կարապետի հորտն ու ծառան ես:

ԺԷ.

Սուրբ Կարապետ, շատ կու խնդրեմ ըզքեզ,
Ջասողքս եւ զսողքս ի չարէն փրկես:

= 2 =

ԲԱՆՔ ՍԻՐՈՅ ՅՈՎԱՆԻՍԻ

Ա.

Աղեկ պատկեր ըոլոր եւ գեղեցիկ ես,
Բերանդ շաքրով ի լի, թութա՞ք լեզու ես,
Գոյնդ է կարմիր վարդին, հոտովդ անուշ ես,
Դրբախտ ես ու պաղչայ, ծաղկի նրման ես:

ԺԱ. 2. — = Տ:

ԺԲ. 1. — . . . կը մոռնամ, Տ:

ԺԳ. 1. — Զֆո, զայդ քո, Տ:

ԺԴ. 1. — մէնակ, Տ:

ԺԵ. 2. — = Տ:

Բնագիր Ա, էջ 121, Լմմ. Գ, էջ 315

(Չեռ. Ս. Յ. Թիւ 615), 2, էջ 25 (Չոպ. Հայ
էջեր), Ն, էջ 714 (Արեգ, 1924):

Ա. 2. — տաքով ի լի, չթթունքդ գո-
վելի, Գ (բնագրէն տարբեր գրչով, ետքէն
գրուած է), — 3. — գոյդ, Գ:

Բ.

Երկինք և երկիր վրկայ որ կու սիրեմ զքեզ,
Զարթիր զականջդ քաց որ զանկատիւմ քեզ,
Եկեալ եմ քեզի հիւր, ասպընճական ես,
Ընդէ՞ր յիս չես հայիր, զեմ անհաւատ չես:

Գ.

Թողում ըզքեզ ի քաց, թանց որ ինձ նենգես,
Ժամով զիս ժողովէ, ծառայ եմ ես քեզ,
Իմ սիրտս ու խելքս ու միտքս սիրով է առ քեզ,
Լաւ որ սիրես դու զիս, սիրեմ ես ըզքեզ:

Դ.

Խիստ եմ ես քեզ հաւան, թանց որ դուն ինձ ես,
Ծառայեմ քեզ անձամբս որ զիս չի խոցես,
Կամեց դուն ինձ, հոգի, և ես կու կամիմ քեզ,
Հոգի, ասայ դու ինձ, և ես կու ասեմ քեզ:

Ե.

Զայնդ է կաքվոյ նման թէ զիս կու ծայնես,
Ղաւլ ու հաւատ և երդումն՝ որ կու սիրեմ զքեզ,
Ծապուկ հոխ ու ճերմակ երբ որ դու քայլես,
Մանտրիկ մանտրիկ ծիծղաս ու շունչըս քաղես:

Ձ.

Յորդոր կաց ու ուրախ թէ զաւլի տէր ես,
Նայիմ սիրով ի քեզ, Աստուած վրկայ մեզ,
Շուտով հասնիս սիրուս թէ դու անսուտ ես,
Որպէս սիրես դու զիս՝ սիրեմ ես ըզքեզ:

Է.

Զարխի դեղած նետով սիրտըս խոցեր ես,
Պագով սիրտըս լափէ՝ թանց որ հաւան ես,
Ջուր տուր ծաււած լերդիս, փափաքեմ ես քեզ,
Ռատ աղբիւրի ջուր, և ես կու նայիմ քեզ:

Ը.

Սիրով սիրտըս լցուաւ, ինձ մեղ չի դընես,
Վարդ ես անուշահոտ, շուշան ծաղիկ ես,
Տուր դուն ինձի խըրատ, դու խիստ խիկար ես,
Բամեալ յազգըս մարդկան՝ ծառայեմ ես քեզ:

- Բ. 2. — գանկատիւմ ես քեզ, Գ. — 3. — ճարտար, 2 լս. : — 4. — մանրիկ մանրիկ
— քեզ 'ի հիւր, Գ. — Գ. 2. — Կաց ու, կացիր, 2. ու, չու-
Ժլմով, Գ. 2. — 3. — Ամ սիրտս, Գ. — 6ի, Ն. —
Խելքս, չուցի, Ն. — Է. 3. — փափաքիմ, 2. — ծառուած ու
Գ. 1. — Թանց, չանց, Գ. — հանց, 2. — փափաք եմ, Ն. — 4. — աղբիւր 'ի ջուր,
3. — հոգիս, ես, 2. — 4. — ասա՛, Ն. — Գ. 2. և, չուցի 2 Ն. —
Ե. 1. — զիս, ինձ, 2. — 3. — ճերմակ, Ը. 4. — աղբըս, Գ. Ն. — ծառայ եմ, Ն.

Թ.

Ցաւդ ես զարնանային լանուշ կու ցաւդես,
Իիւտովդ կարմիր խնծոր՝ լանթառամ վարդ ես,
Փետրովդ սիրամարգու հաւուդ նըման ես,
Քաջանց տանէն բերած դու ինձ խիլայ ես:

= 3 =

ՏԱՂ ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՆ

Ա.

[Յ]այսաւր էի խիտ տըրտում,
Ենկիլէնտի էսկի տարտում,
Կատարեցաւ ընծի խնդում,
Քի եարըմի սէրանտա կէօրտիւմ:

Բ.

Ունրեր ունէր ինքն կամար,
Ղարա տըր զաշլարի խումար,
Խէվ եղայ ես նորա համար,
Իւզի կուլիստան ու զամար:

Գ.

Վայրի եղներու նըման,
Տուղուրտի կէօկլումա կուման,
Ակոատ մարգարիտ շարման,
Սէն էյլա տարտումա տէրման:

Դ.

Անչափ սէր տուիր ինծի,
Այ զաւնճայ կուլարու կանճի,
Այլվա հազար նարընճի,
Եյլէտին պէնի զարընճի:

Ե.

Նըռան հատին ես նըման,
Ղարանֆիլ իլայ ըռահան,
Եկ որ մըտնունք ի պաղչան,
Կուլիստան ու սալվի բաւվան:

Թ. 2. — ւ, չուցի, Ն. — 2. — Իիւ-
թովդ, Ն. հոտովդ, Գ. Իւթովդ, 2. Հիւ-
թովդ, 2 լս. ւ, չուցի, Ն 2. — 3. —
փետրով, Գ. Սիրամարգի հաւու, 2. փետ-
րովդ սիրամարգ ու հաւուդ, Ն. — 4. —
Քաջանց, Գ.

Բնագիր Բ = Ձեռ. Ս. Թ. Թ. 1417, էջ
409, նոտրագիր Տաղարան, ԹԿ. 1644, Հմմտ.
Վ = Կոստանեանց, Նոր Ժողովածու, Դ.
Պրակ, 1903, էջ 16. առած է 1695 թուին

գրուած Ձեռ. Տաղարանէ:

Վերնագիր. — Տաղ Վասն Սիրեւութեան, Վ.

Ա. 3. — ինձ, Վ. — 4. — Քի եարըմ

սէյրանտա, Վ.

Բ. 2. — Ղաւարի, գեօղէրի, Վ.

Գ. 2. — Տիւշուրտունկ կէօնկլումը, Վ.

Դ. 2. — . . . կիւլէրին կէնճի, Վ. —

3. — ալ[լ]վի հազեր ես, Վ.

Ե. 2. — իլայ, էյի, Վ.

Զ.

Նըման է ծոցդ ի դրախտի
 Կէլ երխմա կէօկումին թախտի,
 Մըտնունք լօք անենք սէյրան,
 Սուրալում օմրու, ու վախտի:

Է.

Եփ կու տեսնում զինքըն կանկման,
 Հէջ դալմազ ճանումտայ ֆէրման,
 Եկոյ որ լինինք հայրան,
 Էթմա կէօնկումի փէրուշան:

Ը.

Սուրատթ է բոլոր լուսին,
 Մոռ մընավշայ դաւնճայ կեուլ սին,
 Մօտեցիր քիչ մի բո ծառային,
 Հայ զալում նէզուկ ու շիրին:

Թ.

Ի յայսմ աշխարհիս միջին,
 Սէն սէն շահրի վի Չինումաչին,
 Երգողիս Յովանիսին,
 Ըռահմ էյլայ, պաշինկ իչին:

= 4 =

ՏԱՂ ՅՈՎԱՆԷՍԻ ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

Ա.

Ես բո սիրուն չեմ դիմանար, հալալ արա, հանսը մեռայ,
 Առ ի հետ այլ զոսկի փէտատ, և եկո փորէ ինծի թուրպայ:

Բ.

Թող զիս երեն տառայպուլով, որ իմ սըրտիս բոցըն գոռայ,
 Շատ մարդ ի յայս կըրական ընկնի, չորն երի դալարն ի վըրայ:

Գ.

Թող լըվանան ըզիս զինով, մտրուպ բերեն ինձ քահանայ,
 Կանանչ տերեւըն թող պատնեն, տանին թաղեն ի նոր պաղչայ:

Դ.

Հայ հարամի ու մարդըսպան, ճալատն ի բովդ աշկերտ կու գայ,
 Շատ զըրեր ես սիրու զընտան, դուռդ ու դըրունքդ է դանարայ:

Զ. 1. — Ի, չուճի, Վ. — 3. — Իուք, Վ.

Է. 1. — Երբ, Վ. — 3. — Եկոր լինիմք
 Ի հէյրան, Վ.

Ը. 1. — Սուրատթ Վ. — 2. — Կիւլ,
 Վ. — 3. — քիչ մի, չուճի, Վ. — 4. —
 նազիք, Վ.

Թ. 2. — Սէն սին չէհր Չինումաչին,
 Վ. — 4. — Ըռահմէթ էյլէ պաշին . . . Վ.

Բնագիր 2 = Զօպանեան, Հայ Էջեր,
 էջ 74, Հմմտ. Ռ = Սուրթաթեան, Գր. Գո-
 հարներ, Ա. էջ 424, Հայ Էջերէն առնուած:

Ե.

Զսիրտս երեցիր ու սղկեցիր ու քաշեցիր յայրորդ սուրմայ,
Կարծար զարիւնս վաթեցիր և ի ոտվընիդ դրերի հինայ:

Զ.

Քարկոծեցէք զիս խնծորով, քաղցր լեզուվ խոցոտեցայ,
Անուշ գինով զիս խեւ արիր, որ ի ծոցըդ զնտանեցայ:

Է.

Աս գիշեր ի յերազիս կըտըրտեցին տիբայ տիբայ,
Կազանք արիւնըս կըշտացան ու թռչունք ի լաշիս վըրայ:

Ը.

Վըրաս բերան է առիւծու, արիւնը գէտ ջուր կը բըխայ,
Ով արիւնէս է ծարաւեր թող գայ խըմէ որ լիանայ:

Թ.

Կըտըրծվորացն յոտիցն ի հող, մէկ հոգեկ մի ունիմ փետայ,
Իմ ճիկարըս քապապ հերիք, արունըս թող գինի լինայ:

Ժ.

Կըլուխս ամպերն ի վեր իջեր ի սըրտիս լեռներուն վըրայ,
Մաղծըն սըրտիտ մըշուշ կապեր, արեան արցունքըս կու ցողայ:

ԺԱ.

Կերակրեցաք ի մի սեղան, ու խըմեցաք ի մի կըթխայ,
Մէկտեղ ելաք, մէկտեղ նըստաք, ան ժամանակն ո՞ր է հիմայ:

ԺԲ.

Ո՞ւր է զավըդ, ո՞ւր է երդումն, որ բռնեցաք զԱստուած վըկայ,
Ի զատ ընկաք, օտարացաք, չարկամն եղև մեզ մահանայ:

ԺԳ.

Աստուած մեր չարկըմին չար տայ, որ իւր չարովըն լիանայ,
Բարեկամացըն տայ բարի, մեր բանն ավայ բարի լինայ:

ԺԴ.

Աստուած ճամբայ տայ իմ սրտիս, ծառըն ծաղկի՞լու կանչանայ,
Կամ իմ սրտիս ծառըն բուսնի, ծագըն՝ խօսի ու ճըվըլտայ:

ԺԵ.

Համբերելով գործք կատարի, խեւ Յովանէս, դու համբերէ,
Ատեն լինի գայ իւր կամաւ զինչ հեռաւոր զինք համբուրէ:

= 5 =

Ի ՅՈՎԱՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՅ Է

Ա.

Խոստովանիմք եւ դաւանիմք ըզբեզ Աստուած անժամանակ,
Անըսկիզբն, անկատարած, անեղ, անմահ և անօրինակ:

Զ. 1. — Քարկոծեցիր, Ռ:

ԺԳ. 2. — ավայ, ալ գայ, Ռ:

Բնագիր Ի = Զեռ. Ս. Թ. 1521, թղ. 139թ, թկ. 1734, Գանձգիրք Նոտրագիր:

Այս Զեռագրէն առնելով տպած է Ա. Զօպանեան, Անահիտ, 1929, Մայիս, էջ 47: Լմմ. Փ = Զեռ. Ս. Թ. 1249, թղ. 173թ, թկ. 1750-51, Գանձգիրք Նոտրագիր, միւս-

Բ.

Անպատմելի, անճառելի, անքննելի եւ անքանակ,
Անեղական լոյս կենդանի, համատարած, անվայրափակ:

Դ.

Ճառագայթ լուսոյ ճառանջ, իմանալի լոյս գերունակ,
Երրորդութիւն եւ մի քնութիւն, Աստուածութիւն, անհաս էակ:

Դ.

Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, միշտ եւ յաւիտ եւ մի երրեակ,
Անծանց ւ անուանցդ է բաժանումն, այլ ամենայն մի եւ միակ:

Ե.

Ամենայնց ես արարիչ, յամենեցունց անպարունակ,
Քան զամենայն միտք ես ի վեր, ւ ամէն մըտաց ես վեհունակ:

Զ.

Զամենայնըն դու քնես, ւ անքննելի մընաս յերակ,
Հրեշտակացն անքննելի, անմարմինքն ոչ են քեզ զիտակ:

Է.

Քանզի դու բարձր ես վեհագոյն, խորք քո չունի իսկի յատակ,
Դու զայնօք լայնատարած, անհասական եւ անորակ:

Ը.

Յոչընչէ ստեղծեր զեղեալքս, բոլոր գոյիցս աննմանակ,
Զիարդ կարէ պատմել բերան, դու անուրեր ւ անբաւանդակ:

Թ.

Զքեզ զըւարթունք փառաքանեն եւ սերոքէք պարապարփակ,
Քեզ մարդիկ երկըրպագեն, զի քո ձեռացդ են գործունակ:

Ժ.

Քեւ անասունքըն բուծանին, թռչունք, սողունք ւ անբան գազանք,
Ծառք եւ բոյսք պտղաբերին, մատղաշ հանեն ոստ բարունակ:

ԺԱ.

Քոյին խնամօքըդ պահպանին, մընան հաստատ ւ անփոթեցակ,
Օղայինք եւ երկրայինք, են քեզ յանձին ծով ու ցամաք:

ԺԲ.

Ես անարգս յամէն գոյից, առ քեզ վստահ փութամ յերակ,
Բաց ըզբերանս իմ յորհնութիւն, հոգւոյս վառեալ զլոյս քո ճըրակ:

ԺԳ.

Լըցո՛ շնորհօք Հոգոյդ Սրբոյ, զմիտս որ բանից առնէ ճարակ,
Մաքրեա՛ զհոգիս, զմիտս եւ զբանս, սուրբ օրինաց լինել մըշակ:

(11)

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

Նոյն գրչի գործ:

Է. 1. — Խոր, Ի Փ. առակ, Ի Փ.

Ը. 2. — Պատմէ, Ի Փ.

ԻՍ ԶԱՆՉՑԱԾ ՍԱՂԻՄԱԿԱՆՆԵՐԸ

Մեր Դպրեվանքներէն մասնաւորաբար երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանը վերջին քառորդ դարու ընթացքին, կրցաւ հոգեւորական սերունդ մը պատրաստել, որ իր բազմակողմանի կրթութեամբը և նըւիրումովը զրաւեց մեր արժանաւոր կղերականներու և առաջնորդներու դերն ու գիրքը:

Անոնք որոնք ինծի պէս այս կողմերը ափ առած են, բախտն ունեցան վերոյիշեալ սերունդէն երեք արժանաւոր հոգեւորականներ ճանչնալու, որոնցմէ Սերովբէ Վրդ. Մանուկեանը — եպիսկոպոս —, որ հոս եկաւ երուսաղէմի ի նպաստ հանգանակութիւն կատարելու, զիս տպաւորող Սաղիւմականներէն առաջինը եղաւ:

Իր կոչումին զիտակից հոգեւորական մըն էր ան, որ իր իմաստալից քարոզներով և ելոյթներով պանծացուց մեր ազգի մշակոյթն ու արժանիքը:

Ան իր առաքելութիւնը յաջողութեամբ կատարելով վերադարձաւ Եւրոպա, ստանձնելու համար իրեն վստահուած Հայրապետական Պատուիրակութեան յոյժ պատասխանատու գործը, Եւրոպայի Թեմին մէջ:

Ուրախութեամբ կը շնորհաւորեմ իր եպիսկոպոսացումը, քանի որ իրապէս արժանի էր — ինծի համար տակաւին Սերովբէ Հայրսուրբը — այդ կոչումին, քանի որ ան նմանութիւնը կը բերէր իր բազմաբեղուն ու իմաստասէր ուսուցիչ՝ Եղիշէ Պատրիարք Դուրեանի:

Միւս կրթուած ու բարձրաստիճան երուսաղէմականն է Սիոն Արքեպս. Մանուկեանը, որ քանի մը տարիներէ ի վեր մեր մէջ է իրեն Պատուիրակութեան օրերու իմաստուն Հովուապետին՝ Տ. Տ. Գէորգ Զ. Երանաշնորհ Կաթողիկոսին:

Ոչ ոք կրնայ ուրանալ անոր ներկայութեան շնորհած բարիքը, հարաւի այս փերուն վրայ ապրող վտարանդի բեկորներու, քանի որ անոր ներկայութիւնը բարիք միայն եղած է այս կողմերը ապրողներէս անոնց՝ որոնք օգտագործել զիտցած են իր կարողութիւնն ու իրմէ բղխած բարիքը:

Վարչական գործունէութենէ դուրս, անիկա եղած է նաեւ Դրչի Մարզը, տալով մեզի մեր Եկեղեցւոյ ծխակատարութեան մասին լուրջ ուսումնասիրութիւն մը, Քրիստոնէական Վարդապետութիւն անունով, որ Նորին Սրբազնութիւնը կը փայլի իր գեղեցիկ լեզուով, պարզ ոճով և աստուածաբանական լայն ծանօթութեամբ:

Երրորդ արժանաւոր երուսաղէմականն է Յարութիւն Վրդ. Մուշեանը, որ հակառակ կրտսերներէն ըլլալուն, եկեղեցական և վարչական կարողութիւններէն զատ օժտուած է նաեւ զրական շնորհքով մը, որ զինք նոյնքան սիրելի կը դարձնէ:

Երիտասարդ այս հոգեւորականի գործունէութիւնը աւելի լայն ասպարէզ մը կ'ընդգրկէ. որովհետեւ, հոգեւոր պարտականութիւններէն զատ կը վարէ քանի մը շատ կարեւոր գործեր ոչ թէ այլոց պէս վարձատրուելու ականակալութեամբ, այլ ինքնարուիս կերպով և անկեղծ ու խոր նուիրումով:

Կը հրատարակէ Մասիս մանկական ամսագիրը, որ տասնեակ տարիներ առաջ դադրած էր աւելի քան տարի մը հրատարակուելէ վերջ: Անկէ յետոյ մեր մանուկները որք մնացին մինչև այն օր՝ երբ Մուշեան Վարդապետ եկաւ ու նորէն զայն կեանքի կոչեց:

Մեր մանուկները ամսէ ամիս կը ստանան իրենց սիրելի ամսաթերթը և զոհացում կը գտնեն իրենց զգացումներուն: Անոնք հոն կը գտնեն հայ և օտար հեղինակներէ պատմութիւններ, հէքեաթներ, առակներ և առածներ, ծնողական և որդիական յորդորներ և այլազան գրութիւններու կողքին նաեւ իրենց շարադրութիւնները:

Իրականութեան մէջ, Մասիս հաճելի պարբերական մըն է մեր թէ մանուկներուն և թէ տարէցներուն. որովհետեւ անկէ սնունդ կը ստանան թէ ծերերը և թէ երիտասարդները, թէ մայրերը և թէ զաւակները անխորի:

Եթէ ըսեմ որ Յարութիւն Վրդ. բոլորովին միս միսակը կը վարէ այս պարբերականը և կը հոգայ անոր բոլոր ծախքերը, առանց զաղուծի կեղբոնական Վարչութեան պիտէին վրայ բեռ ըլլալու, կը խորհիմ թէ ի յայտ բերած կ'ըլլամ անոր ուրիշ մէկ առաքինութիւնը, հոգիներ սիրաշահիլ զիտնալու կարողութիւնը:

Հազուագիւտ և բախտաւոր թերթերն են միայն որ իրենց հաշուեկշիւը բրած պահուն առաւելութեամբ կը զոցեն իրենց պիւտճէն: Ահա այդ թերթերէն մին է Մաւիս, շնորհիւ իր ժրջան պաշտպանին:

Ոսկէ մէկը պիտի անճրկէր և լքեր զայն, ինչպէս պատահեցաւ ասկէ առաջ: Սակայն, մեր երիտասարդ վարդապետը, զօրաւոր կամքով օժտուած ըլլալուն, իր վարչական կարողութիւններովը և ունեցած մեծ եռանդովը նման գործ մը վերստին կազմակերպեց և ի գլուխ հանեց:

Ասկէ զատ, մեր եռանդուն, նուիրեալ և զաղափարապաշտ երիտասարդ վարդապետին կը պարտինք բովանդակալից և մեծածառայ այն Տարեցոյցները, զորս ան կը հրատարակէ չորս տարիներէ ի վեր, գրեթէ դարձեալ իրս մինակը, յենած՝ իր բարոյական անխորտակելի կամքին:

Իրաւ որ դժնդակ գործ մըն է տարեցոյցի պատրաստութիւնը և մանաւանդ հրատարակութիւնը, այնպիսի տեղ մը ուր կը պակսին աշխատակցողներ, մատենադարաններ, տպագրական գիւրութիւններ և տակաւին երկրորդական ու երրորդական անհրաժեշտ պէտքեր: Ասոր վարպետը եղած էր ժամանակին հանգուցեալ թէղդիկը: Իսկ ներկայիս, Կարօ Գէորգեան և ահա՝ Յարութիւն Վրդը:

Եթէ տարեցոյցի աշխատ և նախորդ թիւերու համեմատութիւնը ընելու ըլլանք, պարզօրէն նկատելի կ'ըլլայ թէ վարդապետը աւելի յառաջդիմութեան մէջ կը գտնուի և տարուէ տարի իր հրատարակած տարեցոյցը կը դառնայ աւելի իմաստալից, բազմակողմանի և համագաղութային: Գործ մը, որ պատիւ կը բերէ թէ իրեն և թէ գաղութիս:

Քառասուն տարուայ կեանք ունեցող գաղութս գրական տեսակէտով այնքան յառաջ էր գացած որքան Հայրապետական Պատուիրակ Սրբազանին և իր Փոխանորդ վարդապետին հոս հաստատուելէն ի վեր: Հակառակ տպարանական դժուարութեանց, գաղութը գրական շարժման մը մէջ մտաւ անոնց ներկայութեան շնորհիւ: Եւ արդարեւ չէր կրնար այսպէս չըլլալ, քանի որ երուսաղէտի վերջին սերունդը, իրրեւ արդիւնք Դուրեաններու, Կիւլէսէրեաններու և Դուշակեաններու թափած քրտինքին, մշակոյթի մարդեր պիտի դառնային մէյմէկ տիպար հովիւներ ըլլալէ անմիջապէս վերջ:

Ահա երրորդ պաշտօն մը — Կրթական Տեսուչի պաշտօնը —, որ այնչափ կարեւոր է որքան միւսները: Քանի որ անիկա տարիներէ ի վեր բաց մնացած էր և չէր գլուխը օսէր ոսկէ մէկը որ արժանաւորապէս վարէր զայն: Յանձին վարդապետի, տասնեակ մը մեր վարժարանները վերջապէս ունեցան իրենց մանկավարժ և վարչապետ Տեսուչ: Թէ և, այս պաշտօնը ստանձնելէ առաջ ալ ան կը հետաքրքրուէր մեր վարժարաններով և ցաւով կը մօտենար անոնց տխուր պատկերին:

Տեղական Հոգաբարձուներ, մինչեւ վարդապետին պաշտօնի կոչուիլը, իրենց զիտցած ձեով կը վարէին գործերը, առանց ընդհանուր դեկավարութեան և ըստ կամու: Այսպէս ըլլալով մէկտեղ, մեր Հոգաբարձուները ամէն գնահատանքի արժանի են, քանի որ անոնք մշակոյթի կրակը վառ պահելու աշխատեցան, մինչև որ այդ վարժարանները ունեցան իրենց արժանաւոր Տեսուչը:

Կասկած չունիմ որ եթէ Հոգաբարձուներ և Կրթական գործը իրենց օրտին մօտիկ զգացող սրացաւ ազգայիններ ձեռք երկարեն Կրթական Տեսչին, մեր դպրոցները կարճ ժամանակի ընթացքին կրնան հասնիլ բարձր մակարդակի մը, որ Հայրապետական Պատուիրակի միակ ըղձանքն է:

Զօրրորդ արժանիքը վարդապետին, կը կայանայ դասագիրքերու պահանջք զգալուն և տեղական պայմաններուն համեմատ դասագիրքեր պատրաստելու հեռատեսութեան մէջ:

Արդէն հրապարակի վրայ են իր Հին և Նոր Ուխտի երեք հատոր դասագիրքերը, որոնք կազմուած են խնամքով, զիւրամտաշէլի լեզուով և ճաշակաւոր ու իմաստալից նկարներով: Կրօնի պարզ և ընդհանուր ուսուցման համար այս գրքոյկները կարգադրենք խիստ հետաքրքրութեամբ թէ ծնողքներս և թէ մեր զաւակները:

Վերջերս տեսանք նաև իր կազմած և երկրորդ տպագրութեան արժանացած Մայր Լեզուս խորագրիւ կրող հայերէն լեզուի դասագիրքը, որուն պահանջքը անյետաձգելի էր:

Դասագիրքը բաղկացած է աւելի քան 70 պատկերներէ և 110 էջերէ: Այս հատորին մէջ, վարդապետը ցոյց կուտայ ման-

կան հոգեբանութեան խորը թափանցելու մանկավարժական խորունկ հմտութիւն մը, որուն չեն կրցած հասնիլ տակաւին այս փերու վրայ դասագիրքը հրատարակող ամենահեղինակաւոր և համալսարանական վկայականներով օժտուած դասագիրքերու հեղինակներ:

Վարդապետի պատրաստած այս դասագիրքը իր տեսակին մէջ միակը կը մնայ այն իմաստով՝ որ հոն, մանուկը մեր լեզուի տառերը այբուբենական կարգով սորվելէ վերջ, կը սկսի վանկեր և ապա՝ նախադասութիւններ կազմել:

Որդեգրուած այս դրութիւնը, մանկավարժական տեսակէտով, այն առաւելութիւնը ունի որ իր մայրենի լեզուն սորվիլու ղող մանուկը կամ երիտասարդը առանց առաջնորդի անգամ կրնայ իր նպատակին հասնիլ:

Այս ուղղութեամբ, չեմ կարծեր թէ աւելորդ ըլլայ յիշել զէպք մը, որուն աւանտեսս վկան եղած եմ: Տեղացի երիտասարդ մը ցանկութիւնն ունէր հայ օրիորդի մը հետ ամուսնանալու. սիրուհին, իբրև տիպար ընտանիքի զաւակ, կ'առաջարկէ երիտասարդին որ հայերէն լեզուն սորվի: Օտարականը իսկոյն կը փութայ հեղինակաւոր անձնաւորութեանց, որպէսզի իրեն ճամբայ մը ցոյց տան, իր երազին հասնելու համար:

Յարութիւն Վարդապետի պատրաստած Մայր Լեզուս դասագիրքը միակ լուծումը կը հանդիսանայ երիտասարդին թնճուկին: Այսօր, այդ օտարական երիտասարդը արդէն հայու մը պէս կ'արտայայտէ իր զգացումները, շնորհիւ այդ դասագիրքին:

Իբրև հայր Արժանթիւնածին զաւակներու, այս երիտասարդի կեանքը պատճառ եղաւ որպէսզի ես ալ իմ կարգին, օրինակ առնելով այդ օտար երիտասարդէն, քալեմ նոյն ճամբէն ու զաւակներս դաստիարակեմ հայեցի կրթութեամբ:

Այս էր պատճառը որ ես սա քանի մը տողերը գրին յանձնէի, որպէսզի ինծի պէս օտարութեան մէջ ծնած բոլոր ծնողքները հետեւին ոչ թէ ինծի, այլ այն օտարական երիտասարդին, որ հայ աղջկայ մը տիրանալու համար, Յարութիւն Վարդապետի պատրաստած գրքին կը դիմէ Մայրենի Լեզուն սորվելու համար:

Չվիրաւորելու համար Վարդապետին համեստութիւնը կը վերջացնեմ սա քանի մը անկեղծ զգացումներս, յայտարարելով թէ Երուսաղէմի Ս. Սթոյը, շնորհիւ նշանակալի զիտցող ճշմարիտ եկեղեցականներու բանակին, արդէն հասած է իր նպատակին, ազգին տալով նուիրուած ազգասէրներ, հայրենասէրներ և եկեղեցասէրներ, որոնք մոռցած ամէն բան, կ'աշխատին օգտակար ըլլալ միայն ու միայն ազգապահպանման գործին, առանց յետին նպատակներ հետապնդելու:

Անոնք որոնք հետեւած են Վարդապետի բոլոր գրութիւններուն, ըլլան անոնք քերթուած, արձակ կամ այլ գրութիւն, վստահեմ թէ ինծի պէս համոզուած են որ իթէ երբեք մեր գաղութը ունենայ տաննակ մը զոհուած եկեղեցականներ և գաղափարապաշտ գործիչներ, անկարելի է որ կորըստեան դատապարտուի:

Ես, իմ կարգիս, յաջողութիւն պիտի մաղթէի մեր սիրեցեալ Վարդապետին, թելադրելով միայն մէկ բան, որ իր սկսած գործը շարունակէ նոյն թափով, հոգ չէ թէ չիլ աչքով նայողներ ուղեն հարուածել իր բարենպաստակ գործունէութիւնը:

Սաղմականք վերադառնալով կրող սա քանի մը տողերս վերջացնելէ առաջ, կոչ կ'ուղղեմ զազութիս զիտակից տարրին որ համախմբուի նորին Սրբազնութիւն Հայրապետական Պատուիրակ Տ. Սին Արքեպիսկոպոսին և իր արժանաւոր Փոխանորդ՝ Տ. Յարութիւն Վարդապետին շուրջ, որպէսզի զազութս մնայ միշտ իր նախանձելի դիրքին վրայ:

Ժողովուրդը կ'ըսէ. ծառը իր նիւղերով եւ պտուղներով կը փառաւորուի ...:

Եկեղեցւոյ կազմակերպութիւնները ծառն են, իսկ մենք՝ անոր ճիւղերը: Ուրիմ, եթէ կ'ուզենք որ մեր գոյութիւնը շարունակուի, բոլորունք այդ ծառին շուրջ և գնահատելով հանդերձ գուրգուրանք անոր վրայ:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Ավետանէտ, Պ. Այրես



ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Մ Ի Ս Թ Ի Կ Տ Ա Ի Ի Ղ

(Քերթաւածներ)

Աշտիշատ

Փարիզ, 1955

Աշտիշատ նոր մըն է որ կուգայ հատորով մը իր մուտքը ընելու սփռուքի քերթողներուն մէջ, Եկեղեցական մըն է ան, իրական անունով Խաչակ Վարդ. Ղազարեան, Միարան Ս. Յակոբեանց Ուխտին, հետեալաբար աստուածներու բարբառով արտայայտուիլը արուեստի համազօր իրաւունք մըն է իրեն համար:

Ամէն քերթող իր հոգիին երգը բանով մը արտայայտել կը սիրէ, համաձայն իր հոգեվիճակներուն և իր երգի նկարագրին: Յայն հոգիւններն ու քերթողները կը քնարերգէին իրենց հոգիին ձայները հոգիին կախուած եւոյեան տաւիղով, բնութեան շունչին ընդմէջէն: Բարեւոյնի գերիները կ'երգէին Սիոնի օրհներգութիւններ և ողբեր, ուրիներու ճիւղերէն կախուած իրենց քնարներուն վրայ, աքսորի գետերու երկայնքին: Ուրիւններ կ'երգեն տակաւին սրինգի և ջութակի վրայ, աւելի աղմկալից հոգիներ կ'երգեն ժազ-պանջի, իսկ խոր հոգիները՝ երգենոնին վրայ: Աշտիշատ կ'երգէ «Միսրիկ Տաւիղ» վրայ:

«Միսրիկ»ը, տաւիղին քով, գրական յարդարանքի մը հաշտոյն է որ տրուած է, այլ խորքի մը, հոգեվիճակի մը իրրե արտայայտութիւն, որովհետեւ հատորը լեցնող քերթուածները մեզի կուգան ոչ միայն միսրիկ հոգեվիճակներէ, այլ նաեւ միսրիկ եղանակաւորութիւնով:

Աշտիշատի քերթուածները իրենց արտայայտութեամբ ճիշդ է թէ կը հպատակին իմացապաշտութեան մը, երբ մեզի կը բերեն անձնական ու մտերիմ յոյգեր, տագնապներ, կսկիծներ, բոլորն ալ իմաստի միգամածի մը ընդմէջէն ու քնարական հեղուսով: Միւս կողմէն իր հոգին ունի խորհրդապաշտ քղամիթ մը, ուր գոյնէ, պատկերէ և երաժշտութիւնէ աւելի ընթերցողը կը մղեն հոգեկան փորձառութեան մը դառնութիւններու հնոցէն կաթիլ կաթիլ քամուած: Իւրաքանչիւր քերթուածը ինքն իր մէջ ապրում մը կը թուի ըլլալ, անցեալ մը, ներկայ մը և յաճախ յուսակտուր սպազայ մը՝ որուն կ'երթայ թեակոտոր ու շուարուն:

Աշտիշատ չի փորձեր խորհուրդի վարչամակով մեղմելու իր տրամութիւնը, երբ արտաքին աշխարհին բացուիլ կ'ուզէ, բնածին թախիծ մը կայ իր հոգիին մէջ, տարիներու երանգուն ստուերներովը հոժացած, իր քերթուածներէն իւրաքանչիւրը բաժակ մըն է տրամութեան, նոյնիսկ երբ իր շրթներուն չէ բարձրացած:

Սակայն հոգեյատակը իր արտայայտութիւններուն՝ միսրիկ ինչ մը ունի, զգացական տարրերու գերակշռութեամբ, ուր իմացական յստակութիւնը շատ յաճախ տեղի կուտայ զգացական անորոշ գերազրութիւններու, որովհետեւ ան կը հաւատայ իր ներքին փորձառութիւններուն, եթէ նոյնիսկ անոնք չհասնին մեզի իր տողերով: Աշտիշատ «անդին» մը ունի իր մէջ, որուն վերքերումը յաճախ անորոշ ըլլալու աստիճան կը դժուարանայ իր քերթուածներուն մէջ:

Աշտիշատ իր կրօնամիտ քերթուածներուն մէջ Բրիստօսի հետքերուն վրայ չի գեղերի, մտապատկերներ ունի լոկ, որոնք տեղական զգացում և գաղափար իսկ չեն կրնար ըլլալ: Իր հոգին չի խայտար այդ մտապատկերներուն առջև այլ թառ և ստեղ կը փոխէ, վերածուելու համար սովորական տրամազգած դժգոհութիւններու, աշխարհիկ շապիկի մը ներքե դողդողուն:

Խորքի քննութենէն երբ անցնինք թէքնիքին, այսինքն այն կիրթ զգայարանքին որով քերթողներ գիտեն կառուցանել իրենց քերթուածները, Աշտիշատի քով նուազման կ'ենթարկուի, համեմատած խորքին: Յօրինուածութեան, կշռականութեան, արտայայտութեան լրջութեան և բաւերու զգայարանքի թերութիւններն ու նուազումները՝ իր քերթուածները կը վերածեն մէկ կողմէն ինքնասոյզ մեծախօսութիւններու և միւս կողմէն ինքնամուգ խորհրդածութիւններու: Այս է պատճառը որ իրերն ու իրողութիւնները իրրե բանաստեղծ տեսնելու իր կեցուածքը անթերի և հաւասարակշիռ չի գար մեզի:

Բանաստեղծին կոչումն է մեզի տալու անսովորը, մեր մտածումներն ու զգացումները թարմացնելու տարաշխարհիկ լոյսերով, մեր շուրջի միօրինակութեան մէջ ստեղծելու բուստէ կղզեակներ: Այս տեսակէտով Աշտիշատը, հակառակ իր յաջող մուտքին, տակաւին բաւական տեղ ունի իր արուեստի ուխտագնացութեան ճամբուն մէջ, իրեն յաջողութիւն կը մաղթենք:

Ե.Դ.Ի.ԱՐԴ

ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ

ԱՄԵՆ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊՍ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Զորերշարթի, 22 Փետր.ի կէսօրէ վերջ ժամը 4-ին, Պէյրութէն Ս. Աթոռ ժամանեց Թուրքիոյ Հայոց Պատրիարք, Ն. Ամենապատուութիւն Տ. Գարեգին Արքեպս. Խաչատուրեան: Իրեն կ'ընկերանային Հիւս. Ամերիկայի առաջնորդ Գեր. Տ. Մամբրէ Արքեպս. Գալիֆայեան, Ս. Աթոռիս նորապսակ եպիսկոպոսներէն Եւրոպայի թեմին Կաթողիկոսական Պատուիրակ Գեր. Տ. Սերովրէ Եպս. Մանուկեան եւ Գալիֆորնիոյ թեմին առաջնորդ Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան: Արքազան Պատրիարքն ու Գեր. Արքազանները վանքի աւագ դռնէն «Հրաշափառ»ով առաջնորդուեցան Մայր Տաճար, ուր Ս. Գլխադրի վրայ կատարելէ հտը իրենց ուխտը բարձրացան Պատրիարքարան: Ներկայ էին այս առթիւ օտար յարանուանութեանց ներկայացուցիչներ եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ: Պատրիարքարանի դահլիճին մէջ՝ խօսք առաւ Արքազան Պատրիարքը՝ որ Տեղապահ Տ. Եղիշէ Արքեպս.ի արժանիքները դրուատելով, նմանութեան հզր մը գտաւ



Ամենապատիւ Տ. Գարեգին Արքազան Պատրիարք Հայր, շրջապատուած բարձրաստիճան եկեղեցականներէ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ:

Երանաշնորհ Տ. Եղիշէ Դուրեան Պատրիարքին եւ՝ իր աշակերտին միջեւ: — Արքազան Պատրիարքը մօտ տասը օրեր հիւրը եղաւ Ս. Աթոռոյս, որուն ընթացքին այցելութիւն տուաւ Ս. Աթոռոյս զոյգ վարժարաններուն, ինչպէս նաեւ Բեթղեհէմի Ս. Ծննդան Տաճարին, ուր տեղի ունեցաւ պատշաճ ընդունելութիւն, եւ այլ Արքատեղիներ: Նախագահեց նաեւ եկեղեցական կարգ մը հանդիսութեանց:

Շաբաթ 3 Մարտին, Արքատեղիները այցելած ըլլալու գոհունակութեամբ, Արքազան Պատրիարքը մեկնեցաւ դէպի Գահիրէ, ընկերակցութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր եւ այլ Արքազաններու, իր մասնակցութիւնը բերելու համար Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին նախագահութեամբ գումարելիք Ազգային-եկեղեցական ժողովին:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 5 փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ, Ժամարան էր Հոգ. Տ. Գէորգ Արեղայ Նազարեան, Բարողեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսիսեան, իր Նիւթը առնելով օրուան ձաշու Աւետարանէն (Յովհ. Գ. 14 համարը):

● Կիր. 12 փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուծիւն, մեր վերնամասրան մէջ, Պատարագեց Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, Բաւ թէ Նկատի ունենալով ճշմարտութեան հանդէպ մարդոց կեցուածքը, կարելի է երեք խումբերու բաժնել զանոնք. անոնք որոնք կ'իմանան, անոնք որոնք կը կամենան և անոնք որոնք կը գործեն բարին: Ու հետեցուց թէ ճշմարտութեան քրիստոնեաները վերջիններն են միայն, որովհետեւ ըստ մեր Տիրոջ, անոր օրուն շատ տրուեցաւ՝ շատ կը պահանջուի անկէ: Եղբակացուց թէ մենք հոգեպէս երջանիկ կրնանք ըլլալ այն ատեն միայն՝ երբ մեր կամքերը նոյնացնենք Աստուծոյ կամքին հետ՝ որ մեր բոլորէն բաղձացուած կեանքն է:

● Կիր. 19 փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ, Պատարագեց և քարողեց Հոգ. Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան, բնաւ ունենալով օրուան ձաշու Ընթերցուածէն «Զի յիմարն Աստուծոյ իմաստնադոյն է քան ըզմարդիկ, և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ» (Ա Վրդ. Բ. 25): Հաստատեց այն իրողութիւնը թէ մարդ իշխո սխալած է երբ փոխանակ իշխելու իր կիրքերուն ու քնազդներուն՝ գերի դարձած է անոնց. ու ցոյց տուաւ մեր ստորին ու աշխարհիկ միտումները յաղթահարելու միջոցները:

● Ուր. 24 փետր. — Վաղուան նախատեսակին ի Ս. Գալոբ Նախագահեց Հիւս. Ամերիկայի Առաջնորդ՝ Գեր. Տ. Մամբրէ Արք. Գալֆանան:

● Շր. 25 փետր. — Ս. Թաղէսի սուաբելոյն Եւ Սանդիսոյ կուսից: Ս. Պատարագը ի Ս. Գլխադիր մատոյց Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան:

● Կիր. 26 փետր. — Բարեկ. Առաջաւորաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուծիւն, մեր վերնամասրան մէջ, Ժամարան էր Հոգ. Տ. Գալոբ Վրդ. Վարդանեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ, Տեառնընդառաջի մեծահանդէս նախատեսակին և ապա «Անդաստան»-ին նախագահեց Ամեն. Տ. Գարեգին Արքեպս., Պատրիարք Կ. Պոստոյ:

— Իրիկնաղէմին, Մայր Տաճարին մէջ, Ս. Պատրիարքը նախագահեց «Եկեղեցի»-ի և Հսկման արարողութիւններուն:

— Դիւերասկիդրին, Ժառանգ. Վարժարանի մարդապաշտին վրայ, ինչպէս նաեւ վանքի բոլոր թաղերուն մէջ կը վառէր Տեառնընդառաջի աւանդական կրակը:

● Բշ. 27 փետր. — Տեառնընդառաջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարին մէջ մատոյց, Եւրոպայի Թեմին Կաթող. Պատուիրակ Գեր. Տ. Սերգիւք Եպս. Մանուկեան, Բարողեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսիսեան, Նիւթ ունենալով Տիրոջ Տաճարը ընծայման առթիւ Սիմէոն Ներսիսի Տիրամօր ուղղած խօսքերը. «Հաւաքայալ... ինչպէս հակառակեան» (Ղուկ. Բ. 34):

● Ուր. 2 Մարտ. — Վաղուան նախատեսակին ի Ս. Գալոբ Նախագահեց Ամեն. Տ. Գարեգին Արքեպս. Խաչատուրեան (Պատրիարք Կ. Պոստոյ):

● Շր. 3 Մարտ. — Ս. Սարգսի զօրավարից: Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Սարգսի մասրան մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան:

● Կիր. 4 Մարտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ, Պատարագեց և քարողեց Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարկիւռեան:

● Կիր. 11 Մարտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուծիւն, մեր վերնամասրան մէջ, Պատարագեց Հոգ. Տ. Գէորգ Արդ. Նազարեան, Բարողեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսիսեան, Նիւթ ունենալով օրուան ձաշու Աւետարանի հատուածը (Յովհ. Է. 37-53):

● Դշ. 14 Մարտ. — Վարդանանց հանդիսաւոր նախատեսակին ի Ս. Գալոբ Նախագահեց Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան:

● Եշ. 15 Մարտ. — Ս. Վարդանանց զօրավարացն մեռաց, 1636 վկայից: Ս. Աթոռոյս Ժառանգաւոր Սաները արժանաւորապէս պանծացուցին Վարդանանց տունը, իրենց մէջէն ընտրելով օրուան զատուպետը. իսկ Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Ժառ. Վարժարանի և Ընծայարանի փոխ-տեսուչը՝ Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գալապտեան, Բարողեց Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան, «Մահ իմացեալ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ մահ է» բնարանով, ծանրանալով Վարդանանց Պատեւազմը հասարակ պատերազմներէն բացառող պատճառներուն վրայ, Բարողէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի նախագահութեամբ, կատարուեցաւ Հայրապետական մաղթանք, Ն. Ս. Ս. Տ. Վաղգէն Ա. Կաթողիկոսի անուան տունին առթիւ, իսկ Ս. Պատարագէն ետք, զարեալ նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. ի հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն, հայ նահատակներուն հոգիներուն համար:

● Ուր. 16 Մարտ. — Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Եկեղեցւոյն մէջ, Պատարագեց և քարողեց Հոգ. Տ. Հմայեակ Վրդ. Ինթոյեան, ծանրանալով քրիստոնէական բարեպաշտութեան վրայ: Ս. Պատարագէն ետք, Միարանութիւնը պատուաւորուեցաւ Ասորոց Հոգ. Տեսչէն: Երթ ու զարժի թափօրներուն նախագահեց Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան:

● Շր. 17 Մարտ. — Ըստ սովորութեան, երեկոյան ժամերգութենէն ետք, Մայր Տաճարի Սեղաններն ու զխաւոր սրբանկարները վարադուրուեցան:

● Կիր. 18 Մարտ. — Բաճ բարեկեցեաց: Փակեալ խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարին մէջ մատոյց չող. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան: Դըպարապետի պաշտօնը կը վարէր Գեր. Տ. Պարգեկեան: Վրթանէսեան:

● Դշ. 21 Մարտ. — Սկիզբ կարգաց Մեծ պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Արեւազայ»ի առաջին ժամերգութիւնը:

● Եշ. 22 Մարտ. — Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ կատարուած Մեծ Պահոց «Եկեալէք»ի առաջին ժամերգութեան նախագահեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան և քարոզեց պաշտարութեան խորհուրդի մասին:

● Ուր. 23 Մարտ. — Վաղուան նախատօնաւին ի Ս. Թորոս նախագահեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան:

● Շր. 24 Մարտ. — Ս. Թեոդորոսի զորավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս (Գրք. չաղրաց Մատենադարան Ս. Աթոռոյ), Պատարագեց չող. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան:

— Կէսօրէ վերջ, Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեանի զխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ի հանդէսով մօտեք գործեց Ս. Զարուի թեան Տաճար. Ս. Գերեզմանի ուխտէն ետք, Տաճարի մեր վերնամաստան մէջ պաշտուեցաւ վաղուան նախատօնակը: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր չող. Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան:

● Կիր. 25 Մարտ. — Արամամբ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուի թեան, Բ. Գողգոթայի մեր վերնամաստան մէջ: Ժամարարէր էր չող. Տ. Թորգոմ Վրդ. Մանուէլեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ երբազարձ մեծահանդէս թափօր, Քրիստոսի Ս. Գերեզմանին և ապա Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեանի:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆԻՔ

● Շր. 11 Փետր. — Առաւօտուն, Գեր. Տեղապահ Ս. Հայրը և Գեր. Տ. Տիրան Արքեպսակ. Ներսոյեան մեկնեցան Պէյրութ, ներկայ ըլլալու Ամենայն Հայոց Վեհ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի ժամանման և վերադարձան 10 օր ետք:

● Դշ. 14 Փետր. — Կէսօրէ առաջ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան և Տիար Կ. Հինգիւն կառավարատուն գացին, իրենց շնորհաւորութիւնները ներկայացնելու համար Ն. Վ. Հիւսէյն Թաղաւորին դստեր ծննդեան առթիւ:

● Շր. 25 Փետր. — Կէսօրէ առաջ, Թուրքիոյ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Տիար Կ. Արհանմանի (Ատենապետ Պոստոյ կեղծ. Վարդու-

թեան), այցելութիւն տուին քաղաքիս Թրքական Ընդհ. Հիւպատոսին:

● Շր. 3 Մարտ. — Կ. Վ. Թուրքիոյ Հայոց Ս. Պատրիարք Հայրը, Ս. Աթոռոյս Գեր. Տեղապահ Ս. Հայրը, Գեր. Տ. Ս. Մամբրէ, Սուրէն, Հայկազուն, Պարգեկ, Սերոփէ, Հայրիկ և Շնորհք Սրբազանները օդային զծով մեկնեցան Գահիրէ, ներկայ ըլլալու Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի նախագահութեամբ դուրսուելիք Եպիսկոպոսական ժողովին: Տեղապահ Սրբազանը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Ս. Սուրէն, Հայկազուն, Պարգեկ, Սերոփէ և Հայրիկ Սրբազաններու, և Ամերիկայի մեր Հովիւներէն չող. Տ. Հմայեակ Վրդ. Ինթոյեանի, Ս. Աթոռ վերադարձան Դշ. 14 Մարտի առաւօտուն:

● Բշ. 12 Մարտ. — Կէսօրէ վերջ, Հոռմայ Ն. Ս. Պիոս ԺԲ. Պապին զահակաւորութեան 17րդ և ծննդեան 80րդ տարեդարձներուն առթիւ, տեղւոյս Պապական Նուիրակին կողմէ սարքուած ընդունելութեան ներկայ եղան շորընտիր Աւագ Թարգման չող. Տ. Հայկապետ Վրդ. Պայրամեան և Տիար Կարպիս Հինգիւն:

● Շր. 17 Մարտ. — Առաւօտուն, Քաղաքիս Եպիսկոպական շորընտիր Ընդհ. Հիւպատոսը, Մահամէտ Մահմուտ Ապտիլ Ազիզ Էփ., իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին:

● Դշ. 20 Մարտ. — Կէսօրէ վերջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը և Գեր. Տ. Սերոփէ Եպս. Մանուէլեան մեկնեցան Պէյրութ, ուրկէ Սերոփէ Սրբազան մեկնեցաւ իր պաշտօնատեղին՝ Փարիզ:

● Դշ. 21 Մարտ. — Առաւօտուն, Եպիսկոպական Ընդհ. Հիւպատոսին փոխ-այցելութեան գացին Գեր. Տ. Պարգեկ Եպս. Վրթանէսեան, չող. Տ. Հայկապետ Վրդ. Պայրամեան և Տիար Կարպիս Հինգիւն:

ԾԱՅԲԱՐԱՅՈՒՄՆ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՍՏԻՃԱՆԻ ՏՐԻԶՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 23 Մարտին, Թեոդորոսի տօնին նախատեսակէն ետք, Մայրավանքի Ս. Թորոս Եկեղեցւոյ մէջ, Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան Մայրապոյն վարդապետութեան 10 առտիճանները շնորհեց Ս. Ուխտիս Միաբաններէն չող. Տ. Հմայեակ Վրդ. Ինթոյեանի՝ որ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն նշանակուած է իրբն Առաջնորդ Իրանա-Հնդկաստանի թեմին:

Գեր. Տ. Հմայեակ Վրդ. Ս. Աթոռոյս Ժրջան և զարգացած Միաբաններէն է, ծնած է Ապոլոնիակ (Քիլի) 1913ին, Արեւոյս ձեռնադրուած Թորգոմ Պատրիարքէն 1936ին: Տառնամակ մը Ս. Աթոռոյս և իր ենթակայ թեմերուն մէջ ծառայել է ետք, 1946ին մեկնած է Հիւս. Ամերիկայ, ուր վերջերս կը վարէր Եունիքըն Սիթիի չողեոր Հովուութիւնը:

Զաջողութիւն կը մաղթենք Գերաշնորհ Հայրապետին, իր պարտականութեան այս նոր ուղեգիծին մէջ:

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ա Լ Ի Ք

Հարաւային Ամերիկայի Կարողիկոսական Պատերազմի փոխանորդ, Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեղեանի կարգադրութեամբ, Հար. Ամերիկայի մեր պատուական ազգայիններէն Մեծ. Տիար Յարութիւն Ամերեանեան ստացած ենք 400 տոլարի նուիրատուութիւն մը՝ յաշկացուելու համար հանգուցեալ տաղանդաւոր գրագէտ-ճանապատ Յ. Օշականի Համալսարանի Արեւմտեան Գիտութեան Գ. հասօրին:

Հայ մշակոյթի եւ Հայ գիրին ու գրականութեան հանդէպ տառապանքներու հետեւեալ գեղեցիկ եւ օրինակելի այս առիթով,

մեր քաղցրագին շնորհակալութիւնները կը յայտնենք յարգելի նուիրատւին:

Յանուհի Ս. Արսույ, կրկնապէս յայտնելով մեր գոհունակութիւնը, կը մաղթենք որ Տէր օրհնէ Մեծ. եւ ազնիւ Տիար Յարութիւն Ամերեանի բոլոր ջանքերը եւ աւելիով հասուցանէ իրեն:

Այս առիթով, մեր յարգելի ընթերցողներու ուշադրութեան կը յանձնենք քեզ Ս. Արսույի տարաւունց ցարդ լոյս տեսած ենք Յ. Օշականի այս շատ արժեքաւոր շարքին Ա. Բ. Գ. եւ Ե. հատորները եւ մամուլին յանձնուած է Գ. գիրքը:

«ՍԻՈՆ»-ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՂԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏՅՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՔՈՒՐԴ ԲԵՐՆԻ ՄԷՋ ԵՒ ՓՈԽԱԳՐԱԶՄԱՐ: Յակոբ Մոմենեան (նուիրատու): Պէյրուի, 1949:

ՔՆՆՈՒԹԻՒՆ 1941ի Կաթ. Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Կանոնադրութեան: Շաւարշ Վրդ. Գույումենեան (նուիրատու): Պէյրուի, 1955:

ՆՇԽԱՐԱՆՆԵՐ - Միտրոս Արք. Նարոյեան: Նուէր Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի Գրասենեակէն, Իսթանպուլ, 1948:

ՀԱՅԵՐԷՆ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԼԵԶՈՒՆ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ - Ա. Հատոր: Պետրոս Վրդ. Ճիգմէնեան (նուիրատու): Հալէպ, Տպ. Մնի, 1954:

Միհրան Մ. Սէֆէրեան կը նուիրէ 22 հայերէն գրքոյկներ: [Որդաճամբանէ:

ԱԼԹՈՒՆ ՊԵՏԻՆ ԱՐԻՒՆՈՏ ՀՐԱՐԱՆԻՔԸ - Նէզիհա Հազիմ: Նուէր Հայկազուն Եպիսկ. LE MEUBLE D'AUJOURD'HUI - Jean Kévork. Նուէր հեղինակէն:

ԸՆՏԻՐ ՔԱՐՈՋՆԵՐ - Հաւաքածոյ: Հրատ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Կազմեց Միտրոս Արք. Եւստորթեան (նուիրատու): Անթիլիաս, 1955:

72 ՄԱՐԵՍ ՅՈՒՆԵՍԿՈՒՆ Տ. ԶԱՐԲԱՐՅՐ Ծ. Վ. ԿԷԶԻՐԵԱՆԻ - 1955:

ՅՈՒՇԱՐԱՆՆԵՐ Տ. ԶԱՐԲԱՐՅՐ Ծ. Վ. ԿԷԶԻՐԵԱՆԻ: Իսթանպուլ, 1948:

ԲԱՐԵԼՈՆԵԱՆ ՏՈՄԱՐ - Լեւոն Գարմէն (նուիրատու): Պէյրուի, 1954:

ՀԱՅԿԱՆՈՅՑ ՄԱՌՔ (Կեանքն ու գործը): Նուէր Սրբուհի Հ. Վարդանեանէ: Իսթանպուլ, ՄԵՐ ԳՈՂԱՓԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ: Ս. Նայիրի (նրա): Լոս Անճելըս, 1955: [1954,

ԿՐԱԿԷ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ - Ա. Նահապետ (նուիրատու): Պէյրուի, 1946:

Զարկ Տիրան Թէքէեան կը նուիրէ իր երկու գիրքերը. —


ա) MARSEILLE, LE PROVINCE ET LES PROVINCES. բ) L'ILE PROVENCALE.

ԿՐԱԿԷ ՇԱՊԻԿԻ ՄԷՋ (Պատմութիւններ): Յ. Գօշ (նուիրատու): Երուսաղէմ, 1955:

Պէյրուի Քրիստ. Զանից Ընկերակցութիւնը կը նուիրէ 21 հայերէն հատորներ: [1953:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ: Հրատ. եւ նուէր Հ. Բ. Բ. Մ. Սիւրիոյ Կրթ. Յանձնախումբի: Հալէպ, Պր. Օնիկի Ճանապարհան կը նուիրէ. —

ա) ՎԱՆԻ ՈՒՐԱՐՏՈՒ ԹԱԳԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ - Լէօ:



բ) Կենսոստիկական ՍՏԵՓԱՆ ՍԱՊԱՆՆԻ - ԳԻՒԼԵԱՆԻ - Բերուզ Սապահ-Գիւլեան:

գ) ՅԻՄՆԱՄԵԱԿ (1887-1937):

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ - Գ. Հատոր: Յ. Օշական: Նուէր Ս. Աթոռոյս Տպարանէն, Երուսաղէմ, 1954:

ԸՆԴՀ. ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՀԱՇՈՒԵԿԵՐՈՒ 1952 Տարեշրջանի Հ. Բ. Ը. Մ. Ի: Փարիզ, 1954:

Փարիզի Նուպարեան Մատենադարանը կը նուիրէ զանազան Հայերէն, Անգլերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն եւ Իտալերէն գրքոյկներ, թերթերու հաւաքածոներ, եւայլն:

ՏԵՍԻՒԼԻ ԳԻՆՈՎԻ - Աննի (նուիրատու): Պէյրութ, 1949:

ՀԱՅՐԵՆԻ ԾԽԱՆ (Դ. Հատոր) - Վահէ Հայկ (նուիրատու): Նիւ Եորք, 1954:

ԵՐԻՏԱՍՍՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, ԴՈՒՆ ԿԱՆԱՆԶ ՏԱՐԻՔ, ՕՆ, ԱՆԴՐ ՅԱՍՊԱՐԻԶ - Շաւարշ

- Նարդուհի: Նուէր «Ալիք»էն, Թեհրան:

Armenian Mirror Spectatorը կը նուիրէ հետեւեալ երեք գիրքերը. —

WE ARE THE LITTLE FOXES - H. A. Kazandjian.

STUDIES IN CAUCASIAN HISTORY - V. Minorsky.

HISTORY OF THE NATION OF THE ARCHERS.

THE BULLETIN OF THE ARMENIAN THEOLOGICAL SEMINARY OF THE CATHOLICATE

OF ANTELIAS. Նուէր Անթիլիասի Տպարանէն:

ԴԵՂԻՆ ՍԱՏԱՆԱՅԻ ՔԱՂԱՔԸ: Մաքսիմ Կորբի: Նուէր եւ հրատ. «Մշակոյթ»ի, Պէյրութ:

ՍԵՒ ՅՈՒՇԵՐ Մղծաւանջային Եօթը Տարիներու (1915-22): Մարտիրոս Թաշեան (նւրո):

ՀԱՅԿ ԵՒ ԲԷԼԻ ԿՈՒԻԼ - Արշալոյս Բաքայեան (նուիրատու): Թէհրան:

Սամուէլ Յ. Փաշկեան կը նուիրէ հետեւեալ երկու գիրքերը. —

ԵՐԻՏԱՍՍՐԴՈՒՅ ՅԱՏՈՒԿ ՆԻԻԹԵՐ ԵՒ ՍՏՏՈՒԾՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԸ - Ուիլիամ Ու Օրր:

ԵՐԻՔՈՎԻ ԿՈՅՐԸ - Ոստանիկ Մ. Խէրանեան:

Վեր. Եղիա Ս. Քասուհի կը նուիրէ իր հետեւեալ երկու գիրքերը:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՄԷՋ ԱԻԵՏԱՐԱՆԶՈՒԹԵԱՆ ՈՐԻՆ:

ՀԱՍԱՔԱՅՈՑ ՀԱՅ ԺՈՂ. ԵՐԳԵՐՈՒ ՁՄԵԿՍԵՒԱԳԷՆ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐԸ - Բանահաւաքեց

Յովհ. Աճէմեան: Եղանակները զրի առաւ Աւետիս Գ. Մեսումեան: Նուէր հրատա-

րակիչ Բիւզանդ. Աճէմեանէ:

ԱԶԱՏ ԽՈՀԵՐ - Մ. Գ. Ֆէրահեան: Նուէր Խորէն Փափազեանէ: Պոսթըն:

LE CHRISTIANISME (Le Sentier du Bonheur) - D. N. Calayan (donor).

ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՒ ՎԻՃԱԿԻՆ 25ամեայ Գործու-

նէութեան (1925-1950): Նուէր Յովսէփ Ծ. Վ. Խանցեանէ:

ԲԱԲԵՐԴ ԵՒ ԻՐ ՇՐՋԱՆՆԵՐԸ - Բարգէն Քհ. Արալանեան: Նուէր Ս. Եսայեանէն, Փարիզ:

ԳԻՐԻ ԵԼԻՑ ՀԱՅՈՑ - Կարապետ Աւագ Քհ. Դալմայեան (նուիրատու):

ՍՈՒՐԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ - Խ. Պ.:

ԱՍՏՈՒԱԾԱՅՆԻ ԵՐԳԵՐ - Մխիթար Աբրահայր: Նուէր «Բազմալէպ»էն:

ԵՐՋԱՆԻԿ ՏԱՐԵԴԻՐԻՔ - 26րդ Տարի (1955): Կազմեց Բ. Թեւեան, Իսթանպուլ:

ՏԷՍԹԱՆ - Յ. Պողոսնի (նուիրատու): Հալէպ:

ՍԻՐՈՅ ԽՈՀԵՐ - Յակոբ Պողոսնի (նուիրատու): Հալէպ:

ՅՈՒՇԱՐՋԱՆ ԱՐԺ. Տ. Հայկազուն Աւագ Քհ. Ոսկերիեանի 40ամեայ Ուսուցչութեան եւ

30ամեայ Քահանայութեան Յորելեանին: Նուէր Յորելեանէն:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՄՐՈՅԸ - Ներուս: Նուէր «Ալիք»էն, Թէհրան:

ԳԱԶԱՆԸ ԱՍՏՈՒԱՅ ՄԸ ԿՐՈՂԷ - Արեգ Տիրազան (նուիրատու):

Պէյրութէն՝ Խաչիկ Վ. Աթանասեան կը նուիրէ իր հետեւեալ երեք գիրքերը. —

ա) ԱԻԵՏՈՒՄ: բ) ԳՈՂԳՈԹԱ: գ) ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱՅ:

Շերամ Պապուրեան կը նուիրէ 4 Անգլիերէն եւ 2 Արաբերէն գիրքեր:

ՄԵՆԱՐԱՆՔ ՏՈՔԹ. Մ. Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ: Նուէր եւ հրատ. Յրնտ-Կոմիտէէն:

ՀԱՅՐԵՆԻ ԱՊՐՈՒՄՆԵՐ: Հրատ. եւ Նուէր Հայ Ուսուցչաց Միութեան, Պէյրութ:

Տ. Աղդէ Քհ. Փայլակեան կը նուիրէ իր հետեւեալ երկու գիրքերը. —

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ - Փարիզ:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԵՐԸ ԱԶԳ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ - Փարիզ:

LA PASSION DE LA CILICIE - Paul de Vecu. Paris. Donated by Krikor Adamian.
 ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԹ (Ա. Գիրք) - Արամ Աղուջեան (նուիրատու): Թէճրան:

RUN WITH PATIENCE - Anthony P. Mezoyan (donor). U. S. A.
 ՄԻ ՍԵՐՈՒՆԴ - Զօրա Սազինեան (նուիրատու): Թէճրան:

ԾԱՂԿԵՓՈՒՆՋ Բարոյալից Պատմութենայի (Դ.): Նուէր Նուազար Գրատունէն, Պէյրութ:
 Պէյրութէն Չատրըճեան հղարք կը նուիրեն ՀԱՅ ԵՐԿԻ Թ. - ԺԶ. Պրակները:

BULLETIN DE LA SOCIETE DE LINGUISTIQUE DE PARIS - Tome 50è. Paris.
 GOD'S RESPONSE TO FAITH - M. B. Siraganian (donor).
 ՏԱՂԱՐԱՆ Հարուստ, Վայելուչ եւ Գեղեցիկ: Կ. Պոլիս: Նուէր Յովհաննէս Սարգիսեանէ:
 ՓՐԷԱՐՏՈՍ ՀԱՅՐ - Կոմմագենացի (Վեր. Ե. Ս. Բասունի), (նուիրատու):
 Յակոբ Սէմէրճեան կը նուիրէ 1 Հայերէն եւ 6 Անգլիերէն գիրքեր:
 Արամ Սահակեան կը նուիրէ հետեւեալ երկու գիրքերը. —
 ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՍՐԱԳԻՐԸ:
 ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ՈՒՐՖԱՆ ԵՒ ԻՐ ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ:
 Լեւոն Ճէրաճեան կը նուիրէ իր 8 տարեցոյցները: [Պէյրութ]:
 ՍՐԱՄԱՆԹՕ - Նահատակութեան 40-ամեակին առթիւ: Հրատ. եւ Նուէր «Էտվան»ի,
 Մեմֆիս ԱՖԲԱՀԱՅՐ - Երաժիշտ: Հ. Ղեւոնդ Վ. Տայեան (նուիրատու): Վենետիկ:
 ՀՆԳԱՄԵԱԿ ՕՄԵԱՆ Ս. ԳՐԻԿՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ: 1950-1955: Նուէր Հովիւէն:
 ՊԱՅԲԱՐ (1955): Նուէր «Պայրար»էն: [Կու հատորները]:
 «Արեւ»ի Վարչութիւնը կը նուիրէ Ռ. եւ Լ. Աճէմեանի ՀԱՅ ԼԵԶՈՒ Դասագիրքերու եր-
 ՄԱՐԴԸ ՎԵՐ ԱՍՏՂԵՐԷՆ (Բերթուածներ): Զաւէն Եկէնեան (նւրտ.): Երուսաղէմ, 1955:
 ՆՈՐ ԵՐԿԵՐ - Վազգէն Չազմագենան (նուիրատու):
 Պաղատէն Պր. Շերամ Պապուրեան կը նուիրէ 6 գիրքեր:
 TWO THOUSAND YEARS OF THE ARMENIAN THEATRE - A digest in English. Donated
 by the Armenian National Council of America.
 Օր. Ի. Հ. Բօնիպէր կը նուիրէ 1 Անգլիերէն եւ 2 Ֆրանսերէն գիրքեր:
 ԼԻԼԱ ԿԱՄ ԾԱՂԿԱՎԱԾԱՌՈՒՀԻՆ - Դաւիթ Յ. Էփէրէկեան (նուիրատու): Պէյրութ:
 SA PWH PRINCE OF THE AIR - Zabelle Abdalian (donor).
 Օր. Սիրարիկ Տէր Ներսէսեան կը նուիրէ 2 Անգլիերէն գիրքեր:
 ՆՈՐ ԵՐԿԵՐ - Յակոբ Սարգիսեան: Նուէր «Արամազդ» Հրատարակչականէն, Պէյրութ:
 «Բանբեր»ի խմբագրապետ Վեր. Ս. Պազախեան կը նուիրէ 9 Հայերէն հատորներ:
 ՊԱՏՄՈՒԱՅԻՆԵՐ - Վրթանէս Փափագեան: Հրատ. եւ Նուէր «Էտվան»ի, Պէյրութ:
 ԵՐԿՈՒՍԻՑ ՈՐ ՄԷԿԸ - Դուխ-Բանկօ: Թրգմ. Ստեմիլ: Նուէր «Մշակ»էն:
 REPERTOIRE ETYMOLOGIQUE DE L'ARMENIEN. Norayr Vrouyr.
 SMILING THROUGH THE TEARS - Haig Shiroyan (donor).
 PEINTURE, POESIE, JOURNALISME D'EGYPTE. - Félix Léon (donor).
 Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ս. ԱՐԲ. ՅՈՎՍԷՓԵԱՆ: Նուէր Հայկ Ժամկոչեանէ, Գահիրէ:
 Լեւոն Ճէրաճեան կը նուիրէ իր 4 գիրքերը:
 «Թօմիսթ»ի խմբագրութիւնը կը նուիրէ 3 Ֆրանսերէն գրքոյկներ:
 ՀԱՅ ԱԿԱՌԻՏԻՆ ԵՐԿԱՐԱՆԸ - Գ. Կէ-է:
 ՀԱՅ ԿԵԴՐՈՆ ՏԱՐԵՑՈՅՑ (1955) - Յարութիւն Վրդ. Մուշեան (նուիրատու):
 Օննիկ Պէրպէրեան կը նուիրէ 2 երաժշտական հատորներ:
 ՄԵՐ ԳԱՂԱՓԱՐՆ ՈՒ ԳՈՐԾԸ: Ֆրէճնօ:
 (Շարունակելի)

تصدرها - بطريقه الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النباة هايكازون أبراهيميان
 فبراير - مارس ١٩٥٦ طبع في مطبعة دير الارمن - القدس العدد ٢ - ٣

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
 Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
 Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.